

909
910
911
912
913

205
9 - 74

n° 93

✓ 1/38

2010

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԽՈՐՀԻԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ, ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԲՈՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՌԱՆԴ ԱՐԾԱՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԵՑ

ՔՐԻԶՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆՑ

ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՄՐԲՈՑ Էջմիածնի ԵՒ ՎԱՆԱՀԱՅ
ՎԱՆՈՑ Ս. ԹՈՎՄԱՅԻ ԱՐԱՐԵԼՈՑ. ՈՐ ՅԱԴՈՒԼԻՄ

ՀԱՏՈՐ Ե.

Բ. Ցպագրութիւն



ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲՈՅՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԸՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



ՎԱՂԱՐԵԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՄՐԲՈՑ Էջմիածնի

1897

1008
35182

ՀԱՅԱՍՏԱՆ — ՀԱՅԱՄԱՐԴ
ՀԱՅԻ ՓՈՓԱԼԻ ՄԱՐՎԱՐԻ

57249-սի

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՄԱՐԴ
ՀԱՅԻ ՓՈՓԱԼԻ ՄԱՐՎԱՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայութիւն

ԱՄԵՐԻԿԱ ՅԱՀԱՄԱՐԴ

Դозволено цензурою. 28 Октября 1896 г. Тифлисъ.

903.5

ՅԱՅՈՎՈՔԱՅ Հ

ՀԱՅԱՄԱՐԴ

Հ Ա Յ Ա Յ Ա Յ

ՊԱՍՏՐԱՎՈՅ ՀԱՅԱՄԱՐԴ Խ. 40.0.16.0

803.5 5 803.5 9.5

ՀԱՅԱՄԱՐԴ

ՊԱՏՐԱՎՈՅ ՀԱՅԱՄԱՐԴ Խ. 40.0.16.0

708.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՄԱՐԴ Խ. 40.0.16.0
Խ. ՀԱՅԻ ՓՈՓԱԼԻ ՄԱՐՎԱՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ
Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՄԱՐԴ Խ. 40.0.16.0
Խ. ՀԱՅԻ ՓՈՓԱԼԻ ՄԱՐՎԱՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԲ ԱՐԻԱԾՈՒԹԻՒՆ.

Ստեղծողի վրայ կնայիմ ու նորա մսիթարեց խօսքին.
Նորա վրա յսյ կդնեմ. նա է իմ ամուր պարիսպու: Արդա-
րութեան ու Ճշմարտութեան հետեւիլ, Փրկչիս հոգւովն ապ-
րելն յափտեանս իմ պատուիրանս լինի: Ի՞նչ ուրիշ բան կա-
րող է ինձ գողացնել, երբոր փորձութիւնն ինձ սպառնայ: Թէ՛
փշոտ, թէ՛ նեղ լինի Ճշմարտութեան ճանապարհն, բայց և
այնպէս այս աշխարհիս արգելքներէն ու նեղութիւններէն հո-
գիս արձակուած, ազատորէն կոլանայ դէպ ի վեր. ինձ երկնա-
յին բարձունքէն գրաւում, ձգում է դէպի ինքն մի հրաշալի
լոյս. Հօրս մօտը պիտի երթամ, երբոր աչքերս փակեմ այս
աշխարհիս համար:

Ասաւ արծուին. թող բարձր ժայռերի վրայ քո
շինած բոյնդ, ով թագաւոր թոշուն, թող քո դրա-
ցութիւնդ ամպերի հետ: Նոյնպէս շուշան ծաղկին
ասա՛, ազնիւ ծաղիկ, փուշի ծառ դարձիր, կամ
թունաւոր բոյս եղիր: Բայց և այնպէս արծիւն դէպի
երկինքը կըարձրանայ, արեին մօտ, տեղերն թեերը
կտարածի. բայց և այնպէս այս ազնիւ ծաղիկն իւր

քաղցրանոյշ հոտն կտարածի օդի մէջ: Ի՞նչ է ասածիս պատճառն. այն, որ թէ՛ կենդանի և թէ՛ բոյս իրենց օրէնքն ունին. այդ օրէնքովն պէտք է գնան. ուրիշ ճանապարհ բռնել իրենց համար, դրած օրէնքի ճանապարհէն դուրս գալ՝ չեն կարող: Իրենց ընական օրէնքն ստացել են իրենց Ստեղծողի ձեռքէն, սորա համար այն են, ինչ որ պէտք է լինին, ուրիշ կերպ չեն լինիլ:

Եւ միթէ մարդիս հոգին ևս իւր պատուիրանն Աստուծոյ ձեռքէն չէ ընդունել: Ինչ որ պիտի լինի նա և ինչ բանի որ կոչուած ու նշանակուած է, նա գիտէ. բայց ոչ ամենայն ժամանակ կատարում է այն, ինչ որ պիտի անէր իւր կոչմանն ու նշանակութեան համեմատ: Նատերն են կոչուած, բայց քիչերն են ընտրուած:

Կուզե՞ս դու արդեօք գիտենալ մարդկային ազգի մէջ եղած շատ ու շատ վատ բաների, շատ կերպ վատանալու, փշանալու պատճառները: Դու անշուշտ համեմատումես ու նմանեցնում մարդին մի բոյսի, որոյ ծայրը դէպի վեր, դէպի երկինքն է գնում, բարձրանում, և որոյ արմատը, սահմանուած է Աստուծուց, որ հողի մէջ մտնի ու այնտեղ խոր ճիւղեր արձակի: Բայց Աստուծոյ այս բոյսը անթիւ, անհամար արարածոց պարտիզի մէջ ինքն իրան փշանում է, երբոր իւր մէջի կենսական հիւթը առողջ դրութեան մէջ չէ կամ քանի գնումէ ցամաքում, չորանում: Այսպէս է իւր բնական օրէնքէն, իւր համար սահմանուած ճանապարհէն դուրս գալիս ու սիսալ կերպով գնում ամեն մի մահկանացու մարդ.

որպէս և ամբողջ ազգեր՝ իրենց նպատակին չդիմելով, երբոր նոցա մէջ հանգչում է վառուած, պրծած ճրագի նման առաքինութեան ու ճշմարտութեան լոյս ու տաքութիւն տուող նիւթն ու զօրութիւնը: Ինչ որ անարժան ու ստոր բան է, այն է մեծաւ մասամբ ուրախութիւն ու զուարձութիւն պատճառում մարդկան մեծ մասին: Այս տեսակ մասն որ և իցէ ազգի, այնպիսի մարդիկ են, որ ոչ բարւոյն և ոչ չարին, ոչ առաքինութեան և ոչ մոլութեան համար մի որոշ հակումն ու սէր ունին, որովհետեւ սրտի քաջութիւն չկայ մէջները: Գերու նման վախում են ծեծէն ու պատիժէն, ու սորա համար և վատ բանէն հեռու պահում իրենց, և կարծում են, յոյս ևս ունին, որ պահում իրենց ընթացքովն, թէ այս աշխարհիս վրայ այսպիսի իրենց ընթացքովն, թէ այս աշխարհիս վրայ այն աշխարհումն իրենց համար լաւ տեղ են թէ այն աշխարհումն իրենց համար լաւ տեղ են պատրաստում: Ու լաւ օրերի մէջ պիտի լինին: Դոցա բոնած ճանապարհի մէջ ոչ ճշմարիտ հոգւով ու սրտանց սիրել կայ առաքինութիւնը, և ոչ սրտանց ատելով գարշել զզուել կայ մոլութենէն (վատ գործերէն, մեղքէն): Դոցա մէջ կայ միայն ձգտումն նակ գոնէ անուն հանելու, այս է, որ գրգռում է, հրապուրում, խթան տալի ու մղում շատ ու շատ մարդոց, որ շարժին, այս ու այն կողմն ընկնին, այս մեռ այն և շատ բանի ձեռք զարկեն. այս է, որ մեռի նման քնած մարդոց անգամ զարթնեցում է, վերկացնում իրենց հանգիստ տեղէն ու այլ և այլ գործեր անել տալի: Նատ կան արդեօք այնպիսի գործեր

մարդիկ հազարաւորների մէջ, որ իրենց յօժար կամքովն իրենց զոհէին արդար, ճշմարիտ բանի համար, ազատութեան ու անմեղութեան և սուրբ հաւատոյ համար։ Բայց ամեն տեսակ նեղութիւն կքաշեն, կտանեն, իրենց գլուխը մահու կուտան՝ իրենց ունեցածը, իրենց հարստութիւնը չկորցնելու համար, կամ մի ունայն փայլի ու մի սուտ փառքի համար իրենց կեանքը չեն խնայիլ, կրակի ու թուրի առաջը կերթան, ոչ մի վտանգ աչքներին բան չի երևիլ։ Նոյնպէս կան մեր օրերում բաւական քրիստոնեաներ, որ ոչ իմաստութեան ճանապարհն են ըըռնել հաստատ կերպով ու գնումն, և ոչ անմոռութեան։ Առքա ոչ տաք են և ոչ սառն, ուզումեն, և՝ Աստուծոյ ծառայել, և՝ մամոնային։ Իրենց սրտի ուզածին պէս ապրում են և միանգամայն պահանջում են, որ միւս կեանքումն ևս ամենալաւ տեղն ունենան։ Նոցա չաստուածը (կուռքը), որ պաշտումեն, ժամանակի ամենափոքր կտօրն է, մի բոպէն, որ նոցա այս կամ այն է անել տալի։ Նոցա կենաց կանոնը, նոցա ընթացքի ուզութեան լարն, որ բռնումեն ու գնում կոյր բազմութեան կարծիքն է իրենց վերայ. ուժէ ընկնում են, ամենայն ջանք ու աշխատութիւն քաշելով կամայ ակամայ, ինչ է որ ժողովրդի բազմութեան սովորական և ընդունելի ճանապարհովն միայն կարողանային գնալ։ Այսպիսի մարդոց սիրտը շատ շուտով է կոտրվում, շատ հեշտ են թուլանում ու կորցնում իրանց, որովհետև նոքա մարդկանցից շատ տւելի են վախենում, քան թէ Աստուածանից։ Նոքա գովելով երկինք են բարձրացնում, հասցնում հին

ժամանակի մեծ մարդոցը՝ իրենց ժատրոնների, ճառերի ու գրուածների մէջ. բայց ով որ իրենց օրերումն այն մարդոց նման մեծ ու ազնիւ մարդը ճանաչուել համարձակուէր իւր գործերովն, նորա անունն՝ խելքը կորցրած, մոլեռանդն, յափշտակուած օտարոտի մարդ կդնէին և ինքն իրան կորցրած մարդու պատիւը կուտային. մինչեւ այսօրս ևս շատ անգամ աւելի վատ, աւելի ամօթ բան է աղքատ լինելը քան թէ վատ հոգու տէր մարդ լինելը. աւելի վտանգաւոր բան է պատառուտած հագուստ ունենալը, քան թէ վատ գաղափարների, փչացած մըտքերի տէր մարդ լինելը։

Այս սաստիկ կերպով ցանկալն ու ջանք անելը, որ հասարակաց կարծիքը իւր վրայ լաւ լինի, մինչեւ անգամ այնպիսի մարդոց է սխալեցնում, որոց մէջը բարւոյ ճանաչումն դեռ ևս ամենելին մեռած չէ. ընդհանուրի աղաղակն այնչափ է բարձրացնում իւր ձայնը, որ ճշմարտութեան ձայնը չի լսուում։ Եւ թէւ, ասենք լսումեն այս ամեն օր, որ Յիսուս Քրիստոսն իւր կեանքովն ամենայն մարդոց օրինակ է ու պիտի լինի, որպէս և իւր Աստուածային խօսքերովն ու գործերով, բայց իրենց ամեն մեկ կողմումն միայն հակառակ չար օրինակներն են տեսնում ու իրենք ևս, չկարողանալով դիմանալ, նոյն ճանապարհովն գնում, ինչպէս որ սրբնթաց գետն իւր մէջն ընկած բանը առնումէ, քշում, տանում։

Ժամանակէն է, որ ազնիւ մարդիկ են դուրս գալիս գարձեալ, և Յիսուսի Քրիստու նման, նորա աշակերտների և հին ժամանակի իմաստունների նման

աւելի բարձր են ճանաչում ու աւելի յարգում յափտենական ճշմարտութիւնը՝ քան թէ ոսկեզօծած թիթեռի նմանող ստութիւնը՝ յափտենական արդարութիւնն ու իրաւունքը, քան իշխանաւորի հպարտութիւնն՝ յափտենական առաքինութիւնն, քան զեղառութիւնն, փափկութիւնն ու հեշտասիրութիւնն, աստիճանների, մեծութիւնի ետևէ ընկնելը և ցած կեղծաւորի ծխած խունկն: ՈՉ Թէ ԱՅՆՏԵՂ է ԿԵՍԻՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆ, ՈՒՐ ՈՐ ԲՈՆԻ ՅԱՌԱՋ ՄՂԵԼՈՎ, ՏԱՆՈՒՄ է ՄԵԾ ԲԱՋՄՈՒԹԻՒՆՆ, ԱՆՄԱՔՈՒՐ ԿՐՔԵՐԻՑ ԿԱՇԿԱՆԴՈՒԱԾ, ԱՅՀ ՈՒՐ ՈՐ ԿՈՉՈՒՄ ԵՆ ՄԵԶ ԿՐՈՆ ՈՒ ԽՂՃՄՏԱՆՔՆ:

Ո՞վ է, ո՞ր ՅԵՂ ԸՆՈՒՆԵԼ կարողանայ, ԵՐԵԿ ո՞ր ԷՌԱՐ-ԵՐՆ Է+ հետեւում առանց յետու կառելու-: ԵՐԵԿ ո՞ր արդարուն- նեան համար նեղունիւններ, հարածանուններ և աշշուն- ներ, ժարշեալ երանելի է+, բայց մի վախենաւոր նոցա յամա- ռանենքն «- չինի նե յեր «իրու մեժ երիւ-լ ընկնի:»

Այսպէս է, սիրտ տալով, մեզ ասում բարձր ձայնով սուրբ Առաքեալն Պետրոս՝ վէմ մարզն: Ու- րեմն սիրտ առելք այն բանի համար, ինչ որ աստուա- ծային է: Աստուածային բանի հետ Աստուած է, ով կարող է մեզ հակառակ կանգնել: Մի վախենար ամենելին չարագործէն, այն արհամարհուած մար- դէն, որ ինքն պատիւն կորցնելուց յետոյ, քեզ կարհամարհի ու չի պատուիլ, և ծաղրել անգամ մտքէն անց կկացնի: Առանց քաշուելու արա այն, ինչ որ Աստուած հրամայումէ, ինչ որ Յիսուսն է սովորեցնում, ինչ որ խղճմուանքդ է պահանջում, և քո արիարտութիւնդ չար մարդին վրայ սարսափ

կձգէ. վերջը նա իւր խորամանկութիւնով բանացրած խելքէն ու իւր արած յիմարութենէն ինքն կամաչի: Ով որ չարին է հետեւում, ինչքան ուզի, թող յամա- ռի իւր չարամտութեանը մէջ, բայց լաւ կիմանայ յետոյ, որ թոյլ ու անզօր է այն անմիտ անձնասի- րութիւնն, որ անխորհրդաբար իւր անձի վրայ է մո- լուած: Իւր անձի վրայ միայն մտածող մարդը կա- րող է, այս՝ այս ու այն աննշան կերպով իւր անձին մի օգուտ, մի փայլ բերող արդիւնքներ ունենալ, բայց չէ կարող երբէք դիմադրել ճշմարտութեան միշտ զօրաւոր անդիմադրելի ալիքներին. նա ինքն ևս չի իմանալ, թէ ինչպէս այդ հոսանքի պտոյտքի մէջ ինքն կուլ կերթայ: Միայն նա, որ Աստուծոյ յանձնուած լինելով՝ հաւատացած, միշտ արիամսիրտ ու աներկիւղ է մնում, նաև միայն ալիքների տակ չի մնալ ու միշտ երեսը գուշը կուգայ:

Ուրեմն արիացէք, սիրտ առելք առաքինութեան համար: Ո՞վ է, ում ձեռքէն կուգայ ձեզ վնասել, գուշը, Աստուծոյ զինուորներ, եթէ որ մինչեւ վերջը դիմանաք ու պինդ կենաք:

Այս քաջարտութիւնը առաքինութեան համար՝ տալիս է ճշմարտ Քրիստոնէական հաւատն. ոչ թէ կեղծ քրիստոնէութիւն, ոչ թէ կոյր, մոլութիւնով ու անձնական շահէն իւր ջղերի ոյժն կորուսած ամ- բոխի անունով մայս քրիստոնէութիւնն, այն ամբոխի, որ «Տէր, Տէր» է կոչում ու նորա պատուիրաններն չէ պահում, որ Աստուած սիրել է երդվում և իւր կարհամարհին, իւր նման մարդին ատում, Աստուծոյ եր- ընկերին, իւր նման մարդին ատում, և իւր մարմնոյ վատ ցան- կըրպագութիւն անում, և իւր մարմնոյ վատ ցան-

կութիւններին ծառայում։ Ոչ թէ այժմեան աշխարհի կրօնական ճշմարտութիւններ ուսուցանող քրիստոնէութիւնն առաքինութեան հետեւլու, առաքինութիւն գործելու համար ոյժ ու սիրտ է տալիս այլ փրկչի առաջին աշակերտաց քրիստոնէութիւնն, որ հաւատոյ ճշմարտութեան համար, բանական հոգւոյ արդարութեան ու իրաւանց համար, առաքինութեան սրբութիւնը մտքով, խօսքով ու գործով ճանաչելու ու գնահատելու համար՝ անարգանք ու նեղութիւն, ծաղր, արհամարհանք ու մահ անգամ ընդունեցին, ամենեին չթուլանալով միանգամայն, կամ իրենց համոզմունքը փոխելով։

«Ով ո՞ր ի՞մ յեպնից է «ողում գուլ», ասում էր Փրկիչն «ուրանոյ ի-ը անյն, առնեի ի-ը խոզն և իմ +ամանից գոյ։ Ինչը-որ, «Ով ո՞ր ի-ը իւանուն «ողում է պահուանել, ինորյնի։ Բայց ով ի-ը իւանուը ինորյնի ինչ համար, նա (իւր կեանքը) պահուանած իլինի»։ Այս մեծ կշիռ ունեցող խօսքերի մէջն է գաղտնիքի բանալին այն անյաղթելի զօրութեան, որով բարին չարին յաղթումէ, որքան ևս շատ ոյժ բանեցնի մեր վրայ։

Պինդ բռնիր բարին ու գնա, միշտ բարի բան անելու վրայ լինի սիրտդ ու սէրդ։ ամենեին մի մտածիր, հոգ մի անիր թէ ինչ կլինի իմ բանս, գլխիս մի բան չգայ։ Քո արիստութիւնդ քեզանից է, քո խելքիդ, քո մտքիդ որոշելու, վճռելու բանն է։ բայց թէ քո գլխին ինչ պիտի գայ, այդ քո բանը չէ, այդ քո երկնաւոր Հօր գործն է, նորա ձեռքէն գալու բանն է։

Ուրացիր քո անձդ։ այս խօսքով ուզումեմասել

քեզ թէ, երբոր բարի բանն քո ձեռքէդ գալիս է ու կարող ես անել, մի հարցնիլ առաջ ինքդ քեզ թէ, անելու այս գործէս ի՞նչ շահ պիտի ունենամ, կամ թէ, մարդիկ այս իմ անելու գործս ի՞նչպէս կհասթէ, մարդիկ այս իմ անելու գործս ի՞նչպէս կհասկանան, ի՞նչ իրենց մտքէն կանցկացնեն։ Քո միտք անելու բանդ այն է թէ, որովհետեւ աստուածային բանն աստուածային է, արդար ու իրաւացի բանն ոչ ոք չէ կարող ասել թէ այնպէս չէ, ծուռ է, և սորա՛ համար անելու բանն պէտք է անես ու մտքումդ ասես թէ, Աստուածոյ ընդունելի, արդար ու իրաւացի բանն, որ բարի բան է, ինչո՞ւ պիտի չանեմ։ Ո՛վ ի՞նչ ուզումէ մտածի, ասի, ես բարի բանն պէտք է անեմն չեմ կարող չանել։ Առաջուանէ մի նստիր, այս ու այն բանը միտք անելու, քու մտքովդ հաշիւանելու թէ, այսպէս կարող է պատահել, կամ քու անելու գործիդ տակէն քեզ այս ու հել, կամ քու անելու գործիդ տակէն քեզ այս ու հել, կամ քու անելու գործիդ տակէն քեզ այս ու հել, այն վտանգը, վնասը գուրս կուգայ։ ոչ մտածիր, որ քո անելու գործովդ իշխանութիւն ու ոյժ ունեցող մարդոց քեզ հետ չթշնամացնես։ ոչ մտածիր, որ գու հացդ, պաշտօնդ, տեղդ կկորցնես, և ոչ մտածիր, թէ քեզ երեսիդ վրայ վայր կձգեն, երեսիդ մտիկ տուող չլինիր։ Իրաւացի, արդար բանէն ջոկ, աշխարհիս մէջ ոչինչ մեծ չհամարիս ու չյարգես՝ ամենայն կերպով։ Երբոր այս բանը ձեռքէդ կուգայ և կանես՝ այն ժամանակն ես միայն գու ճշմարիտ քրիստոնեայ, ճշմարիտ հետեւող այն բանին, ինչ որ Աստուածային է։ Ով որ երկիւզ չունի, ով որ աներկիւզ քառամում, տանումէ ամենայն բան, ամենքն ևս նորանէ պիտի վախենան որոնք որ իրանք սիրտ ու քաջու-

թիւն չունին ու երկիւղը իրենց սրտումն է, որ չլինի
թէ բանն այնպէս գայ, որ իրենք շատ բան, կարելի է,
կորցնեն: Ով որ այս տեսակ աներկիւղ, այսպիսի քաջա-
սիրտ մարդ է, նա՞ է յաղթողը, նա կյաղթի: Ով որ իւր
կեանքն ուզումէ պահպանել, նա կկորցնի: Ով որ
փափուկ, հանգիստ, անվրդով, լաւ կեանք անց կացնե-
լու համար աւելի բարձր, հոգեւոր կեանքէն ձեռք կքա-
շի, նա՞ այն մարդը կլինի, որ յաւիտենական կեանքը մի
քոպէի՛ համար ծախումէ: Բայց ով որ սուրբ բանի
համար՝ մի փշանալու, ոչինչ ու անցաւոր բարիք կար-
համարհի, նա կկորցնի այն սերմն, որոյ մէջը փոշի է
միայն, ուրիշ ոչինչ, և մի աւելի լաւ կեանք, պատե-
րազմի մէջ կուուելով ու յաղթելով կստանա՛:

Եթէ որ իսկ՝ արդար ու ճշմարիտ բանի համար ցաւեր, նեղութիւններ, հալածանքներ ևս քաշելու լինիս բայց և այնպէս դու երանելի ես։ Ով որ չար ճանապարհներով, խաբեքայութիւններով ու հնարագիտութիւններով մեծութիւնների, բարձր տեղերի ու պատիւնների է հասել կարծում ես դու, որ կարո՞ւմէ վայելել՝ հանգիստ և ուրախ սրտով։ Սուրբ իւղով օծուած մեղաւորն անդամ իւր ծիրանինների, իւր փառաւոր հագուստների տակ դողումէ ճշմարտութեան ուժի առաջին ու հատուցման րոպէի առաջըն, որ վերջապէս ամենի համար պիտի գայ, համնի։ Կարծո՞ւմ ես դու, որ անարդ նենգութիւնով ու խորամանգութիւններով և այդպիսի ամենացած ճանապարհներով հաւաքած մեծ ինչքն ու հարստութիւնը, որ ունի այդպիսի մի վատ հոգու տէր մարդն՝ բազդաւոր է իրեն համարում, երանի տալու մարդ է

կարծում իրան։ Ոսկու փայլը վերջապէս նորա աչքի
առաջին գեղնումէ, իւր գեղնութիւնը ցոյց տալով
նորան, որ իւր իսկական գոյնն է, բայց իւր ամօ-
թալի գործերի գիտակցութիւնն, որովք նա այդշափ
ոսկին գիզել է, իւր սրտում մխումէ ու մխում։ Նատ
ուրախ կլինէր նա, եթէ, կարողանար, իբրև ճշմա-
րիտ ու անստելի բան, միանգամ մորէն անց կացնել
ու բերնէն ևս հանել համարձակ թէ՝ Աստուած չկայ
աշխարհիս երեսին, կատէր նա այդ, որ իւր սիրտը
հանգստացնի. բայց խղճմտանքի ցաւն ու կոկիծն՝
իբրև ծիծաղելու բան՝ հեռացնել նա կարող չէ ոչ
մի ժամանակ, եթէ որ դու մեղաւորին տեսնէիր,
երբոր միայնակ է, տեսնէիր նորան իւր սրտի մէջ՝
նորա բոլոր ունեցած փողին ու բաներին ամենենին
աչք չէիր ունենալ, միայն թէ, նորա մի ըռպէ քա-
շածն դու չքաշէիր։

շածն դու չքաշէիր։
Իսկ դու, Աստուծոյ մարդ, եթէ դու յիրաւի
արդարութեան (իրաւացի բանի) համար ես ցաւելը
քաշում, պինդ կաց, ջթուլանաս։ Եթէ որ քո հայ-
րենիքդ ես քեզ իւր մէջէն դուրս հանի, ձգի՝ սիր-
տըդ թող չկոտրի, չվախենաս։ առաքինի մարդու հա-
մար ամենայն տեղ բաց հայրենիք կայ։ Եթէ որ կոր-
ցընելու լինիս՝ ոյժ ու իշխանութիւն ունեցող մարդոց
համարումն քո վրայ, որ լաւ աշքով քո վրայ կնա-
յէին՝ բանի տեղ մի դնիլ. եթէ որ քո սրտիդ շատ
սիրելի հանգամանքները քեզ համար բոլորովին վո-
խուին, ու քեզ տեսնես ամենավատ դրութեան մէջ,
սրտիդ չառնես, մեծ բան չհամարե՞ս, առողջ բանա-
կանութիւնովդ միտք անելով ու մտքիդ որոշումն ու

վճիռը տալով, թէ՝ ի՞նչ են այն պատիւներն, որ ոչ
մի պատիւ չունին, ոչ մի պատիւ ստանալու տեղ չու-
նին։ Առաքինութիւնն ամենայն տեղ քո մէջդ սէր
կվառի և քո հոգուդ մէջն մի պատիւ կծնեցնի դէպի
քեզ, այնպիսի մի պատիւ, որ ոչ մի թագաւորական
իշխանութիւն ու զօրութիւն քեզանէ խլեր, քո կամ-
քիդ ընդդէմ ու ուժով քեզանէ առնելով, զրկել
քեզ քո իսկական ու ճշմարիտ պատուէդ չի կարո-
ղանալ։ Եթէ որ արդարութեան համար ունեցած-
չունեցածդ ևս կորցնելու լինիս և աղքատ, խեղճ,
դռնէ ի դուռն մանգալու լինէիր, մինչեւ քո բերանդ
դնելու մի պատառ հացն անգամ օտար երկրներումն
պտռելու և գտնելու նեղութեան մէջը լինէիր, լաւ
իմացիր, որ քո ներքին բարձր զգացմունքդ այն մի
կտոր ցամաք հացը մի մեծահաց սեղանի, մի խնջուքի
տեղ կհամարի և այնպէս կընդունի։ քո չքաւորու-
թեանց մէջ դու աւելի, շատ աւելի բարձր կլինիս,
քանթէ մի աշխարհի հրամայող, մի երկրի վրայ իշ-
խանութիւն բանեցնող մի զօրաւոր թագաւոր։ Դու
կորցրած կլինիս այն դիզուածներն, որ երկրաւոր
բաղդաւորութեան միշտ փոխուող խաղերն են, բայց
դու ինքդ քո իսկական բաղդաւորութիւնդ գտած,
ձեռք բերած կլինիս։ դու աղքատ, շատ բանի կա-
րօտ կլինիս, երեսիդ մտիկ տուող, սրտիդ ցաւն և
ունեցած կարիքներդ հասկանալ ուզեցողը չլինիր,
բայց և այնպէս դու քու հոգւոյդ, քո սրտիդ մէջը
բաղդաւոր մարդը կլինիս։ Ուրախութեամբ ու պար-
զերես կարող կլինիս դու քո Աստուծուդ գէպի վեր
աչքերդ ձգել ու մտիկ տալ որպէս և ամեն մի մար-

դու երեսին համարձակ նայել ամենելին երկիւզ ու
ամօթ չքաշելով։ Քեզ հալածողները, քեզ յաղթող,
ընկճողները՝ քեզանէ յաղթուած, ընկճուածներ կլի-
նին, դու կլինիս վերջապէս նոցա հալածողն ու նոցա
յաղթանակողը։ Աստուծածահայր Դաւիթ մարգարէի
հետ դու ևս կասես հանգիստ ու աներկիւզ սրտով։
« Աստուծած ուրախացնում, միսիթարումէ իմ սիրտս։
ինձ ուզիզ ճանապարհով է տանում իւր անուան
համար։ Եթէ մութ հովիտների մէջն մանգամ, ոչ մի
փորձանքէ չեմ վախենար, ինչու որ դու իմ հետս
ես. քո ցուպդ ու գաւազանդ, նոքա ինձ միսիթարու-
թիւն եղան։ Դու իմ առաջին պատրաստումես մի
վահան թշնամիների գէմը։ Դու օծումես իմ գլուխս
իւզով և ինձ լի բաժակ ես տալի խմելու։ Բարին ու
ողորմութիւնն իմ յետնէս կուգան մինչեւ իմ մահս
և ես իմ հօրս յաւիտենական բնակարանի մէջ կմնամ
միշտ»։ (Ապուան 23):

Արիացիր, իմ սիրտ, առաքինութեան համար։
Արդար ու ճշմարիտ մարդուն համար յաղթութիւնն
ու յաղթանակն երբէք չի պակսիլ։ Ահ ու դող ըընկնի
սիրտ, որ հող ու մոխիր գառնալու բաները ևս
ձեռքէդ պիտի գնան, արդար ու ճշմարիտ բանի հա-
մար, այլ վախ ունեցիր, որ ճշմարիտ արդար բանն
ձեռքէդ փախցրիր ու չարիր։ Միթէ դու մի օր կամ
մի տարի անցնելուց յառաջ կամ յետոյ, քո ունե-
ցած բոլոր երկրաւոր ինչքդ ու բարիքդ չպիտի թողնես
և մերկ այս կեանքէս գուրս գաս, ինչպէս որ այս
աշխարհս եկար. բայց մի բարի բանի սրբութիւնն չի
փչանալ այլ կմնայ. արդար մարդու ետնէն կերթան

իւր գործերն։ Սիրտկ երկիւղ թող ընկնի, իմ պատուական քրիստոնեայ եղբայր, երբ որ բանը գալիս է Աստուծոյ և մարդկային ազգի վրայ։ Սիրտը գող բռնելն՝ իւր շահի յետնէն ընկնողների բանն է, որ կապրին իրենց մի բարեյաջող րոպէի համար, ժանդուտելու մետաղի համար, զուարձութիւն բերող հեշտութեան համար, սուս ու կեղծ պատիւ ու մեծարանք, այլոց ոչ թէ տալու՝ այլ ցոյց տալու համար, հոգւոյ թանկագին ակունքի մասին մի զգացումն չունենալուց, որոյ համար մեր կեանքը դնելն անգամ մի վաստակ է։

Ինչ որ ուղիղն ու ճշմարիտն է, աներկիւղ սրտով ու հաստատ մոռքով ասա՛ ու յետ մի՛ կենար։ Որտեղ որ իւր բերանը բաց է անում ճշմարիտն ասող մի մարդ, նորա հետն եղիր. նորանէ հեռու քեզ չպահես, նորա հետ, նորա նման ցաւեր, նեղութիւններ քաշիր ու համբերիր. Աստուածանից նորա ստանալու վարձն քո վարձգ ևս է։ Խոստովանէ Քրիստոսին, նա ևս մի օր քեզ կխոստովանի։

«Հրէից թագաւո՞րն ես դու», իւր գատաւորական աթոռէն հարցրեց վրկչին Պիղատոսը. Երկրի կառավարիչն ու խնամակալը, հարցրեց այն Աստուածային մարդուն, որոյ անմեղութեան վսեմ զգացումըն իրեն լաւ յայտնի լինելով, իւր առաջին կանգնած էր։ Ամեն կողմէն ոտները գետնին էր խփում կատաղութենէն՝ թեթևամիտ, քամիոտ, աղաղակ բարձրացնել, անհանգստութիւն ու աղմուկ հանել սիրող ամբոխն, ամեն կողմն իւր կատաղութիւնն էր ցոյց տալիս՝ վրէ ժինդրութեան համար սիրտները կրակ ընկած գանգատաւորների ու մեղաւորների ան-

զօր ու ցածահոգի խումբն, որ առաքինութիւնն էին մատնում ու գատապարտում։ Գողգոթան հեռու տեղ չէր, այն սարսափելի տեղն, ուր որ գատավճիռն էր կատարվում մարդոց գլխին. թուլամորթ Պիղատոսի աչքերի մէջ երևեցան մի թոյլ սրտի ցաւակցութիւն, ազնիւ հոգուն ազատելու, որոյ վրայ ոչ մի մեղք չէր տեսնում, որոյ մէջ ոչ մի յանցանք չէր գտնում։ «Հրէից թագաւո՞րն ես դու», հարցրեց Պիղատոսն և յոյս ունէր, որ մի ցածահոգի ու վախկոտ «ոչ» խօսքն լսի իբրև նորա բերանէն դուրս եկած պատասխանը, որ ազատի վեհ գատապարտուածին։ Բայց Յիսուս Քրիստոս պատասխանեց իւր քաջ ու վսեմ հոգուովն ու սրտով թէ՝ այդ խօսքն ես չեմ ասում, այլ քո՞ բերանէն եմ լսում։

Ո՞վ վրկիչ, դու ինձ համար ևս անարգութիւն ու մահ ես ընդունել։ Մի՞թէ ես ևս իմ կողմանէ չպիտի քո Աստուածային վեհ ու քաջ սրտովդ ինձ ուրանամ, երբոր քեզ խօստովանելու տեղն է գալիս։ Ո՞ւմ արած սպառնալիքէն պիտի վախենամ ու յետ կանգնեմ։ Երբոր բոլոր աշխարհիս գատաւորի առաջին վախ չունիմ։ Ո՞վ է կարող ինձ բաղդաւորութիւն տալ, կամ ինձանէ խլել։ Ո՞չ մարդկային սիրչ, և ոչ ատելութեան անելու բանն է այդ։ Իմ ներսի կողմի, իմ սրտիս, իմ խղճմտանքիս հանգստութիւնն ու անվրդով խաղաղութիւնն, իմ կողմանէ ինձ մեղադրելու տեղ չունենալս ինձ մարդոյ հաճոյքէն անդրելու տաղ չունենալս ինձ մարդոյ հաճոյքէն անկած, ապահով անկախ ու ազատ գիրք է տալի, այո՛։ Ո՞վ կարող է ինձ պատուի հասցնել, կամ իմ ունեցած պատիւս բանի տեղ չդնել ու ոտնակոխ

մի ժամանտկու որ ես նորան իւր էտարակէալ քայլութէան մէջ տեսնէի:

Նատ ու շատ անգամ տեսել եմ ես նորան միայն զգայական կեանքին անձնատուր, անբան կենդանեաց նման ապրելիս, որ այնպէս ևս իւր կեանքն անց է կացրել ու մեռել, գնացել. շատ ու շատ անգամ տեսել եմ ես նորան, որ խելքը, միտքը տուած է եղել միայն մեծ փողերի տէր դառնալու, կամ հպարտութիւնն իրան զարդարանք անելու. տեսել եմ, թէ ինչպէս վերջը նորա բոլոր ուրախութիւնն՝ իւր վերայ ունեցած մեծ մեծ ու երեակայական կարծիքներն են եղել, որ նորան հպարտութեան են տարել, կամ կերուխումի զուարճութիւններն են եղել որ ամենամեծ վայելչութիւն քաշել է համարել իւր համար աշխարհիս երեսին. տեսել եմ, ինչպէս աշխատումէ եղել անդադար իւր մարմնաւոր գրութիւնն, իւր նիստ ու կացն լաւացնելու, իսկ իւր սիրտն ու հոգին լաւացնելու մասին, կարծես թէ միայն այդ է եղել երկրորդական բանն, որոյ վերայ ամենեին ոչ մոտածել է, ոչ հոգս արել. տեսել եմ, ինչպէս նա իւր խելքը միայն բաց անելու, լուսաւորելու է աշխատումն տեսակ տեսակ ուսումն ու գիտութիւններ իւր մորքի, իւր գլխի մէջ ամբարումն տեսակ տեսակ արհեստներ, ճարտարութիւններ սովորումն կարծես թէ իւր հոգւոյ վսեմ ուժերն աստուածանից նորա համար է միայն մարդիս տուած, որ աշխարհիս երեսին եղած ամենայն արարածներից ամենահնարագէտն, ամենախորամանկն, ամենազօրաւորն ու միանգամայն ամենավտանգաւորն լինի. տեսել եմ: ինչպէս

նա՝ առանց քաշուելու, առանց զգուշանալու անձնատուր է եղել իւր հաճոյքին, իւր սրտի ուզածին ինչպէս նա, առանց ամաչելու, իւր կրքերից յաղթուել է, մինչեւ որ վերջապէս մոլութեան խաւարչը տին անդունդքի մէջ գլորուել կործանուել է. տեսել եմ: ինչպէս նա մի հաւատ է դաւանել, որ ոչ թէ սրտի հաւատքն է եղել, այլ քաղաքական սովորութեան հետ գնալու համար է եղել միայն, որ հաւատ ունեցող է ձեւացել, տեսել եմ: ինչպէս դէպի Աստուած աղօթքներ է բերնից գուրս տուել, թափել, իրը մի ծէս, մի արարողութիւն կատարելով, որով Աստուածոյ հետ առումեմ, իրը թէ իւր բանը պրծել է, պարտքից գուրս եկել. տեսել եմ մինչեւ անգամն ինչպէս շատ անգամ Յիսուսի կրօնը իւր ամենասեւ չարագործութիւնների ծածկոյթն ու վերարկուն է արել (շինել):

Ա՛խ, մինչեւ ո՞ր աստիճան մարդս շատ անգամ կարող է ցածանալ ու մոլութեան խոր ցեխի մէջ խրուել: Թէ նորա հոգւոյ մէջ երբէք չէ հանգչում այն կրակը, այն մեծ ցանկութիւնը որ ունի երջանելութեան ձգտելու, համենելու կողմանէ, բայց և երբէք բոլորովին բարեպաշտ չէ, ինչու որ բաց աչքով վազումէ դէպի կորստեան անդունդքը. կասես թէ, մի աներեւոյթ զօրութիւն նորան բռնել է ու քարշաքարշ տանում հետն: Սուտ չէ, որ մի անողորմ մի աներեւոյթ զօրութիւն նորան քաշկրուտելով տանումէ հետն: այս անգում զօրութիւնը իւր կրքերն

են, որ նորա հոգին փշացնումեն, նորա սրտի հանգըստութիւնն խանգարում:

Ո՞վ է ուրեմն այն մարդը, որ իւր կատարեալ բարձրութեան մէջն է, ինչպէս որ ստեղծուած է Աստուծոյ պատկերը լինելու։ Արդեօք քրիստոնեան է, որ ինքն իրան ճանաչելով, միշտ իւր անձի վերայ չորս աչքով է մտիկ տալի, որ ոտը ծուռ չդնի ու մի սխալանքի մէջ չընկնի, և որ ինքն իւր վերայ ունեցած իշխանութիւնը բանեցնումէ իւր սրտի ամենայն շարժմունքի վերայ։ Արդեօք նա այն ժամանակն արդէն կատարեալ է, այլ ևս ոչ մի պակասութիւն չէ երեսում նորա վերայ։

Այո, գովում եմ ես, և բարձր մարդ եմ ճանաչում Յիսուսի այն ազնիւ աշակերտին։ Նորան ճըշմարիտ սրտով և ամենայն հաւատարմութիւնով հետեղին, այնպիսի քրիստոնէավայել կեանք ունեցողին, որ անկախ է ու ազատ պատուամոլութեան, ունայնասիրութեան, զեղիսութեան, բարկասրտութեան ախտերից, որ նորան տիրել չեն կարող. ես այդպիսի մարդին՝ գերիների մէջ միայն ազատ ու անձնիշխան մարդ եմ ճանաչում ու ամենայն սրտով պատուում եմ։ Ամենայն յարգանքի արժանի է նա, ինչու որ ոչ մի արտաքին ոյժ ու իշխանութիւն նորան ճնշել չէ կարող, ոչ մի բաղդաւորութիւն նորան իւր չափը կորցնել չի տալ, ոչ մի անբաղդութիւն նորան կոտրել չէ կարող,—նա ամեն փոթորիկների տանում, դիմանումէ և անսասան մնում։ Այդպիսի մարդի վերայ աւելի ենք զարմանում և աւելի արժանաւոր մարդ ենք ճանաչում դորան։ քան թէ

այն աշխարհակալին, որ ազգեր նուանելով իւր հզօր գօրութիւնովն, իւր իշխանութեան լուծի տակն է ձգում, բայց իւր պատուամոլութիւնն նուանելու ոյժ ու զօրութիւն չունի. այդպիսի քրիստոնեայն աւելի զարմանալի, աւելի արժանաւոր մարդ է, քան թէ արհեստաւորների մէջ ամենագլխաւոր արհեստագէտըն ու գիտունների մէջ ամենագիտնականն, որ այնպիսի գործեր է հնարում այնպիսի բաներ լոյս գըցում, որոց վերայ մարդ հիացած, ապշած է մնում հրաշք բան աչքի առաջին տեսնելով։ որ բոլոր աշխարհ կզարմացնի, բայց ձեռքներից չէ գալիս իրանց սրտի ու հոգւոյ մշտական խաղաղութիւնն հաստատ կերպով գտնելու։

Կատարելութեան ամենավերջին ու միանգամայն ամենաբարձր աստիճանն միայն ինքն իրան յաղթե՞ն է. այս գժուարակով, այս խորտուբորտ ու բարոյապէս սեպացած բարձրութեան վերայ է, որ պիտի մագլցի վեր բարձրանանք։

Եթէ այդ լինէր՝ աստուածային լուսաւորիչն աշխարհիս Քրիստոս, ուրիշ բան սովորեցրած չէր լինիլ՝ բայց միայն այն, ինչ որ հին ժամանակի իմաստուններն, վիլիսովիաններն արդէն ասած ու գրած էին։ Այո, Յիսուս Քրիստոս դեռ ևս աշխարհ չեկած՝ մարդկային ազգը վրկելու համար, արդէն շատ յառաջ իմաստունների, աշխարհիս վերայ ապրող մարդոց տուած ուսումն այն էր թէ, մարդիս իւր ամենաբարձր արժանաւորութեան համար նախապատրաստողն ինքն իրան ճանաչելն ու ինքն իրան յաղթելն է. ոչ միայն այդ էին սովորեցնում թէ՝ խօսքով

և թէ՛ գրով, այլ աւելին արին՝ նոքա իրանց վարդովն ու կեանքով սրտառուչ օրինակներ տուին և ապացուցին, որ այս առաքինութիւններին հասնելն անկարելի չէ: Նոքաւ այս՝ գործով կատարեցին, ինչ որ բերանով ասումէին: Դեռ այժմ ևս աշխարհ ամենայն յարգանքով է միտք բերում ու բերան առնում այդպիսի՝ մարդոց անուններն: Ով գուք քրիստոնեայք, որ ձեր ծուլութիւնից վրաներդ գող է ընկնում երբոր բանն այդ երկնային պարտաւորութիւնները կատարելուն է գալիս՝ մտածեցէք ամաչելով՝ որ նոքա հեթանոս էին, ունէին, ու կատարեցին այդ առաքինութիւնները: Դեռ ևս Քրիստոս Փրկիչն աշխարհիս վերայ չէր երեացել, — նոքա մութ կերպով զգում: Հասկանումէին ու մտածում: որ յաւիտենական կեանք պիտի լինի, բայց աստուածային յայանութիւնովը մեզ քրիստոնէիցն համար զմայլելի ստուգութիւն դարձաւ: Այս՝ նոքա ունէին այն առաքինութիւնները, որ գործով կատարեցին, և այդ ինքնանանաչութիւնն ու ինքնայտթութիւնն ունեցողներն ու անողները գիտէք, թէ ովք էին: Հեթանոսներ՝ միայն. իսկ մենք քրիստոնեայ ենք, և քրիստոնեայ լինելով զուրկ ենք գոնէ նոցա ունեցած առաքինութիւններէն, որու յիրաւի հեշտ բան չէր:

Բայց գերագոյն ու անհամեմատ վոեմ կերպով ուսուցին Քրիստոս աշխարհ գուրս եկաւ իւր երկնային իմաստութեան լուսափայլ պայծառութիւնովն ու աւելի էր պահանջում:

Նա ևս պահանջում էր մարդիցն, որ ինքն իրան

ճանաչի, պահանջումէր, որ ամեն մի մարդ ինքն իրան քննի, իմանայ թէ ինչ աստիճանի, ինչ արժանաւորութեան տէր է Աստուծոյ և իւր իսկ առաջին, ուրեմն և ճանաչի իւր անարժան մարդ լինելն Աստուծոյ, իւր նման մարդոյ և իւր իսկ առաջին, որ իւր արած սխալներն ու բռնած ծուռ ճանապարհներն քննելով, տեսնելով ուղղել կարողանայ, որ մոլութիւնից, մեղքից հեռու մնալ ջանայ: Նա ևս պահանջումէր անձնուրացութիւն, ինչու որ ինչ մարդ որ իւր հաճոյքին սանձ դնել անկարող է՝ իւր հաճոյքի լծի տակը պէտք է մօնի: Բայց այս ամենն անումէին աւելի ազնուամիտ հեթանոսներն ևս: Նոքա ատելով ատումէին զեղս մարդի շուայլութիւնը, անտուակի անառակութիւնները, փառասիրի, պատուամոլի՝ փառքի, պատուոյ համար հոգի տալն, արբեցողի գինեմոլութիւնն, նոքա արհամարհում էին արծաթսիրութիւն, ամբարտաւանութիւնն ու անմըտութիւնը, ընչասիրութեան անյագութիւնը (աչքը չկշտանալը շատ բան ունենալուց) և ամենայն տեղ իւր օգտի յետնից ընկնող, իւր շահը պտուղ շահասիրութիւնը: Բայց այս ամեն առաքինութիւններն դեռ ևս կատարեալ քրիստոնէի առաքինութիւններ չէին:

Աշխարհիս Փրկիչն Յիսուս Քրիստոս մարդիցն ուրանից աւելի բան էր պահանջում՝ Արքունու նման լինել:

Հերիք չէ, ասումէր նա, որ մի մարդ իւր բարկութիւնը չափաւորի, ինքն իրան բռնի բարկացած ժամանակը չէ. այդ գեռ ևս բաւական չէ, մի բան

չէ. բանն այն է, որ դուք ձեր թշնամիներին սիրէք, աղօթք անէք այն մարդոց համար, որոնք որ ձեր սիրտը սաստիկ ցաւեցնում են ու ձեզ հալածում են, ձեզ նեղութիւններ տալուց աչք չեն թողում բաց անել այս բաները պիտի անէք, որ ձեր երկնաւոր Հօր զաւակները լինիք: Ինչու որ նա իւր արեւը ծագումէ թէ՛ չար, և թէ՛ բարի մարդոց վերայ ու անձրեւ թափումէ թէ՛ արդարների և թէ՛ մեզաւորների վերայ: Եթէ որ ձեզ սիրողներին սիրէք, ի՞նչ վարձք պէտք է ստանաք. մաքսաւորներն ևս նոյն բանը չե՞ն անում արդեօք: Եւ ինչ որ ձեր եղբայրներին էք սիրով անում ի՞նչ մի մեծ բան էք անում: մաքսաւորներն ևս նոյնը չե՞ն անում արդեօք: Ուրիշն դուռ այնուհետ կառարեւու պէտքէ լինի+, ի՞նչ պէ՞ս ո՞յ չէր երինառո՞ր չայը կառարեւու է:

Այս խօսքերը մի երկնային լուսոյ ճառագայթ է: Բաւական չէ, որ մենք մեզ վերայ այնպէս կատարեալ կերպով կարողանանք իշխանութիւն բանեցնել: որ մեր հակումները ոչ մի անարդար քայլ անելու մեզ տանել չկարողանան, մեզ սիսալեցնելով. մեր միտքը պէտք է չդնենք թէ, արդէն բան չմնաց այլ ևս մեզ անելու, սորանից աւելի ևս բան անելը կարելի չէ, ուրիշն Աստուծոյ օրհնութիւնն մը վըսա, ի՞նչորին+, ո՞ւրիշն+: Զկարծի մի մարդ, որ արդէն առաքինի է, որովհետեւ ինքն իրան այնպէս իւր ձեռքի մէջն հաւաքած, բռնած ունի, որ՝ գիտնալով, իւր ոտը ծուռ գնել ամենեին չի թողնիլ: Զէ՛, զա չէ՛ առաքինի մարդըն: Այլ նա է առաքինի մարդն, որ դրսի հանգամանքների վերայ ուշագրութիւն չդարձնելով, մարդ չջոկե-

լով՝ թէ ո՞րն է արժանի՝ բարիք (լաւութիւն) է անում հաւասարապէս, և կարող է ուրիշների սիրոյն համար իւր անձը մատաղ անել:

Աշխարհիս մէջ մարդիս հասնելու կատարելութեան ամենաբարձր աստիճանը, կատարելութեան ծայրն այս է: Քրիստոսի հարազատ աշակերտն, ինքն իրան բարձր է ճանաչում ու բռնում կորիւ սիրելուցը, մի վատ խօսք ասելու պատճառներ գտնելուց ու բռնելուց, խորամանկութիւններից կամ ծածուկ հնարներ բանեցնելուց, որ ուրիշի վերայ վատը միայն տեսնի, պակասութիւնը միայն գտնի, որովհետեւ իւր հոգին վատ մարդոց պէս չէ, որ ուրիշի վերայ լաւը տեսնելը չեն կարում: չեն տանում: այլ նախանձում են ու ատում—: Քրիստոսի ճշմարիտ աշակերտն հեռու է վատ մտքեր ունենալուց և իւր համար անարժան բան է իմանում արժանաւորի արժէքը չճանաչելը, մանաւանդ ցած բան է համարում մի մարդի յետեւից ընկնելն, ծածուկ հնարներ բանեցնելն նորա համար՝ վատութիւն անելու մտքով, նենդ մտքով որոգայթներ լարելն ու գաւեր գնելն՝ նորա անունը կոտրելու, կամ վնասելու համար, կամ մի մարդու խաղացնելն, ման ածելն, ուշացնելն՝ նորա արժանաւորութիւնն, կամ արդարութիւնն, կամ ունեցած իրաւունքն չճանաչելու և չընդունելու համար: Քրիստոսի խկական աշակերտն հասարակ մարդոց վարած կեանքիցը, նոցա ունեցած ու բանեցրած՝ մարդիս համար անարժան կրքերից, բարձր է ու ազատ. նորա սրտի ուզեցածն այն է, որ լաւութիւն անի մարդոց, բաղդաւորութեան պատճառ լինի, և

այնտեղ ևս իւր լաւութիւնը համնի, ուր որ ուրիշ ները վատութիւն անելու են վազում, սիրտները ուրախացած։ Նա բարձրէ այն վերքերից, որ ստանում է, նա չէ վշտանում։ Նորան վիրաւորողները չեն կարում նորան արգելելու որ նա բարի կամենայ նոցա, որ իրան ատումեն։ Նորա վրէժխնդրութիւնը՝ ներելն ու մոռանալն է։ Նա բարձրէ չնչին մարդոց այն ջանքիցն, որով իրանց բոլոր կեանքն մէջ տեղ են դնում որ ի՞նչ է հեշտամիրութեան ու ունայնասիրութեան մէջ գտնեն իրանց գերագոյն բաղդաւորութիւնը։ Քրիստոսի ճշմարիտ աշակերտի ամենամեծ ձգտումն՝ Ա. առա-ժայ հետ մէ լինեն է։ Նա, որ իրան միշտ սանձած է պահում, որպէս զի իւր սիրտը սը խալանք անելուց ազատ մնայ՝ սխալանքի մէջ ընկնողներին չէ ատում, այլ նոցա վերայ, մտիկէ տալի, որպէս ուղիղ ճանապարհից իմանալով չիմանալով դուրս եկողների վերայ. մտիկէ տալի նոցա վերայ, իրեւ այնպիսի մարդոց վերայ, որ սխալուելով, ընտրել են իւրեանց իրեւ նպատակ մի սուտ բաղդաւորութիւն, կամ մի ծուռ միջոց՝ իւրեանց նպատակին համնելու համար։ Նա ջանք է անում, մի իմաստուն կերպով բաց անելով նոցա աչքն ու լուսաւորելով նոցա միտքը՝ այնպէս անի, որ նոցա արած վատքանն այնչափ իրանց վնասու կամ չարիք չբերի, քան թէ որքան որ պիտի բերէր։ Նա անձնասիրութիւնից անձնաշահութիւնից հեռու է։ Նորա ցանկութիւնն ու միտքը այն չէ, որ ինքն մարդոց մէջ ամենաաղղնիւն երեխ, որ իրան գովելով, երկինք բարձրացնեն. Եթէ որ նորա մտքինն այդ լինէր, նա ազնիւ չէր լինիւ։

Նա բարի բանն անումէ, բայց ոչ թէ մի աւելի բարձր, մի աւելի լաւ վարձատրութիւն ստանալու համար. չէ. եթէ այդ մտքով լինէր, նորա առաքինութիւնն այլ ևս առաքինութիւն չէր լինիլ, այլ մի անձնաշահութիւն, մի օգտամիրութիւն, որ խելք բանեցնելով, հասաւ իւր սրտի ուզեցածին։ Զէ՛, Քրիստոսի ճշմարիտ աշակերտն այդ խելքի ու մտքի, այդ սրտի տէր մարդը չէ ամենելին։ Նա սիրում է առաքինութիւնը նորա համար, որ աստուածային բան է։ Նա ցանկանումէ կատարեալ լինել, նորա համար, որ իւր երկնաւոր Հայրը այնպէս է հրամայում։

Այս է իսկական բարձրութիւնը, այն վսեմութիւնը, որ Քրիստոս պահանջումէ իրան հետեղից, իւր աշակերտից. Ա. առա-ժայ ս- է- նման մարդէն ակրելն այս բարձրութեան էս-նի-նն է, իսկ համեստունի-նը նորա թօղն է։ Այս բարձրութեան համել ցանկացողը վերինի՝ երկնայինի համար է ապրում։ Նորա համար ամենավերջին բանն է այն, ինչ որ հողիցն է ու հող պիտի դառնայ։ Նորա համար յաւիտենականն է իսկական կեանքը. այս պատճառով երկրաւոր կեանքը նախապատրաստութեան աստիճանն է համարում յաւիտենական կեանքին համնելու համար։ Նա մարդկային կարգ ու կանոնն յարգումէ իրեւ միջոցներ բարեբաղդ կեանք մարդոց մէջ պահպանելու և յառաջ տանելու համար. բայց ճշմարտութիւնն ու իրաւունքը՝ մարդկային ամենայն կարգագրութիւններից բարձր է ճանաչում։ Ինչու որ հողեղէն մարդու, իւր խելքից հնարած փայլուն ու փառաւոր միջոցներից շլանալով, շատ ու շատ անգամ մտքիցը ձգումէ իւր շլանալով,

Հեռաւոր պատուական նպատակն: Այդ վսեմութեանը բարձրացող մարդի համար ամեն բանի տեղ Աստուածէ, ասում եմ; որովհետեւ Աստուածէ ամեն բանի մէջ: Այդպիսի մարդը սիրումէ կեանքը, որովհետեւ աստուածանից է պարզեւուած, բայց մահիցն ևս չէ վախենում որովհետեւ մեր կեանքի, մեր գոյութեան կերպի փոխուելն է միայն, և սահմանուած է Աստծուց:

Ո՞վ գերագոյն Յիսուս, այս է քո կրօնը, որ հոդեղէն մարդոց կեանքի համար աշխարհ բերիր ու նոցա սովորցրիր: Բայց ի՞նչ մարդ եմ ես: Կհամարձակուիմ արդեօք իրաւամբ քո աշակերտի անունը տալ ինձ, այն աշակերտի, որ քո ճանապարհովն է գնում, քո յետնից գալով: Դեռ ևս երկնաւոր Հօր հետ միացած չեմ, մի և նոյն ցանկութիւնն ու կամքը չունիմ որ Նորա կամեցածն՝ իմ կամեցածն լինի: Դեռ ևս թոյլ ու անհաստատ կեանքովս ու կամքովս տատանվում եմ մեղքի և առաքինութեան մէջ, հող դառնալու բաների և անմահութեան մէջ: Յիսուսի սուրբ խօսքը լուսոյ ճառագայթի նման ընկնում է իմ օրտիս մէջը. աւելի պարզ ու պայծառ կերպով հասկանում եմ Նորա երկնային մոքի խորհուրդը թէ, Դուռ այնքան կատարեալ ոլորտ է լինի+, ինչնէ՞ ո՞ր Յե՞ ե՞նո՞ր Հայրը կատարեալ է:

Քրիստոնէի վեհանձնութիւնը՝ իւր մարմինը ըոլորվին բանի տեղ չփնելու, անխնամ թողնելու մէջը չէ՝ կեանքի երկրաւոր ուրախութիւնների համար ինքն իրան մեռած համարելու մէջը չէ. ո՞չ, Աստուած ինձ այս մարմինս տուել է իբրև գործիք, որով իմ ամեն

կողմն պէտք է ներգործեմ աշխարհիս վերայ: Այս գործիքն ևս պէտք չէ արհամարհեմ; կամ անխնամ պահեմ; որովհետեւ ինձ կզրկեմ աստուածանից ինձ պարզեւուած ամենանշանաւոր գործիքից, որով հոգիս իւր կատարելութեանը պէտք է հասնի: Բայց գործիք միայն կարող եմ ճանաչել իմ մարմինս, ոչ թէ մի աւելի բան: Բաւական է, որ հոգ տանիմ մարմնիս ոյժը տեղը պահելու և չպակասացնելու և միանգամայն խնամք տանիմ մարմնիս առողջութեանը. այլ ևս ուրիշ բան ինձ չի մնալ մարմնի համար անելու, Մարմնի արտաքին զարդարանքն ու ինչ որ գուր է գալի նորան, այսպիսի բաները՝ անցաւոր ու երկրորդական բաներ են: Քրիստոնեայն՝ հասարակաց երջանկութեան գերագոյն նպատակները յառաջ տանելու համար՝ ուրախութեամբ ամենայն բան զոհում է, երբոր տեսնում է, որ իւր զոհաբերութիւնովն այդպիսի մի մեծ բարիք յառաջանալու պատճառ պէտք է լինի ինքն: Հիւանդութիւն, վէրքեր, ցաւեր, մահ՝ մեծահոգի քրիստոնեայն բանի տեղ չէ դնում: Երբոր բանն այնտեղ է գալի, որ ճշմարտութիւնը պիտի պաշտպանել կարողանայ մինչեւ վերջը, երբոր իրաւունքն ու արդարութիւնը տեղը պիտի տանի, երբոր հաւատքը պէտք է պահպանի, երբոր անմեղին տէր պէտք է կանգնի, երբոր մարդոց բարեբաղդութեան պատճառ պէտք է լինի:

Հարստութիւնը, պատիւը, լաւ կեանքը նորա համար այն մեծ բաները չեն, որոց համար հոգի տար: Բոլոր այս փառաւոր բաները, որ մարդս Աստուածոյ տեղ է պաշտում, քրիստոնեայ իմաստունի ոչ բաղ-

դաւորութիւնն են աւելացնում, երբոր ունենում է, և ոչ պակասեցնում, երբոր ձեռքիցը գնում են: Նա շատ լաւ է իմանում թէ՝ ի՞նչպէս անհաստատ բան է աշխարհիս բաղդաւորութիւնը, ինչպէս անստոյգ ու կասկածելի է ուրիշների ամեն կերպ պատիւ տալն, ում ևս որ տալիս են՝ լաւ է հասկանում թէ, աշխարհիս ոսկին որչափ քիչ բան կարող է անել երբոր մարդիս սրտին մի տեղական ուրախութիւն ու անվըրդով հանգստութիւն պարգևել չէ կարում: Նա միշտ պատրաստ է ամենայն տեսակ փառքից ձեռք քաշելու, երբոր փառքից իրան զրկելովն, մարդկային ազգատոհմերի խաղաղութիւնը կարող է աւելացնել: Ամեն ժամանակ պատրաստ է նա զոհելու ամեն հարստութիւն, եթէ միայն այդ զոհաբերութիւնովն հասարակաց քաշածներն կարող է թեթևացընել նոցա ունեցած ցաւերը պակասեցնել:

Նորա համար՝ ի՞նչ որ հողիցն է հող պիտի դառնայ, ամենափառաւոր, ամենափայլուն բանն անդամ մի ախ քաշելու չարժիլ: Ի՞նչ կայ, որ եթէ մի բան յետ ու յառաջ՝ կորցնելու ենք, ինչ ևս որ անելու լինինք, պիտի չկարողանանք պահել, կամ մի բանի որ ենք ունեցել կամ մի բանի տարիներ, երբոր ձեռքներիցս պէտք է գնայ, մեզ մնալու չէ: Եթէ որ բանն այգպէս է, աւելի լաւ է այնպէս տեղ և այնպիսի բանի համար կորցնենք, որ մեր կորուստովը մարդկութեան մի սուրբ գործը յառաջանայ, մի մեծ կարիքը կատարուի: Մի թագաւորական թագ, մի աստուածային մեծ գործ կատարած լինելու գիտակցութիւնից իւր մէջը հասկանալուց աւելի արժէք

չունի, և անմեղութիւնը զոհ բերելուց աւելի հեշտ է կեմնքը զոհելը: Ամեն իրաւունքները որ մեք, կամ ուրիշները ունին քաղաքական հասարակութեան մէջ՝ պայմաններ են, որով մեք օգտակար գործունէութիւնով կարողանանք շահութիւն, մեր գործունէութեանը ընթացք տալ և գործ ցոյց տալ: Ո՛վ որ չարութիւնով կամ սխալութիւն, այս պայմանները քանդումէ, կամ կակուզ, կամ կոշտ կերպով պիտի խրատուի: և պարտաւորութիւնը ճանաչելու ստիպուի: Մեք չարագործին՝ մարդկային ընկերութեան թշնամի ենք, ասում: բայց քրիստոնեայն թշնամի ասած բանդ չունի: Կարելի է որ՝ ի զուր տեղ իմաստուն քրիստոնէին արհամարհեն, ատեն, հալածեն, կամ նախանձեն, բայց նա, իւր իրաւունքները պաշտպանելու միջոցին՝ գարձեալ իւր հակառակորդի բարեկամն է: Նա, նորավերայ նեղանալով, նորանից չէ հեռանում, այլ պատումէ և օգնելու պատրաստ է, ուր որ կարող է պէտք գալ նորան: Նորան լաւութիւն է անում: Երբոր տեսնումէ որ՝ մի յաջող դիպուած նորա առաջին մի լաւ ճանապարհ է բացել: Եւ երբոր վերջապէս նորան, իմաստուն քրիստոնէին երկու բանից մինն է միայն մնացել ընտրելու՝ կամ վատութիւն անել, կամ իրան վատութիւն անեն ու քաշի՝ նորա համար գժուար չէ քաշելը. ուրիշի իրան արած վատութիւնը նա քաշումէ:

Նորա մէջն է աւելի և աւելի երեսում քրիստոնէի մեծանձնութիւնը (հոգու մեծութիւնն), որ նա միշտ գէպի մարդկութիւնը մեծ սէր ունի, Առ-

տուծոյ նման. որ այս սէրը երբէք չէ կտրվում նորա սրտից, ուրիշների անշնորհակալ ապերախտութիւնը տեսնելով, որ այս սէրը աւելի ճանաչվումէ իւր գործերից, քան թէ խօսքերից. Ամեն ժամանակ ամեն մի գործում նա աշխատումէ, որ ամենից օգտակար մարդն լինի, որքան որ ոյժը կպատի ու ձեռքիցը կփայ: Եւ այս ամեն բանն անում է նա ծածուկ, որ յլինի թէ ուրիշի աչքին ընկնի ու տեսնելու համար արած լինի: Բայց մարդոց տեսնելուց ևս չէ քաշվում, երբոր հաւատումէ, որ իւր արածը լաւ ազգեցութիւն կունենայ:

Մի բարի գործ, որ գովասանք լսելու համար է միայն, ազնիւ մարդի արհամարհանքին արժանի է: Աստուած այդպիսի գործ չէ ընդունում: Հոգւոյ իսկական մեծութեան, իսկ վեհանձնութեան կատարեալ վսեմութիւնը նորա մէջն է, որ ազնիւ հոգու տէր մարդն իւր նման մարդոց բաղդաւորութեան համար ամեն մի զոհաբերութիւնի պատրաստ է, բայց այնպէս է պահում իրան, որ ոչ ոք չհասկանայ իւր սրտինը: Նատ անգամ ամօթալի է թւում, որ իւր պարտականութիւնները կատարելու համար իրան գովում են, ինչու որ այդ գովասանքը, նա պարզ տեսնումէ, որ իրաւունք չունին իրան տալու այն մարդիկը, որոնք տալիս են: Խնչու որ, եթէ մի մարդ գովումէ այն, ինչ որ մարդիս պարտականութիւնն է անելու, սորանով ցոյց է տալի իւր պակասութիւնը, որ իւր պարտականութիւնը լաւ չէ կատարում: Այդպիսի մարդոց բերանից գուրս եկած գովասանքը ի՞նչ դուր պիտի գայ մեզ:

Եթէ որ առաքինի վարքի հետևանքը մեծ անպատութիւն ևս բերի, առաքինի մարդն այն ժամանակն ևս ինքն իրան մխիթարելը գիտէ: Նորա հոգին ազատ է, այն նեղութիւնները, որ նորա մարմինն է քաշում, հոգուն ի՞նչ վնաս կարող են տալ: Կախաղանի վերայ մեռնելը մի սուրբ գործի համար, կամ պատերազմի մէջ մեռնելը ի՞նչ զանազանութիւն ունի հիւանդութեան անկողինքում մեռնելուցը: Մի՞թէ մի և նոյն բանը չէ մի հոգու համար, որ Աստուծոյ մէջ, Աստուծոյ համար և Աստուծոյ հետն է ապրում: Որքան ազնիւ մարդիկ մեռան իրենց ժամանակակիցների անէծքը հետները տանելով, որոնց արժանացած չէին, բայց իրենց երախտագէտ յետնորդները արտասունքով օրհնեցին նոցայիշատակը: Ոչ թէ այն բանը պէտք է մեզ անհանգիստ անի, թէ ինչպէս են ճանաչում մեզ, կամ ի՞նչ կարծիք ունին մեր վերայ, այլ այն թէ, ի՞նչ էնչ մենք: Ոչ թէ մարդոց մեր գործերի վերայ արած գատողութիւնը, այլ միայն մեր արած գործն է մեր իսկական ու ամենագեղեցիկ սեպհականութիւնը: Մեր արած գործը միայն ազգեցութիւն ունի մեր արժանաւորութեան, կատարելութեան ու երջանկութեան վերայ, իսկ մարդոց մեր գործերի վերայ տուած գատողութիւնը հազիւ թէ մի ազգեցութիւն ունենայ մեր հողացած մարմնոյ վերայ, մեր գերեզմանի հողի վերայ: Նատ չի անցնիլ գերեզմանի հողը կծածկի թէ սպանողին և թէ սպանուողին ու երկուսն ևս հող կդառնան: Բայց Աստուած անմահ է, նա կդատի: Դու կենդանի ես, Աստուած յաւիտենական՝ այս,

շատ դժուար է համնում։ ուզումեմ ասել, ՖՊ, ՁԵՐ ԱՆՅՆ ՉՆԵԼՈՒ, ՖԱՆԱԳԼԻՌ ԿՈՂԸՆԵԿ՝ մեր խելքը մեծ դժուարութիւնների է հանդիպում։

Ուրիշ ամեն բաները մենք շատ աւելի որոշ կերպով ենք տեսնում։ քննումն ջոկում, քան թէ մենք մեզի։ Մենք մեր տես ու ճանաչ մարդի կերպարանքն ու երեսի գծագրութիւնն, հասակն ու շատ բանը, առանց դժուարութիւն քաշելու միտներս ենք բերում։ ինչպէս որ կայ նա, եթէ մեր աչքի առաջն ևս չինի ու բաւական ժամանակ անց կացած լինի, որ մենք նորան տեսած չինինք, ուրիշ տեղ գնացած լինելու պատճառովն։ աւելի լաւ ասեմ։ միտքներումն է մնում մինչեւ անգամ այն ուրիշ տեղացի ու մեր ամենւին չտեսած մարդն, որին մի անգամ ենք միայն մի տեղ տեսել, բայց մեր իսկ անձը, իսկ մեզի ամենւին չենք կարող մեր երեսն տեսած ևս լինիք։ Մեր երեսայարկը մեր մոքումը լաւ չէ մնում։ և չենք կարող ինքներս մեզ հաւատալ թէ, իսկ այն կերպին ենք, ինչպէս որ մեզ տեսանք։

Այս՝ մի զարմանալի, մի՝ ուրիշ տեսակ բան է։ ինքն իրեն ու շատ մարդոց զարմանալի պէտք է ինքն իրեն ու շատ մարդոց զարմանալի պէտք է ինչի։ ինչի՞ համար է արդեօք Արարին այս թուած լինի։ ինչի՞ համար է արդեօք Արարին այս պէտք տնօրինել։ Այս բանը, ես կարծում եմ և չեմ սխալում։ որ շատ մարդի պատճառ տուած կինի ինքն իրան հարցանելու թէ, ով եմ ես։

Մեր էութեան հոգեսոր, բանական, գատող, և աղատ կամքով գործող մասն, որ մեր մէջն է, այսինքն մեր հոգին, միթէ մեր հինգ զգացմունքներն են, որ ճանաչեն, դիտելով, վերահսու լինելով։ այդ

Պ.

ԻՆՔՆԱՇԱՆԱՇԱԽՈՒԹԻՒՆ.

Կարելի է, դու կարծումես, որ աշխարհը ճանաչումես, բայց իմացիր, որ քո ճանաչածդ նորա շուտքն է, որ քո աշքիդ երևումէ։ Ի՞նչ կընկնի ձեռքդ անդադար վազելուցդ հեռուումն քեզ երեւեցած բաղտիդ հասնելու, որով կարծում ես թէ՝ նպատակիդ հասած կինիս։ Ը՝ նչիդ է պէտք մինչև անգամ ամենայն իմաստութեան լոյսը, երբոր դու ինքդ քեզ չես ճանաչում։ Մարդիս սրտի խոր տեղերում ծածկուած իւր ունենալու վիճակի աղբիւրը խոխոջումէ բոլորովին անտեսանելի կերպով։ Եթէ հանդարտ ու մաքուր է հոսում ջուրը՝ քո բոլոր գործերիդ միջից պէտք է անց կենայ ջրելով։ բայց եթէ կատաղում, ուռչումէ՝ կեանքիդ հանգստութիւնը կորցնի բոլորովին։ Աչքդ աւելի ներսիդ կողմի վրայ պիտի լինի, քան դուրսը, աշխարհի վրայ։ սորա համար, ինչ որ ուզումես անել, չսկսած, առաջ սրտիդ հարցուր։ նա լաւ է դատում, քեզ ծուռ բան չի ասիլ։ ինչ որ քեզ կասի թէ՝ ուզիլ է ու լաւ, տաք սրտով պյն բանին կպիր։



Պեր խելքը շատ բաների է համնում։ շատ դժուար ու խոր բաներ հասկանումն շատ հանելուկներ հանումն բայց մեզ ամենամօտ բանին մեր խելքը

նոցա հասկանալու և անելու բանը չէ։ Մենք մեր հոգի ունենալը հասկանում ենք մեր գիտակցութեամբ, որով ինքներս մեր մէջը իմանում ենք, ու համոզվում, որ մենք հոգի ունինք. որովհետեւ տեսնում ենք, որ մենք մտածել, ցանկանալ փափագիլ և զգալ ունինք. մեր մտածողութիւն, ցանկութիւնները բաղձանք ու զգացմունք ունենալուց, մենք հասկանում ենք, որ մենք հոգի, բանականութիւն ունինք։ Ուրիշ մարդոց բանական հոգի ունենալն ես մենք իմանում ենք միայն այնով, որ տեսնում ենք ու հասկանում, որ նոքա ևս մտածել, ցանկանալ փափագել ու զգալ ունին, որ յայտնի է լինում մեզ նոցա խօսքերից ու գործերից։ Որովհետեւ քոլոր մարդկային հոգիներին Աստուած պարգևել է բանականութիւն. և որովհետեւ ամեն մի մարդի բանականութիւնը կամ խելքը մի և նոյն օրէնքներն ունի, որով ճանաչում և ընդունումէ ճշմարիտը ուղիղն ու բարին, այս օրէնքներովն մենք կարողանում ենք ճանաչել ու դատել թէ՝ մի բանական հոգի միւսից աւելի կատարեալ է, կամ՝ ոչ. երբոր նոցա սրտինը, մտքինը յայտնի է լինում մեզ աւելի լաւ, կամ աւելի վատ խօսքերից ու գործերից։

Առանց կասկածելու, առանց սխալուելու կարելի է ասել, որ ամենայն երկրաւոր իմաստութեան որպէս և նորա գերագոյն նպատակի՝ սկիզբն ու հիմն մարդիս ինքն իրան քննելու մէջն է։ Այս մտքով հին ժամանակի՝ մարդոց կռապաշտ եղած ժամանակի ամենալուսաւորուած փիլիսոփային, Սոկրատէսի տուած ուսումի առաջին և գլխաւոր խօսքն այս էր՝

ինդէ ու նոյնականին։ Նոյն իսկ մտքով յորդորումէ մեզ սուրբ գիրքը նոյնակիսի միջոց ու ճանապարհ մեր առաջին գնելով, ճշմարիտ իմաստութեան հասնելու համար, ասելով թէ՝ ինուերտ յէլ էոյնեցէ+ նէ՝ արդեւ+ հաւաքուի՞ մէջն է+ ինուերտ յէլ ունեցէ+։

Եթէ որ ինքս ինձ լաւ չքննեմ ու չճանաչեմ, չեմ կարող իմանալ ու ինքս ինձ գատելով հասկանալ թէ՝ ինչ ընդունակութիւններ, ինչ շնորհքներ ունիմ, որ աւելի բարձր բաների վերայ պիտի բանեցնեմ. նոյնպէս և չեմ կարող հասկանալ թէ՝ որտեղից և ընչից են յառաջ գալիս գլխաւորապէս իմ ունեցած պակասութիւններս, որ ինձ չեն թողնում ճշմարտապէս առաքինի լինելու։ Ի՞նչպէս պիտի ես մի մարդի սիալանքը իրան հասկացնեմ։ Եթէ որ առաջ չիմանամ, որ նա այս ու այն պակասութիւններն, որ ունի, իրանիցն է, ուրիշից չտեսնի, որովհետեւ ինքն է այդ իւր պակասութիւնների տէրն. կամ թէ ի՞նչպէս պիտի ես իմ խի բանականութիւնս, հոգիս, սիրտս ազնուացնել կարողանամ։ Քանի որ յայտնի չեն ինձ նոցա ունեցած պակասութիւններն։

Նատ քիչ են այն մարդիկը, որ իրանք իրանց այնպէս լաւ, այնպէս մօտիկ ճանաչէին, ինչպէս որ պէտք է. իրանք իրանց լաւ չճանաչելուցն է որ, իրենց խսկական պակասութիւններն շատ անգամ ներելի են համարում և իրենց լաւ յատկութիւններն (կողմերն) երբեմն շատ մեծ բանի տեղ են դնում, երբեմն ես, այնքան բանի տեղ չեն դնում։ Սորանիցն է որ, զժուար է պատահում որ իրանք իրանց հետ միշտ

Համաձայն լինին. իրանք՝ իրանց ասածներին հակառակն են խօսում; իրանք՝ իրանց արածներին ընդգետմն են անում; իրանց ոչ խօսքերն են իրար բըռնում; ոչ գործերն։ Յայտնի տեսնվումէ, որ հաստատ խելքի, մտքի, համոզմունքի տէրը չեն ու հանգամանաց հոսանքը քշում; տանում է հետն նոցա, ընդդիմանալու, հաստատ, անփոփոխ մնալու ոյժ չունին:

Միայն նա, ով որ իւր վրայ՝ առանց այլեայլի կատարելու՝ մի մեծ պարտականութիւն է դնում, որ ինքն իրան վրայ ամենասաստիկ կերպով՝ իւր սրտի ամենայն շարժմունքների, յուզմունքների մէջ չորս աչքով նայի և ոչ մի փոքրիկ բան աչքիցն ըլփախցնի, և երբոր այդ անում է երկար ժամանակ, այն մարդն է վերջապէս իմանում իսկապէս թէ՝ ինչ է իւր արժէքը, մեծ է արդեօք իւր գինը, կամ քանի փող է արժում; Ով որ այնքան թեթեամիտ է, որ իւր անձնասիրութեան տուն տալովը պիտի իրան գին դնի, նա ի՞նչ պէտք է իմանայ թէ՝ ինչքան է արժում ինքը; Սորանիցն է որ, և ի՞նչ զարմանալու բան է, որ կան մարդիկ, որոնց այնպէս է թվում; որ աշխարհքն կոյը է, իրանց չէ ճանաչում. բայց շատ կարելի է, որ աշխարհքը նորանց ձուի պէս իւր ատամներին խփել է՝ և շատ աւելի լաւ է ճանաչում քան թէ իրանք իրանց:

Կան մարդիկ, որ իրանց վրայ կարծում են թէ՝ իրանք ոչ ոքի հետ թշնամութիւն անող, քէն պահող չեն, կոխւ սիրող չեն, այլ ամեն մարդի հետ կառավարուող բնութիւն ունին, որովհետեւ իրանք

են առաջինը, որ ձեռք են երկարացնում ու հաշտութիւն առաջարկում: բայց այդ տեսակ մարդիկը միայն կեղծաւորութիւն ու խաբեբայութիւն են անում շատ անգամ, իրենց ահիցը ցածութիւն անելով: Կան մարդիկ, որ իրանց սուրբի կոյս, բարոյական են համարում, որովհետեւ ուրիշի արած յանցանքներն իրանք ևս չեն արել. բայց շատ կարելի է, որ չպատահեց ու չյաջողեց, կամ իրենց անելու գործի հետեւանքից վախեցան, և այդ երկիւղը նորանց անառակութիւնից յետ քաշեց ու պահեց: Կայ այնպիսի մարդ, որ իրան՝ նեղութիւնի հասնող և իւր ձեռքից եկած լաւութիւնը ամենին անելու պատրաստ ոք մին է համարում, որովհետեւ մի այնպիսի բարի բանի մէջ օգնութիւն է հասցրած լինում, որ քաղաքի կամ երկրի բարւոյն համար է անվում: Թէ շնչքի, կամ երկրի բարւոյն համար է անվում: Հավում: բայց ինքն իրան չի ասում և չէ ուզում համոզուիլ իւր մէջն, որ իւր բարի գործի միւս երեսը, այսինքն միաքը՝ իրան լաւ ասել տալու, պատիւ ստանալու համար էր, ինչպէս որ իւր ամենայն արածնակու համար էր, պատիւ բերելու մտքով է եղել. և գործերն իրան պատիւ բերելու մտքով է եղել որ իրան տապահ իւր պատուասիրութիւնն է եղել որ իրան տարել է այս, այն բարի գործն անելու. չէ ուզում ասել ինքն իրան թէ, շատ գժուար կանէր մի բարի աշխարհքին յայտգործ, եթէ իմանար, որ բոլոր աշխարհքին յայտնուելու չէ, որ իրան արածն է, ոչ թէ ուրիշի:

Այս ինքնախաբութիւններն մարդիս ինքն իրան սաստիկ քիչ ճանաչելուցն է՝ և ով է սիրտ անողը՝ պատիկ կոյս ճանաչելուցն է՝ և ով է սիրտ անողը՝ իրան իմաստունի, փիլիսոփայի անունը տալու, ով որ ինքն իրան միշտ խաբումէ միայն:

Ի՞նչ գիշեածիմ, ի՞նչ կարգեմ, և մարդկային ընկերութեան մէջ։ Այս խօսքն, որքան ևս մեր սրտին մօտիկ բան լինի, որքան ևս մեր անձնասիրութեանն հաճելի լինի, չենք կարող պատասխան տալ՝ առանց երկար միջոց և մեր սրտի խոր տեղերը թափանցող հայեացքով նայելու և նկատելու այն ամեն բանը, ինչ որ սովորաբար ամենայն օր մեր սրտի մէջ լինում է։

Միայն այն ժամանակ, որ մեր սրտի ամենածածուկ ծալքերը կկարողանանք բանալ ու տնդզել, այն ժամանակ միայն, որ մենք անսխալ կերպով կարող կլինինք քննել այն պատճառներն, որ առիթ տուին մեզ այս, այն դիպուածի մէջ այսպէս ու ոչ այսպէս անել, այն ժամանակ միայն, որ մեր զգացումները փոխուելու վրայ լրտեսների նման չորս աչքով կնայենք, այն մեր փոխուող զգացմունքների վրայ, որ մեր մոքումը գնել կուտան ու կդրդեն մեզ այս կամ այն բանն անելու, — այն ժամանակ միայն, ասում եմ՝ հաստատ և անկասկած կերպով կճանաշենք մենք մեր չափը, նոյնպէս ևս մեզ նման մարդոց էութիւնը։

Ով որ ինքն իրան մանրամասնաբար քննած չէ, չհամարձակուի ևս ուրիշների խօսքերի ու գործերի վրայ դատողութիւն տալ։ Այնպիսի մարդն միայն հարեւանցի և վեր ի վերոյ պիտի դատի մի մարդի, երեւութի վերայ նայելով։ Երբոր ինքն իրան գեռ ևս պարզ ճանաչած չէ։ ի՞նչպէս է կարող ուրիշի սրտի շարժող պատճառներն հանելուկի պէս գտնել։ Բայց ով որ իւր թուլութիւններն, պակասութիւններն ճանաչումէ, սիրտը ցաւելով իւր իսկ արած սխա-

լոնքների վերայ, զփոշիմանելով ու ամաչելով ինքն իրանից, նա իւր նման մարդի պակասութիւնների վերայ շատ թեթև կերպով ու ներողամտութիւնով է խօսում։ որպէս և նորա մի փառաւոր գործը, որ հասարակ մարդոց բազմութիւնն մինչեւ երկինքն է բարձրացնում։ շատ զգուշութեամբ է գովում։ Նա շատ լաւ գիտէ թէ, որչափ քիչ բան է մեր արածն այն բաների մէջն, որ աշխարհքը բարձրացնումէ ու երկինքն հանում։ և թէ որքան ներողամտութեան է արժանի մի յանցանքի մէջ ընկած մարդ, որոյ արիւնը գլխին խփելուցն ու ինքն իրան կորցնելուց այնպիսի մի մեղքի մէջ ընկաւ, որ իւր բոլոր կեանքի մէջ մոռանալ չէ կարող, որովհետեւ այդ կրակը մինչեւ իւր մահը իւր սիրտը պիտի այրի, ու երբէք պիտի չհանգչի։

Միայն ինուներս մէջ մէր անյը ճանաչելու է, որ կարող անութ էն+ անսխալ էրտուլ մէջ նման մարդոց ևս ճանաչել։ Այս՝ մեր անձը, մեզի ճանաչելը, ինչպէս ասած ներիցս երեւումէ, այնպիսի մի մեծ նշանակութիւն ունի մեր բոլոր կեանքի համար, մինչեւ անգամ մեր յաւիտենական կեանքի համար, որ ամեն մի քրիստոնէի առաջին և գլխաւոր գործը պիտի լինի, որը կատարելու համար ամենայն ջանք ու աշխատութիւն, պիտի ձեռքից չթողնի, որ իւր անմահ հոգին արդէն այս աշխարհումն իւր բարձր կատարելութեանն հասցընի։ Բայց ի՞նչպէս պիտի կատարելութեան տանի իւր հոգին, քանի որ չգիտէ թէ՝ որտեղից պէտք պկսի։ ի՞նչպէս է ուզում նա յաւիտենական թագաւորութեան մէջ՝ միւս աշխարհում՝ հոգիների կա-

տարելութեան բարձր աստիճանին համին երբոր
սկրտ ու կամք անգամ չունէր, որ այս կեանքում
այնչափ բարի, մաքուր ու մեծ լինէր, որչափ որ կա-
ռող էր լինիլ:

Բայց ամեն մի սկիզբն դժուարին է, որպէս և
իւր անձը քննելն: Նատ անգամ մեր շուտով ուժից
լնկած լինելն է, որ պիտի մեզ տանջի շատ անգամ
ուրիշ ժամանակի պիտի թողնենք այդ բանն, որ մեր
խղճմտանքի մի վէրքին չկաչենք, որ գեռ ևս սաս-
տիկ ցաւում է: Նատ անգամ ևս ուզում ենք յետ
ձգել այդ բանն, այն պատճառով որ, մի անարգ
կիրք մեր մէջը գեռ ևս իրան յագուրդ տալ է ցան-
կանում: որ անկատար յմնայ ու հանգստայ: Բայց
ամեն ժամանակ մեր անձնասիրութիւնը ուզում է
մեր հոգւոյ, մեր բանականութեան աչքը իւր համար
կուրացնել և մեր թուլութիւններն ու պակասութիւն-
ները ծածկել: որ մեր պարսաւելի մերկութիւնն, մեր
ամօթալի պակասութիւններն մենք չուենենք, մեր
աչքին չերեւի, մեր համար քօղարկուած մնայ: Ինքն
իրան ճանաչելու համար նախ և առաջ պէտք է մի
պատերազմ անել մեզ՝ ինքներս մեր մէջը՝ մեր անձի
հետ՝ ինքներս մեր դէմ առաջ պէտք է հրամայենք
մեր պատուասիրութեանն ու հպարտութեան, մեր
ընչափանութեանն ու անառակութեան հակմանն, մեր
ատելութեանն, նախանձուն ու բարկութեանն, որ
իրանց ձայներն կտրեն ու պապանձուին, որ անիրր-
դով բանականութեան հանգարու ձայնը լսուի:

Առանց մքարտ անելու լսնես որ և է գոյծ, որով
ու էղ նման մարդին լսունին, կամ լսունին է

անում, ուրախունին կամ ցաւ ու վէլլու էս պատճառում,
մքարտ արա նէ ինչ՝ համար այդ բանն առիր: ևաւ քըն-
նիր, պտուիր, քըքըիր արածիդ ծածուկ պատճառ-
ներն: որչափ ևս քո սուր աչքիդ ու մոքիդ չընկնել
ու խոր տեղ ծածկուիլ ու թագ կենալ ուզենան:
Միոք արա թէ անելու գործդ, կարելի է, ծանր կեր-
պով ու լաւ մատածելով ու կշռելով չարիր. կարելի է,
այնպիսի հանգամանքներ յանկարծ պատահեցան, որ
ինքդ ևս չիմացար, թէ ինչ արիր. կամ միոք անե-
լու ժամանակ, կարելի է ասել թէ, չունէիր, այնչափ
կարծ միջոցում արիր, ինչ որ արիր—այն ժամանակն
ևս ինքդ քեզ առանց քննելու պէտքէ չթողնես,
պէտք է իմանաս թէ՝ ինչից յառաջ եկան այն զգաց-
մունքներդ՝ որ քեզ շարժեցին, դրգեցին արած գործդ
անելու: Արդեօք լաւ արիր, որ թոյլ տուիր քո զգաց-
մունքներիդ քեզ վերայ իշխելու: Ինչիցն է. որ դու
մի մի ժամանակ այնպէս տիսուր ես ու ինքդ քեզա-
նից գժգոհ, որ դու այստեղ, կամ այնտեղ այս ինչ
բերանիցդ հանեցիր, կամ խօսեցիր: Քո շտա-
պելուդ ու այդ բանն անելուդ իսկ պատճառն ինչն
էր: Արդեօք քո սնապարծութիւնն (պարծանք սիրելը)
ու թեթեռութիւնդ էր, որ մէջդ կայ, որ քանի ևս
չես ուզում ցոյց տալ, բայց դարձեալ յես կարում
ծածկել ու մարգոց չիմացնել, ու որ երբեմն՝ ընդ-
դէմ ցանկութեանդ ու կամքիդ՝ յանկարծ գուրս է
պրծնում ներսիցդ ու կարծես, նորա համար, որ քեզ
պրծնում ներսիցդ ու կարծես, նորա համար, որ քեզ
փառութեան թշնամի ես ուզեցիլ միշտ ցոյց տալ:
կարելի է, որ քո վիրաւորուած ամբարտաւանու-
կարելի է,

թիւնդէ, որն թէպէտ դու ուզում ես ուրանալ ու ցոյց չտալ բայց նա, ինչ և անես, դարձեալ քեզ հնազանդեցնումէ իրան ու իւր հպատակն ու խոնարհ ծառան անումն կարելի է, որ քեզ հանգստութիւն չտուող ընչասիրութիւնդ է, որ քեզ գերի է անում ու քո միւս բարի յատկութիւններիդ (կողմերիդ) ևս յաղթում է և իւր բռնակալ կամքին յետին ծառայ անումն եթէ որ առանց քեզ վերայ թոյլ կերպով մտիկ տալու լաւ քննել ուզենաս ինքդ քեզ, քո բոլոր մտքերդ ու բոլոր սրտինդ, ոչ միայն քեզանից ոչինչ ծածկուած չի մնալ այլ և միշտ պարզ կիմանաս, որտեղից, որ աղբիւրից յառաջ եկան քո մտքերդ ու ցանկութիւններդ, երբոր ամենն բաց արիր ու քեզ յայտնի եղաւ, քեզանից ծածկուած բան ամեննեն չմնաց, ու տեմնումես, որ կեղտու, ծուռ ու անպիտան բաներ էին սրտիդ ու մտքիդ, միջինը ու դու քո պատիւդ պահելու համար, անպատիւ մարդ չճանաչուելու և զինելու համար՝ ոչ մի մարդի ասել չես կարող, ապա ինչո՞ւ այդ ամենը լաւ հասկանալուցդ յետոյ՝ ինքդ քեզանից չամացես, որ այդ անարժան ու քեզ ամօթ բերող դրութեան աստիճանին ես ինքնդ քեզ բերել հասցրել և ինչո՞ւ չպիտի հանես, կորցնես մտքիցդ ու սրտիցդ այդ ցած զգացմունքներդ։ Ի՞նչիդ պէտք է այն պատիւը, կամ ի՞նչ պատիւ է քեզ համար այն պատիւը, որ դու ինքնդ քո միջումդ ասումն խոստովանումես թէ՝ դու այն քեզ տուած պատուին արժանի չես։ Ապա ի՞նչի համար քեզ աւելի ցանկալի է ու ջանք ես անումն որ քո

հոգուդ մի վէրքը ծածկես ուրիշների աչքին չընկնի. աւելի լաւ չէ, որ այդ վէրքը բժշկես։ Դու ինքնդ ասա, երբոր ուրիշները քեզ պատվումեն, այդ քեզ տուած պատուվը, արդեօք՝ դու քեզ աւելի^o արժանաւոր ու պակասութիւն չունեցող մարդ կարում ես համարել գիտեմ, որ՝ չէ. այլ երբոր այդ ցած դրութեանդ մէջ քեզ պատվումեն, քու քո սրտումդ ուրախանալու և քո աչքումդ բարձրանալու տեղն, ինքնդ քո աչքիցդ ընկնում եօ։

Ամենօրեայ կեանքի տեսակ տեսակ զբաղմունքի մէջ, իրաւ է, շատ անգամ միջոց ու սիրտ չենք ունենում, որ մեզ, մեր անձի վրայ մտածել սկսենք։ Օրն անց է կենում, գնում այս ու այն գործով, արջեստով, առուտուրով, սորա, նորա չետ տեսնուելով, խօսելով, այստեղ հանդիպելով։ Մեր այդ գործերի մինն ևս այն լինի, որ կատարենք այն, ինչ որ մեր հանդարտ ժամանակին մտածում ենք ու մտքներումն սարցում, զնումն որ անենք։

Իսկ ժամանակն այն է, երբոր օրվայ մեր գործերից պլծնում ենք. այս միջոցին, երբոր երեկոյեան, կամ գիշելը մենք միայնակ ենք լինում ու աշխարհիս ամեն զբաղմունքներից ազատ ու չեռացած և, այսպէս ասեմն ինքներս մեզ դարձեալ յետ դրուած այլ ևս ոչ ոքի և ոչ մի բանի չենք պատկանումն այլ մեզ միայն, երբ մթանը մեզ ամեն մեր կողմը ամեննեին ձայն ձուն չէ լսվում, մինչեւ հեռու տեղերումն ևս լուռթիւն է թագաւորումն ու մենք մեզ չետ ու Աստուծոյ հետ ենք մնում— Աստուծոյ հետն, որ մթանը մեր վրայ հսկումէ, որոյ

Ճեռքումն է մեր կեանքն, առողջութիւնն ու գոյութիւնն, այն ժամանակն է իսկ մեր վրայ լաւ մտածելու միջոցն։ Բնութիւնը, (բնական դրութիւնը մարդուս) կարծես, բռնի ուզումէ կրկին մեր մէջը գալ, մտնել, և նոր անցկացած օրվայ պատահմունքներն, անցքերն ու իրողութիւններն մեր առաջից ազատ իրանք իրանց անց են կենում, որ մեզ առիթ տան միտք անելու և ամենայն բան կշռելու։

Այն ժամանակը քննիր գու ինքնդ քեզ, ինչպէս որ Աստուծոյ խօսքը քեզ հրամայումէ, և տես թէ՝ հաւատիդ մէջն արդեօք հաստատ ես մնացել արդեօք գու միշտ այնպէս աղնիւ, կիրքերից ազատ, ուրիշներին օգնելու, կամ մի լաւութիւն անելու պատրաստ, ուրիշի մոքինը, գեռ ևս ինքն չասած, ուրախութիւնով ու սիրով կատարելու յօժա՞ր ես եղած. արդեօք այդ ու այնպիսի զգացումներ, մասձմունք և գործք ես ունեցել, ինչպէս որ քո փրկիչդ ու Աստուծութիւնոյ է քեզ հրամայել։ Յետոյ քեզ այս հարցումն առաջարկիր. թէ, ո՞ր գործն ես այսօր արել, որ ամենագէտ Աստուծոյ դատաւորական աթոռի առաջին քո բարի կամքիդ վկայն լինէր։ Ո՞ր սխալանքներն եին այսօր քո մէջդ, որոց իշխանութեան տակն ընկար. Բնչ միջոցներ կարող ես, կամ պիտի բանեցնես, որ քո սխալմունքներից ազատ մնաս և նոցա հակառակ առաքինութիւնները քո մէջդ թագաւորեցնես։

Այսօր ձախ ոտիդ վրայ էիր վեր կացել տեղիցդ, սիրտգ նեղ էր, մարդ էիր պտրում, որ հետը կոիւ տաս, աւելի պակաս ասես, կամ մի կծու, մի վատ

խօսքով սիրո ծակես. այդ սրտնեղ տրամադրութեանդ մէջ քո ընտանեաց մինին կամ միւսին, կամ քո ծանօթներից մինին, կարելի է, աւելի ծանր խօսքեր ասացիր. քան թէ արժանի էր։ Մտքումի կարելի է, միանգամ գոնէ ծանր ու թեթև չարիր, որ քո սիրտգ ցաւեցնելու մտքով չէր, որ՝ քո կարծիքովդ քեզ համար գժուար կուլ տալու խօսք ասացին քեզ, այլ երկար չմտածելով կամ չկարծելով թէ՝ իրանց ասած խօսքը ուր կերթայ, կամ սրտիդ կկազի. մի բան էր, իրանց բերանից թռցրին։ Եթէ որ մոտածէիր թէ՝ մի ուրիշ միտք մի ջոկ հաշիւ չունէին տեսնելու քեզ հետո, որ ուզելով քո սրտիդ կպչելու խօսք ասեն, ամենաեխն չէիր տաքանալ ու քո բերնիցդ աւելի վատ խօսքեր չէիր գուրս ածիլ, այլ կասէիր թէ՝ ինչ նեղանամ, լաւ հասկանում եմ, որ իւր խօսքը բերանումն չեփած, գուրս հանեց, յիմարութիւն էր արածը, ուրեմն և ներելի է նորան։ Ուրեմն լաւ զգում ու հասկանումես, որ գու աւելի վատ արիր ու գու ինքնդ շատ աւելի մեղաւոր ես քո վարմունքովդ, որ չափից անց կացար, համը փախցըրեցիր։

Իրաւ է, կամացուկ ասում է հեշտ ներող անձնասիրութիւնդ. բայց բոլորովին ներելի էր, որովհետեւ այսօրվան բարկութիւնդ նորանիցն էր, որ շատ նեղ, տիսուր, դժգոհ էր սիրտգ, չգիտեմ. ինչիցն էր, բայց այդպիսի վատ տրամադրութեան մէջ էիր։ Մարդ, սիրտը նեղ եղած ժամանակն, իւր ասած, չսասածն չէ իմանում ու բերանիցն գուրս եկածն ականջն չէ իմանում, որովհետեւ իւր սրտի զրու-

թիւնն շատ վատ է, ինքն ևս չէ իմանում թէ՝ ի՞նչ
անի:

Ուրեմն դու գիտէիր արդէն, որ մի վատ տրա-
մադրութիւն տիրումէր վրադ. Երբոր դու զգում
էիր այդ, ինչո՞ւ քո սանձդ չքաշեցիր, այլ քեզ բո-
լորովին թոյլ տուիր, որ մաղձդ թափես մի անմեղի
վրայ: Դու լաւ գիտէիր, որ ինքնդ ևս քեզ ճանա-
չել չէիր կարում և չէիր իմանում թէ՝ ի՞նչ է եղել
քեզ, որ սիրտդ այդպէս դառնացած է, ինչի՞ հա-
մար իսկոյն հաստատ մոքումդ չդրիր, որ քո այդ-
պիսի վատ գրութեան մէջ, քեզ այդ միջոցին պա-
տահող, խօսեցնող մարդին, բերանդ ոչ բարով պիտի
բացանես ու ինչ համար, պէտք է ասես, ինչի,
ասում եմ մոքումդ չդրիր, որ ոչ ոքի մի թթու,
կծու խօսք չասես, լուռ կենաս, ու, եթէ քեզ
բարկացնելու խօսք ևս ասելու լինին, բերան չբա-
ցանես ամենելին: Դու, որ լաւ գիտես, որ մարդս,
իւր բարկացած միջոցին, ամենայն բան աչքին ծուռ
է երեսում: լաւ խօսքն անգամ վատ է թվում:
կարծես ամեն բան նորա համար ծուռել է, բայց
իսկն այն է, որ ինքն է փոխուել, ծուռել. դու որ
այդ ամենը գիտես, ինչո՞ւ քեզ չբունեցիր ու թող
տուիր:

Բայց, կարելի է, որ դու՝ ոչ միայն այսօր, այլ և
շատ ու շատ անգամ ինքնդ քեզանից դուրս ես գա-
լիս. շատ անգամէ պատահում, որ բարկութեանդ
չափ ու սահման չես դնում: Անձնասիրութիւնն ծա-
ծուկ ասումէ թէ՝ իւր բնութիւնն այսպէս է, իւր
բնութեանը պակասութիւնն է. այս մարդս՝ ինչպէս

ծնուել է, այնպէս ևս կմեռնի, բնութիւնը փոխելը
շատ դժուար բան է. օձն իւր կաշին կփոխի, մարդս՝
իւր բնութիւնն չի փոխիլ: Բայց գիտես իսկապէս, որ
բնութեանդ պակասութիւնն է, թէ՝ հենց այնպէս
ասումես: Եթէ որ քո ասածդ ևս լինէր. մի՞թէ չէ
կարող մարդս իւր հոգու զօրութիւնովն իւր բնու-
թեանը յաղթել: Արդեօք փորձած ունիս այդ ասա-
ծըս. փորձիր, տե՞ս, կինհ՞, թէ լինիր, քեզ է ան-
կարելի երեսում: բայց մարդիս հոգու զօրութիւնը,
քաջութիւնը անկարելի բաները կարելի է անում:
Երբոր Աստուծոյ զօրութիւնն իրան օգնելու յոյսն
ունի՝ նորան ապաւինելով: Ապա ի՞նչպէս է լինում:
որ դու կարողանումես քեզ բռնել, երբոր քեզանից
մեծերի առաջն ես, ապա նորանց առաջն ի՞նչպէս է
լինում: որ կատաղում ես սրտումդ, բայց ձայն չես
հանում, կամ, երբոր այնպիսի մի տեղ ես գտնվում:
ուր որ շատ մարդ քո վերայ է մտիկ տալի և որոնց
որ դու պատվումես ու նորանցից քաշվումես: Աչքդ
լաւ բաց արա ու իմացիր, որ այդ քո ձայն չհանե-
լուդ և քաշուելուդ ժամերն քո խարդախութիւնդ
ու ստախօսութիւնդ պախարակողներն են: Ինչ որ
դու այստեղ ու այնտեղ կարող ես անել, ինչո՞ւ չես
կարող միշտ անել: Եթէ որ մի անակնկալ ստիպ-
մունք, որ դրսից քեզ վրայ զգումես, քեզ քո սանձդ
քաշել է տալի, և այնպէս փոխվում ես, որ կարծես
թէ՝ այն կատարող մարդը չես, որ ինքդ քեզ բռնել
ամենելին չէիր կարողանում: ապա ինչո՞ւ չես աշխա-
տում քո հանդարտ եղած միջոցումդ, քո տանդ,
քո ընտանեացդ մէջ ինքդ քեզ սանձել և տանդ

մէջ, քեզ քո տան իսկական տէրն ու մեծը ցոյց տալ, քո արժանաւոր վարմունքովդ, քո խելքովդ ու սրտովդ, որ քեզ պատիւ բերի, քեզ պատուել ու սիրել տայ քո տանդ մէջ՝ մեծից մինչեւ փոքրը։ Քո մէկ պակասութիւնդ ևս քեզ ասեմ, որ քեզ լաւ ճանաչես։ Դու ուրբաների առաջն միշտ աշխատում ես պատուելի ու լաւ բնութեան տէր մարդ երեւելու. ցանկանում ես մանաւանդ ամենայն կերպով, որ քեզ բարոյական մարդ ճանաչեն. բայց ծածուկ՝ մի մի ժամանակ՝ թող ես տալի քո ասնձդ. ինչ վատ զգացմունքներ, ինչ անպիտան երեւակայութիւններ, ասես, ազատ գալիս են քո մոքիդ, քո որտիդ մէջը մտնում։ Այդ զգացմունքներդ ու երեւակայութիւններդ քո մէջդ մեծանալով, զօրանալով, ինքդ ևս չես իմանում։ Ժէ ինչպէս քո մէջդ մի ամօթալի կիրք են մեծացնում։ Ամեն մեղքից աւելի վատն այս է, որովհետև այսպիսով է մարդս մեղքի գերի դառնում։ Վատ ընկերութիւններն, իրաւ է, մեր բարի վարքը վչացնում են, բայց ամենից վատ ընկերութիւնն՝ մեր անբարզյական և անմաքուր մտքերի հետ ընկերութիւն անելն է։ Մի անիծելու գործ անելու համար միայն մի դիպուած է հարկաւոր։ Երբ այդ նզովելի դիպուածն պատահում է և երբոր դու, ինքնդ քեզ այլ ևս բռնել չկարողանալով, կորցնում ես քեզ, այնպիսի մի բան ես անում։ Որ սիրտդ միշտ պիտի այրի, քանի որ միտքդ ընկնի—ինչպէս կոտրուած, ինչպէս ցածացած ես քեզ տեսնում այն ժամանակը։ Ինչպէս սրտանց խօսք ես տալի ինքնդ քեզ, հազար ու մէկ երդումով, այլ

ևս այդպիսի բան չանելու։ Բայց, կարելի է, որ, եթէ գարձեալ մի այդպիսի դիպուած պատահի դարձեալ քեզ սանձել չկարողանալ ձեւացնես ու քեզ թոյլ տաս, չեմ կարում դիմանալ ասելով, դարձեալ քո մարդկային բարձր արժանաւ որութեանդ ընդդէմբան անես ու գարձեալ փոշիմանես և ամօթիցդ գետինը մոնել ուղենաս։ — Այս քո խեղճութիւնդ նորանիցն է, որ դու քո փոքր ժամանակուանիցդ վատ բանի կայծը քո մէջ չես հանգցրել չես խեղճել, այլ թոյլ ես տուել, որ մնայ. քանի գնացել է, աւելի լաւ կպել է այդ կայծը, կամաց կամաց մեծացել է, ու վառուելով, կրակ է զարձել, որ քեզ ու քո հոգու տունը այրումէ, վչացնում։ Եթէ որ ժամանակին աչքդ բաց անէիր, մտիկ տայիր թէ ինչ վնասներ կարող է քեզ բերել այն կայծը, քո հոգուդ հանգըստութեան թշնամուն ճանաչած կլինէիր և սկըզբից գէմ կլենայիր քաջ սրտով ու յաղթած կլինէիր։ Բայց որչափ ևս որ հաստատ մտքներումն դնում ենք, որ մեղքը, այնպէս անենք, որ մեզ վերայ աղդեցութիւն բնաւ չունենայ, բայց և այնպէս սակաւ է պատահում, որ մենք մեր վերայ դատաւոր լինինք անաչառ կերպով և առանց նախապաշարուած լինելու։ Մեզ, մեր անձը, մեր եսը քննելու ժամանակ, ամեն անգամ շատ բան մեր սրտի բոլէական տրամադրութիւնիցն է կախուած, այն վայրկենին ինչ որ մեր խելքն ասումէ մեզ համար, այնպիսի վճիռ ևս տալիս ենք։ Ինչ որ մենք մեր ուրախ ժամանակին, տաք տաք տանում ենք, շատ անգամ փոքր բանի տեղ դնելով մեր արածն, յետոյ, մեր տիսուր եղած

միջոցումն շատ աւելի մեղադրելի և աններելի է երեւում մեզ: Սորա համար շատ և շատ օգտակար է մեզ, ինքներս մեզ լաւ ճանաչելու համար՝ մեր արդար, ճշմարտախօս բարեկամների խօսքին ևս ականջ անել նոցա մեզ ասածը, նոցա մեզ տուած խորհուրդը լսել ամենայն ուշադրութեամբ և թէ ինչպէս են նոքա մտիկ տալի մեզ վերայ, ինչպէս են տեսնում մեր վարած կեանքն, ինչ խելքի ու մտքի տէր են մեզ ճանաչում ու համարում: Եթէ որ նոցա ասածը ճշմարիտ է, մեր խղճմտանքը իսկոյն մեզ կասի, թէ մենք ծուռ ենք ու մեղաւոր, և մեր անձնասիրութիւնը իւր ձայնը կկտրի: Մինչև անգամ մեր մեծ թշնամիներն կարող են մեզ շատ օգտակար լինել մեր թուլութիւններն լաւ ճանաչելու համար: Ինչու որ, ով որ մեզ բարի չէ կամենում մեր փոքրիկ պակասութեան վերայ անգամ չորս աչքով է նայում: տեսնում ու խօսում: մեր ամենալաւ բարեկամն այդ չէր անիլ կիսնայէր, կմեղքանար ներողամիտ կլինէր դէպի մեզ, յարգելով մեր ունեցած ուրիշ արժանաւորութիւններն՝ ու մենք մեզ լաւ չէինք ճանաչել:

Ինքնաճանաչութիւնը իմ ամեն օրուայ գործս ու պարտքս լինի. պատճառ որ ինքնաճանաչութիւնս իմ հայելիս է, որոյ մէջ ես ինձ, իմ հոգիս, իմ սիրոս, իմ բնութիւնս պարզ ու լաւ տեսնում եմ: Ինքնաճանաչութիւնը իմ հոգուս, իմ բանականութեանս լապտերն է, իմ կեանքիս խաւար տեղերումը: Աւելի անաչառ կերպով պիտի ես ինձ այսուհետեւ գատեմ: որ աւելի ևս ապահով լինիմ իմ գերագոյն Դատաւորիս շնորհացն ու ողորմութեանն, որով ու-

րախ լինիմ: Դու, իմ Աստուածս, իմ սուրբ վարքով ապրելուս միջոցներն՝ իմ կենաց ճանապարհի վրան ես դրել, որ պէտք է գնամ, ինչպէս կարող եմ քո առաջին արդարանալ, երբ որ այդ միջոցներն ոտնակոխ անեմ, անցնեմ, երթամ, արհամարհեմ ու գործ չգնեմ:

Ով իմ երկնաւոր Հայր, հասնես ինձ իսկոյն, ու միշտ զօրութիւն, կարողութիւն տաս, երբ որ ես, քո պատուիրաններիդ համեմատ, իմ սրտիս արժէքն եմ ուզում քննել, իմանալ: Ամեն երեկոյին մտածելս քո կամքիդ և քո ամենագիտութեանդ վերայ՝ ամեն երեկոյ ինձ քո դատաստանիդ առաջն քաշի, բերի, քեզ հաշիւ, համար տալու համար, այն անակառ բառապատճենի առաջն, ուր որ հաշիւ ու համար պիտի տամ՝ ամենուրեք եղող Ստեղծողիդ մօտն ու աչքի առաջին, ուր որ խաբէութիւնն ու ստախօսութիւնը բան չանիլ:

Ով որ այսպէս սովորեցրել է իրան՝ իւր անձի հետ հաշիւ տեսնելու, այն մարդն, ով Հայր՝ իւր կեանքի վերջին բոպէումն, որ արդէն երթալու վերայ է, իւր բոլոր կեանքի մասին հաշիւ տալու՝ անմեղ երեխայի վստահութիւնով Քո ողորմութեանդ մեզ կունենայ ուրախ սրտով: իսկ զղջացած վերայ յոյս կունենայ ուրախ սրտով: իսկ զղջացած մեղաւորին միսիթարութիւն է այն երկնային շնորհաց խօսքն թէ՝ « Եթէ որ ձեր մեղքերը արիւնի պէս ևս կարմիր լինին, ձիւնի պէս սպիտակ կանեմ»:



իրանց սրտումն ուրիշ կերպ են մտածում։ իրանց
մօտիկ բարեկամների առաջ անիծում են հէնց այն,
ինչ որ խելօքութիւնով ուրիշների առաջ սաստիկ գո-
վումնեն։ Սրտանց ցանկանումեն անհամբերութեամբ
մի ուրիշ դրութեան մէջ լինելու, և իրանց ունեցած
վիճակը շատ անգամ անտանելի են գտնում։

Կան ուրիշներն էլ որ իրանց կեանքում ունե-
ցած ոչ մի դրութիւնից գոհ չեն եղել։ Ամեն մի
հանգամանքի մէջ տեսել են նոքա անակնկալ անա-
խորժութիւններ, որ իրանց զզուեցրել են։ Երբեմն
իրանց յանձնուած գործն, որ պիտի կատարէին,
իրանց գուր չի եկել, իրանց մտքումն ասել են թէ՝
գա ինչ տեսակ գործ է, որ կատարեմ։ Երբեմն էլ
իրանց անհամոյ են թուել մարդիկն, որոնց հետ
պէտք էր ապրէին, կապ ունենալով հետները։ Նո-
րանք երբէք չեն գտել այնո ինչ որ ուզում էին, ու
պտուել են այն ինչ որ գտնել չեն կարողացել ու-
զում եմ ասել սրբի հանդադունին։ Տեսնում ենք, որ
այդպիսի մարդիկ միշտ գանգատուումեն, միշտ գըժ-
գոհ են, միշտ տրանջումեն։ միշտ նոր բանի կպչելու
ետելից է խելքներն, որ ձեռքներն ընկնէր։ իրանց
ձեռքն ունեցած գործը թողնումեն, գէն քցումշատ
անգամ, ուրիշ բանի կպչում։ շատ բանի ձեռք զար-
կում, և վերջապէս տեսնում են, որ ոչ մի բանի
վերայ չեն, որովհետեւ իրանց բռնած գործերը բո-
լորն էլ անյաջող գուրս եկան, ոչ մի բան ձեռքները
ընկաւ։

Այդպիսի փոփոխամիտ մարդիկ ամեն տեղ բաղ-
դաւորութիւն են պտում բայց ոչ այնտեղ, ուր որ

Պ.

ՄԱՐԴՈՒՄ ԳՈՀ ԼԻՆԵԼՆ ԻՒՐ ՈՒՆԵՑԱԾ ՎԻՃԱԿՈՎԸ.

(Առաջ Սովորութեան ժամանակակից ժամանակակից առաջ 15—17):

Տիրուր մարդու ամեն օրերն էլ վատ են. բայց ուրախ
սիրու միշտ լաւ կեանքի մէջ է, Աւելի լաւ է քիչ բանը Տի-
րոջ վախովը, քան թէ մեծ զանձ անհանգիստ սրտով։ Աւելի
լաւ է մի աման բանջարեղէն սիրով, քան թէ մի զուարակ
տառելութիւնով։



Վատ մարդոց ընտանեկան վշտի մի ամենասո-
վորական ազբիւրն, որ շատ անգամ ուրիշներից ծած-
կում են՝ գուրսն ունեցած իրանց վիճակից գժգոհ
լինելն է, այն վիճակից, որ Աստուած իրանց կամե-
ցել է, կամ որին որ պէտք է հասնեն իրանց ջան-
քովն ու աշխատութիւնովը։ — Թէպէտ կան մարդիկ, որ
իրանց ունեցած վիճակից՝ իրանց գոհ են ցոյց տալի,
բայց այն մտքով է միայն, որ իրանց գժգոհ լինիլն
ուրիշներն չիմանան, իրանց հպարտ սիրու կոտրուած
չըտեսնուի, նորանց առաջը խեղացած չերելին։ բայց

միայն պէտք է պտուին, ուզումեմ ասել, իշանց գոհ
ու բարձրաշաղար ուրած մէջը: Նորանք կըցանկանային բո-
լոր աշխարհն ուղղել որ իրանց համար ամենեին մի
բանի նման չէ, որովհետև ծռուած է ու անկարգա-
ցած: Բայց մարդոց ուղղելն ինչո՞ւ իշանցից վէն ոկառո՞ւ:
Ինչո՞ւ անկարելի բանն անելու վրայ մտածելով, մո-
ռանում են կարելի բանն, որ իրանք անել կարող
էին:

Դժգոհ ճարդն՝ իւր իւկ բարձրաշաղար մէջ անողոք և
անհաշաղար նշանակն է: Նա բանի տեղ չէ դնում Աստու-
ծոյ իրան վիճակած բարիքն՝ ու վազումէ հեռուում
գտնելու աւելի լաւ վիճակ ու դրութիւն: Նա միշտ
տանջուումէ ծարաւութիւնից, ինչու որ իւր ինքնա-
հաճութիւնն արհամարհումէ այն աղբիւրն, որ իւր
ոտքի տակն է վազում: Անխօհեմ կուրութեամբ՝ իւր
ներկայի անամապ երկնքի վերայ ամպեր է հաւաքում:
իւր անմտութիւնը վերջը վերջն իւր համար մի ծանր
ու անտանելի բեռն է դառնում, իսկ ուրիշների հա-
մար ծաղր անելու մի յիմարութիւն: Բայց առաջա-
շաղար ու բարձրականացողը մէժ շահ ունի (Ա. Տիմօթ.
Զ. 6):

Մեր ունեցած դրութիւնից ու վիճակից գոհ լի-
նելն՝ ոչ թէ մեր տրտնջել ու գանգատուիլն է, այլ
բաւական լինելն այն օգուտներովն, որ ունինք մեր
կեանքի ախորժելի կողմերովն. այն մեր ունեցած
համոզման մէջն է, թէ մենք մեր աշխատութիւնով
ու խնայողութիւնով բաւական բան կարող ենք յետ
քցել որ մեր կեանքը պատշաճաւոր կերպով և՝ ա-
ռանց ուրիշների առաջ ամօթով մնալու՝ անց կաց-

նենք. այն համոզման տէրը լինելով որ՝ ոչ թէ աւե-
լի մեծ շքեղութիւնն ու փայլն, ոչ թէ աւելի մեծ
անունը կամ թէ նշանաւոր հարստութիւնն, այլ մեր
վիճակի ու դրութեան մէջ կատարած մեր պարտա-
կանութիւնները պատուի տէր կանեն մեզ մարդոց
առաջը. լաւ իմանալով, որ ամեն մի վիճակ իւր վատ
կողմերն ունի, որ մենք, Աստուծոյ մեզ պահելուն
ապաւինելով, աներկմիտ յուսով մեր վիճակի այդ
անախորժ ու վատ կողմերն, որից փախչել չենք կա-
րող, տանումենք համբերութեամբ:

Բայց սորանով չենք ուզում ասել, որ մեր վի-
ճակն ու դրութիւնը չպիտի աշխատենք լաւացնելու,
երբոր այդ կարող ենք անել պատուաւոր կերպով:
կամ թէ մեզ համար շահաւոր որ և է աշխատանք
բանի տեղ չգնենք, երբոր բարեյաջող դիպուածը մեր
առաջն է բերում. կամ թէ ամենեին չուզենանք
մեզ նեղութիւն տալ ու ջանք անել, որ աւելի լաւ
ապրուստ, աւելի լաւ անուն, աւելի մեծ շրջան ու-
նենանք գործ կատարելու: Եթէ որ այդպէս անելու
լինէինք, այդ կնշանակեր արհամարհել այն արդար
միջոցներն, որով կարող էինք թէ ուրիշներին և թէ
միջոցներն ու մեծ օգուտ տալ: Բայց արհամարհելն այն
մեզ աւելի մեծ օգուտ տալ: Բայց արհամարհելն այն
փոքր միջոցներն, որ ունինք, աւելի մեծ ու լաւ մի-
ջոցներ ձեռք բերելու համար, որ գեռ ևս չունինք,
անխելքութիւն է:

Բայց ընչիցն է, որ շատ ու շատ մարդիկ գոհ
չեն Աստուծոյ իրանց պարգևածովն, և առաւելա-
պէս մեր օրերումը շատերին ենք տեսնում, որ իրանց
արտաքին դրութիւնովը դժգոհ են:

Քիչ անդամ չէ պատահում, որ գլխաւոր յանցանքը ՁՇ ժառանին ս= խոպարին է ՁՇ ս=նեցած զի՞ճակի ժո՞ժերից ս= հակո-ճն ս=նեալն ս=րիշ վիճակի ս= գոյժի էջ վնէլու: Կայ մարդ, որին որ իւր մանկութեան հասակումն արդէն իւր գաստիարակները կեանքի այնպիսի մի ասպարէզի համար են պատրաստում, որ յետոյ իրա համար ցանկալի ու սիրելի չէ լինում: Կարելի է, ժամանակին նա հասկանում է, որ իւր կոչման ու կատարելու պարտաւորութիւնների համար ինքը բաւական յարմարութիւն չունի. կամ տեսնում է, որ ուրիշներն իրանից շատ աւելի լաւ են ու առաջ: Բայց կարելի է, որ իւր անհաստատ բնութեան տէր ու փոփոխամիտ լինելուցն է, որ երբէք չէ կարողանում իւր կպած գործի մէջ երկար մնալ, կամ այդ գործով բաւական ժամանակ պարապել, ու իւր խելքին՝ կամ հաշուին յարմար չէ գըտնում իւր ձեռքն ունեցած գործն և ուրիշ բանի կայել է ուզում: Բայց ինչ բան որ մարդս ուզելով չէ անում, նորանից մի բան էլ դուրս չի գալ: — Իրաւ է, և ոչ ոք չէ կարող ուրանալ, որ այնպիսի դիպուածներ լինեն, որ մարդս բաւական մարմնաւոր և մտաւոր ոյժ չունենայ իւր մտած գործի մէջ պէտք գալ, ու քիչ բան ձեռքից գայ, կամ բան չկարողանայ անել ու գլուխ բերել, մինչև անդամ օգուտ բերելու տեղը՝ վնասակար կերպով իւր վիզն առած գործը կատարել: Այն ժամանակ իւր ձեռքն ունեցած գործը թողնելն ու մի ուրիշ յարմարաւոր բանի կայելը կարեռութեան մի ստիպմունք ու պահանջ է: Իւր ձեռքըն ունեցած գործն այդպիսի դէպքում դէն քցելն

ունոր՝ չըսորված բանի կայելն, քանի որ շուտ լինի, և որքան որ աւելի ջանքով կատարուի, այնքան էլ աւելի օգտակար ու շահաւոր կլինի: — Բայց իւր միտքը փոխելու և՝ ուրիշ գործի կայելու համար՝ ալդ մեծ նշանակութիւն ունեցող քայլն անելուց առաջ, մարդս լուրջ մտքով պիտի քննէ իւր ունեցած գիտաւորութիւնը. թէ՝ արդեօք մի անդիմադրելի կարեռութիւն է հարկադրում իրան այդպիսի մի քայլ անելու, որ քգիտէ, թէ՝ իւր գլխին ի՞նչ կրերի. իւր ձեռքն եղած գործը փոխելն՝ և ուրիշ բանի կայելն կայելու համար առաջ բերած պատճառները հիմնակայելու համար առաջ բերած պատճառները համար չեն, այլ անհիմն բաներ, որ մարդս ինքն է բաւոր չեն, այլ անհիմն բաներ, որ մարդս ինքն է բանի տեղ գրել և դորանով ծածկումէ և արդարացնում իւր հաճոյքն ու իւր յուլութիւնն աշխարհի և ցընում իւր հաճոյքն ու իւր յուլութիւնն աշխարհի և իւր իսկ առաջ: Իսկն որ ասենք, չկայ ոչ մի գործ, իւր իսկ առաջ: Իսկն որ ասենք, չկայ ոչ մի գործ, իւր իսկ առաջ: Ամեն ուր և օգտակար կերպով է կատարում մարդու: Ամեն մի գործ, ինչ պաշտօն ու պարտ սւորութիւն ուզում է լինի, մեծ՝ թէ փոքր, բարձր՝ թէ ստոր, կատարող է լինի, մեծ՝ թէ փոքր, բարձր՝ թէ ստոր, կատարող մարդուն պատիւ կրեերի, երբոր ինքն իւր գործն ու պարտը զանցառութիւնով ու արհամարհանքով չը պարտը զանցառութիւնով ու արհամարհանքով, կատարի, այլ սիրելով ու լաւ նշանակութիւն տալով, կատարի, այլ սիրելով ու լաւ նշանակութիւն տալով, արուրիշ կերպ ասեմ: պատռելով իւր գործն ու արուրիշ կերպ ասեմ: պատռելով իւր գործն ու արուրիշ կերպէս խօսելով, մարդկային ոչ մի հետան: Ընդհանրապէս խօսելով, մարդկային ոչ մի համարի այդպիսի մի ստիպմունք ու պահանջ է: Իւր ձեռքըն ու զանքով կատարենք, և նա ընտանեկան մտքով ու զանքով կատարենք, և նա ընտանեկան

կեանքի ու հասարակութեան համար անպտուղ լինի։ Բայց եթէ որ ուզումենք, որ՝ մեր քաշած դժուարութիւնների ու նեղութիւնների հետ՝ մեր արած գործի լուսաւոր կողմն աչքի ընկնի, ճանաչուի, պէտք է, որ գործի մէջ մեր անդուլ աշխատութիւնն ու հաւատարիմ գործակատարութիւնն որպէս և պարտաճանաչութիւնը միմեանց հետ սերտ կապով կապուած ու միաւորուած տեսնուին։ Դորա համար րոպէական տհաճութիւնից՝ կամ դժգոհութիւնից պէտք չէ միտքներս փոխենք, ինքներս էլ փոխուենք, այլ մեր խոհեմ գատողութիւն անելուց յետոյ միայն։ Ամեն մի մարդ իւր կեանքի մէջ իւր նեղութիւններն ունի, որ պիտի քաշի՝ իբրև մի ծանր բեռն, որ իւր վերայ բարձած է՝ ու պիտի տանի։ Ամեն մի մարդ իւր կեանքի մէջ իւր պատերազմն ունի, որ պիտի պատերազմի՝ և որից յաղթող պէտք է դուրս գայ—բայց գովասանքը, պատիւն ու փառքը միայն նորան են տալիս, ով որ քաջ որտի տէր է, իւր կանգնած տեղը չէ թողնում ու պատերազմից չէ փախչում։ Մեր Փրկչի մի առակով ասած իմաստալից խօսքը թէ՝ «ոչ մէկն, ձեռքը մաճի վերայ չի դնի ու ետել մտիկ տայ, թէ Աստուծոյ թագաւորութիւնը յաջողուած է» (Առկ. Թ. 62) այս միտքն ունի։

Մի ուրիշ և աւելի սովորական պատճառն, որ մարդիկն իրանց ունեցած վիճակից դժգոհ էն, իրանց մեծամասնութեանն է, որ ոչ մի բանով չէ բաւականանում։ Ուրեմն ոչ թէ իրանց ունեցած վիճակն է, որոյ մէջ գտնվումեն, այլ իրանց սխալականութիւնն, որ անբաղդ են։ Եթէ որ թագաւորական տախտի վրայ էլ

նստած լինէին, ունայնամտութեան չարագոյն օձն այնտեղ էլ իրանց սաստիկ կը խայթէր։—Ուրեմն ինչո՞ւ համար ես դու շատ անգամ այնպիսի մեծ ջերմեռանգութեամբ ազօթք անում, և Առաջածոյ առաջ սրտիցդ հանում ու գնում քո ունայնամտութեան պախարակելի ցանկութիւններդ ու փափագներդ։ Միթէ մեր երկնաւոր Տէրն ու աշխարհիս կառավարիչը քո ցանկութիւններիդ ծառան պիտի լինի՝ և բոլոր աշխարհիս կարգը պիտի փոխի, և քո կազմած ծրագիրներիդ, քո ունեցած անիրաւացի և անմիտ նպատակներիդ համեմատ պիտի շարժի։ Կարելի է, սրտիդ ցաւ է տալիս, որ քեզ չեն ճանաչում, քեզ գին չեն դնում, չեն յառաջացնում, այլ անտես են անում, յետ քցում։ Կարելի է, ինքդ զգում ես, որ դու աւելի յաջողակ ես շատ ու շատ կողմից, աւելի արժանաւորութիւն ունիս՝ քան թէ մի ուրիշն, որի բաղդը կտրում է, ու քեզանից աւելի լաւ է համարվում։ Քեզանից չէլ աւելի առաջ է։ Բայց տեսնենք թէ՝ մենակ դու ես, որ փորձվում ես։ Տեսնենք թէ՝ միշտ և ամեն տեղ ուղիղ ճանապարհն ես բռնել, որ ամենապնիւ նպատակիդ համես։ Տեսնենք թէ՝ քո անկուշտ ինքնասիրութիւնդ չէ, որ միակ ամենամեծ արգելքն է եղել քո ցանկութիւններիդ կատարուելուն։ Որ ոչ թէ քո ունեցած կացութիւնդ ու կոչումնդ իրանց պարտաւորութիւններովն ամենավատ են՝ ու դու տանջվում ես, այլ քո իսկ սիրտդ, իւր վատ ցանկութիւններովը թունաւորելով, դառնացընումէ քո կեանքիդ քաղցրութիւններն, որ պիտի վայելէիր։ Ի՞նքդ լաւ եղի՞ր, քո վիճակդ էլ լաւ կլինի։

կան մարդիկ էլ որ իրանց պաշտօնից՝ կամ կատարած գործից անդոհ են, ինչու որ իրանց առջև առաջ այնպիսի մի բան չէ երևում, որ մեծ հարսափութեան առեր դառնացին: Դորանք ցանկանում են հարստութիւն ձեռք բերել, որ լաւ ապրէին, լաւ օրեր անցկացնէին: Նուտ հարստանալու ցանկութիւնը շատ մարդոց հիւանդութիւնն է մեր օրերում ու միշտ անբազդ հետեանք եմ՝ միայն տեսել այդպիսի ցանկութիւն ունեցողների վերայ, երբոր հասած, պրծած են եղել իրանց սրտի ուզածին: — Անյագ, աչքածակ մարդ: որչափ էլ մինչեւ ցայժմ՝ չափաւոր մի արդիւնք, միջակ մի եկամուռ ունէիր, բայց ապրում էիր, ոչ քաղցած էիր մնացել ոչ էլ մեծ կարօտութիւններ էիր քաշում: բաւականանում էիր քո ձեռքդ եկածովն, որովհետեւ քո ձեռքդ ունեցած գործդ քեզ աւելի բանի տէր անել չէր կարող, այլ միայն քեզ համար այնքան օգտակար լինել, որ քեզ ու ընտանիքիդ պահես: Աստուած ամենքիս էլ բաղդաւոր լինելու համար է ստեղծել բայց՝ բաղդաւոր լինելու համար՝ ամենքիս էլ մի և նոյն միջոցները չէ տուել: Նաև որ մեծ ու փոքր անուանի ու հասարակ, հարուստ ու աղքատ, տէր ու ծառայ մարդիկ է ստեղծել, որ իրար մէջ միմեանց ծառայեն: Եթէ ուրիշները քեզանից աւելի կարողութիւն ունին, միթէ կարծում ես, որ քեզանից աւելի բաղդաւոր են: Միթէ կարծում ես դու, որ ոսկին այնպիսի մի հրաշալի գօրութիւն ունի, որ մարդոց բաղդաւոր անել, բարօրութիւն պարգևել կարող է: Մի փառաւոր բնակարան ունենալը, տանը մէջ մի փայլուն կարգ ու սարք ու մի պատուաւոր

տնտեսութիւն տեսնելդ՝ միթէ կարծում ես, որ մարդկային ազգի կատարելատիպերն են: Լա՛ւ իմացիր, որ այս ամեն բարիքն ոչնչանալու բաներ են, որ կարձ ժամանակուայ մէջ պիտի վիշանան: Եւ եթէ որ դու քո գործունէութիւնովդ յաջողութիւն գտնէիր ու միլիոններ ձեռք բերէիր, ոչ մի փող չէիր կարողանալ հետդ տանել այն կետնքն՝ և անմահ Աստուծոյդ գատաւորական աթոռի առաջ հանել: Ամենագէտ և ամենամեծ ստողծողիդ առաջ գին ու արժէք ունի ամբիջ սիրտն ու անարատ վարքը միայն:

Կարելի է պատահի, որ ինչքան էլ քո գործիդ մէջ ջանք ու աշխատութիւն չխնայես, բայց ձեռքդ քիչ բան ընկնի, կամ թէ աշխատանքդ՝ աւելանալու տեղը՝ պակասի: Կարելի է պատահի որ՝ պատերազմն ու սովը, կամ ուրիշ՝ մտքիցդ անց չկացած անյաջողութիւն և անբաղդութիւններ գլխիդ գան՝ ու շատ կողմից վնաս քաշես՝ բայց՝ աշխատասէր մարդն երբէք կորուստ չէ ունենում: Եթէ որ վատ անցկացրած օրերումդ այնքան չունիս, որ ապրիլ կարողանաս, իմացիր, ինքդ ես մեղաւորն, որ քո լաւ օրերումդ՝ վատ օրերիդ համար բան չես յետ քցել: Այժմ քո թեթևամտութեանդ ու թերամտութեանդ վնասն ես քաշում: Կարելի է, որ ապրուստի նեղութիւն քաշելու պատճառը քո արած ծախսերդ էին, որ քո կարողութիւնիցդ վեր էին, ուրեմն ոտդ աւելի երկարացրիր, վերմակիցդ դուրս հանեցիր, ուրիշների նման կեանք անց կացնել ուզեցիր, կամ թէ նոցանից աւելի գերազանց ու փայլուն կերպով ապրել: Ոչ թէ քո կացութիւնդ, քո ունեցած վիճակդ ու

հանգամանքդ, այլ քո այն պակասութիւնդ, որ խնաշութիւնով չափաւոր կերպով ու տնտեսաբար ապարել չիմացար, այդ քանդեց քեզ ու քո տունդ: Բայց մեր թէ լաւ և թէ վատ օրերն աստուածանիցն են մեզ գալիս, ով քրիստոնեայ, սորվիր այդ երկու տեսակ օրերդ էլ իմաստութեամբ գործ ածելու:

Կայ մարդ, որ դուրսն ունեցած իւր դիրքից ու հանգամանքից գոհ չէ, ինչու որ յորբակցութեան աղիքէ ունենայ այնպէսէ ճարդոց հետո, ուստի երան արելի են: Դորանք գառնացնում են իւր կեանքն իրանց անախութիւնովը, կամապաշտ հաճոյասիրութիւնովն, իրանց ամբարտաւանութիւնովն ու ատելութիւնով: Խօսք չունիմ: որ մարդու այդպիսի անախորժ դրութեան մէջ էլ կըպատահի, որ գտնուի:— Բայց ինքդ քո առաջդ պատիւդ մի կորցնիլ, ինքդ քեզ միշտ լաւ պահիր, և որոնց հետ որ նիստ ու կաց ունիս, գովելի վարմունք ունեցիր՝ նորանց հետ: Բայց տեսնենք թէ՝ քո կողմից ամեն ջանք արել ես, ամեն կերպ աշխատել ես, որ այդ քո ատած մարդիկը քեզ հետ ունեցած իրանց թշնամութիւնը թողնեն ու բարեկամի աչքով քեզ վերայ մտիկ տա՞ն: Տեսնենք, փորձել ես արդեօք, որ նորանց յաղթես քո մեծահոգութիւնովդ: Կարելի է որ դու քո վարմունքովդ հենց ինքդ ես պատճառ, որ հետդ սառն են վարւում, քեզանից հեռու են պահում իրանց, քեզ հետ մօտիկանալ ու բարեկամաբար վարուիլ չես տեսնում նորանց կողմից: Եթէ որ այդ տեղն ես բերել, քեզ գցել, էլ քո վիճակիցդ ինչո՞ւ ես գանգատվում: քո անմտութիւնիցդ, ունեցած պակասութիւնիցդ ու

սրտիցդ գանգատուիր: Ինքդ ես, որ քեզ համար անախորժ վիճակ ես պատրաստել: Քո ձեռքդ է միայն ամեն բանը փոխել, ու խելօքութիւնով հեռու կենալ այն փուշերից, որ վարդերից անբաժան են: Եթէ որ քո ներկայ հանգամանքիդ մէջ այդ անել չես կարող, ուրիշ դրութեանդ մէջ էլ ձեռքիցդ չի գալ. ինչու որ արտաքին կերպով ես միայն ցոյց տալիս, որ առաջուանը չես, փոխուել ես, բայց փոխուած չես, սիրտդ նոյնն է մնում:

Մարդս այս աշխարհիս մէջ իրանից աւելի իրան մեծ հալածող ու չարչարող չունի: Ուրիշ ոչ ոք չէ կարող մեզ այնչափ ցաւեր պատճառել, որքան որ մենք ինքներս ենք մեզ տանջանքների մէջ քցում մեր կրքերով, մեր ծածուկ մոլութիւններով, կամ մեր սիսալանքներովն, որ բաւական աներեսութիւն ունինք՝ առանց քաշուելով՝ ուրիշներից չը ծածկելու: Նայեցէք այն մարդու վերայ, որ իւր վիճակից, իւր ունեցած հանգամանքներից ու դիրքից գոհ չէ, որ իւր դրութիւնն անիծումէ. ինչպէս է ինքն իրան չարչարում, հազար ու մէկ տանջանքներ տալիս, ու մի մարդ էլ իրան չէ կարողանում ցաւակցիլ՝ իւր անխելքութիւնից: Իւր դժգոհ դժկամ կերպարանքն, իւր տխուր, անհաճոյ նայուածքը հեռու է փախցնում նրանից ուրախ սիրտ ունեցողներին, ու վիրաւորում է սիրտն այն մարդոց, որոնք իւր հետ պէտք է ապրեն: Նա ձանձրացնումէ մեզ իւր արած գանգատներովն, ու միշտ չհաւանելովը, պարսաւելովն այն ամեն բանն, որ իրան պատահումէ: Իւր ծածուկ պատաւասիրութիւնն, ինչ բան էլ որ անի ընդդէմ

իւր կամքին, պէտք է յայտնուի իրան մատնի, և առաւմ է այն մարդուն որին որ պատուել չէ կարող: Ազահ, անկուշտ մարդը դժգոհ է իւր ունեցած վիճակից և արած աշխատանքից, ինչու որ իւր սրտի ուզածի պէս բաւականութիւն չեն տալիս իւր ցան կութեանն ու հակմանն, որ մեծ մեծ բաներ անի ու փայլի մարդոց առաջ: Իւր ցանկութիւնն ու իւր փափագն իրականից դէնն են անց կենում: գորա համար ինքն իրան էլ զանց է անում, իւր անձն էլ անհոգութեան տալի: Անպէտք է դառնում իւր անելու գործերի համար, որ իրան յանձնած են կատարելու, և մենք իրաւունք ենք ունենում չհաւատալու, որ աւելի մեծ արժեք ունեցող խոշոր գործերի մէջ նա պէտք կըգայ ու ձեռքիցը բան կըգայ, քանի որ տեսնում ենք, որ փոքր գործերի մէջ էլ բան չէ բաշարում, ինչպէս որ պէտք է:

Այս, իսկ որ այն վիճակն, որ Աստուած կամեցել է թէ ունենամ բաւական է ինձ տալու, ինչ որ ինձ պէտք է. բաւական է՝ թէ ինձ և թէ իմայիններիս մի քանի լաւ օրեր էլ ունենալու: Ուրեմն անտըրտունջ ու գոհ սրտով վայելեմ, ինչ որ իւր կամքով ինձ պարգևել է երկնաւոր Հայրս, և ոչ թէ Նորա շնորհածն ինձ՝ իմ դժգոհութիւնովս վիացնեմ մի երեխայի նման: Բաւականանամ ու սիրով վայելեմ իմ ունեցած բարիքս, երբոր աւելին չունիմ: Ինչու որ ո՛վ գիտէ թէ՝ ո՛րչափ կեանք կունենամ. ո՛վ է իմանում: ուրախ կըիմնէի՝ արդեօք այն բանով, ինչին որ ցանկանում եմ հասնել: Եւ եթէ որ իմ ունեցած վիճակս ու հանգա-

մանքս իւր անախորժ կողմերն ունի, որ ինձանից հեռու պահել չեմ կարողանում, որչափ էլ խելք ու զգուշութիւն բանեցնեմ, իմ ուրախ ու քաջ սրտով ունեցած վստահութիւնս մի օր վերջապէս կհաշտեցնի ինձ այդ անոխորժութիւնների հետ: Իմ ուրատիս գոհութիւնն իսկապէս տեղական անելու համար՝ կամաց կամաց պէտք է սորվեմ, վարժուիմ ամեն ինձ պատահած բանի մէջ մտածել թէ՝ ի վերուստ է գալիս իմ գլխիս ինչ որ ինձ հետ պատահումէ. ինչ որ լինումէ ինձ, իմ երկնաւոր Հօրիցս է գալիս, որ լոյս է. ուրեմն մի բարի պարզեց պիտի լինի ինձ համար, ինչու որ Աստուծոյ արածն՝ այս՝ միշտ մեր բարւոյն համար է ու բարի է: Այս բանը պէտք է հասկացնեմ և աշխատեմ, որ զգան և իմանան՝ ամեն մի պատահմունքի մէջ՝ իմ բարեկամներս էլ իմ ընտանիքս էլ: Այսպէս է կորցնում՝ ամեն մի չարիք, ամեն մի փարձանք իւր շատ սուր խայթոցն. այսպէս միշտ անզգտոր և զուարթ սիրտ կունենամ: որ ուրախութիւնով տանում է կեանքի հոգսերն՝ որ իւր ունեցած վիճակի պարտականութիւնները կատարում է:

Տկլոր ու աղքատ եկայ ես այս աշխարհս, աղքատ ու մերկ էլ պէտք է թողնեմ ու գուրս գամ: Մի օր ուրիշ բան հետս պէտք է չտանեմ, եթէ ոչ բարի խղճի վկայութիւնն, որ ես իմ կեանքիս ամեն մի հանգամնքի մէջ իմ Փրկչիս Յիսուսի տուած օրինակովը բարի եմ եղել և օգտակար: Ով իմ երկնաւոր Հայր, տօւր ինձ այն շնորհքն, որ այս չփանալու գանձի, այս՝ յաւիտեանս յաւիտենից ինձ

մնալու օրհնութեան ետևից ընկնեմ։ Սորա համար օրհնի՛ իմ ջանքս իմ հոգացողութիւնո՝ Քո անանցանելի սիրոյդ համար։



Ե.

Ի՞նքն իմ ՎերԱՅ ի՛ՇԽԵԼԸ ԿԱՄ Ի՞նքն իմ
ԳԼԽԻ ՏԵՐԸ ԼԻՆԵԼԸ.

Պարտականութիւնը շատ անգամ կանչումէ քեզ պատեռազմի դաշտը քաջութիւններ անելու արիացի՛ր, առ սալաւարտդ ու նիզակդ շողողացող վահանիդ հետ մէկտեղ։ Եւ եթէ հարցանել ես ուզում թէ ուր է՝ քեզ մեծ մեծ վնասներ հասցնելու համար՝ միշտ ուրախ սրտով պատրաստ թշնամիդ, հեռու տեղ մի փնտռեր, քո սրտիդ մէջն է թագ, կաշած, քեզ սպասում. այդ՝ քո վտանգաւոր թշնամիդ մեղքի հրապուրն է, որ մեղքը քաղցրացնումէ քո աչքիդ, որ ցանկանաս ու անես։

Քեզ լաւ պահպանող սաղաւարտդ քո արթուն և զգոյշ մնալը լինի ու աղօթք անելդ. քո նիզակդ՝ փորձութեան, նեղութեանց մէջ ցոյց տուած քաջասրտութիւնդ. Քո վահանդ՝ Աստուծոյդ ապաւինելդ հաստատուն հաւատով ու աներկբայ յուսով։ Միայն անարատ սիրտ ունեցողներն Աստուած կտեսնեն։



Հին ժամանակի կռապաշտ Փիլիսոփաներն անգամ զարմանում էին միտք անելով ու սարսափում

էին, որովհետեւ խելք հասցնել չէին կարողանում թէ՝ ինչպէս բան է, որ մարդիս մէջը չարն ու բարին միշտ միմեանց հակառակ են։ Նոքա զարմանում էին թէ՝ ինչպէս մի և նոյն հողեղէն մարդոց մէջ կան այնպիսիները, որ իրանց ցանկութիւններին, կիրքերին սանձ չգնելով, իրանց ճանապարհից բոլորովին գուրս են գալիս իրանք իրանց կորցնում, իրանք իրանց տակը քանդում և իրանք իրանց սպանում են, և իբրև մարդկային անուանն անարժան ու անարգ մարդիկ գերեզման մտնում։ Նոյնպէս խելքները չէր համում թէ՝ ինչպէս նոյն մահկանացու մարդոց մէջ կան և այնպիսիները, որ կարողանում են իրենց կրքերը զսպել, իրանց վատ ցանկութիւնները չկատարել, մոլութիւններից զգոյշ մնալ երբոր մոլութիւնը միշտ հրապուրում էր նորանց և ամեն անգամ այնտեղ էր հասցնումն որ պիտի յաղթէր. ուրեմն յայտնի երեսումէ, որ այդ մարդիկը միշտ պիտի պատերազմէին, որ չըյաղթուին և իրենց քաջութիւնն էր ամեն անգամն որ կարողանում էին ընդդիմանալ մոլութեան հրապոյրներին, և կարող էին, որովհետեւ իրենց արթուն ու զգոյշ մնալն էր, որ պատերազմելը չէր դժուարացնում և անօրինակ քաջութիւն անելու էր հասցնում նորանց։ Մարդիս մէջ չարն ու բարին միմեանց հակառակ լինելը իրանք իրենց բացատրելու համար, որ մի կերպ հասկանան թէ՝ ինչպէս բան է այս հակառակութիւնը մարդիս մէջն, մի ժամանակ շատերը կարծում էին թէ՝ մարդըս ունի երկու տեսակ հոգի, լուսի հոգի ու խաւարի հոգի։ Կային և այնպիսի մարդիկ որ կար-

ծում էին թէ՝ մարդս ունի իւր մօտն թէ՝ բարի և
թէ չար հրեշտակի, որ իրան բարի՝ կամ չար բանի
են տանում, լաւ՝ կամ վատ բան նորա մտքի մէջ
գնելով։ Այսօր ևս շատերն առում են թէ՝ սատա-
նան է, որ Աստուծոյ թոյլ տալովն, մարդիս դէպի
չարն է տանում, հրապուրելով խաբելով։ Բայց սուրբ
գիրքը ոչնչացնում է այդ մեր բոլորովին ծուռ ու
սխալ կարծիքը։ Ոչ թէ Աստուծոյ է, ասում է նա որ
մեզ թոյլ է տալի չարից փորձուելու, այլ մարդս է
ի՞շ իսկ ցանկութիւնիցն դրդվում, գրիւլում ճղվում ո-
գուցվում։

Մեր զիայտիան բնութիւնիցն են ազբիւրի պէս
բզիսում ու դուրս գալի ամենայն այն սաստիկ ցան-
կութիւններն, հակումներն ու զգացմանքներն, որ
գնալով, գնալով կիրք են գաւնում, վատ ուղղու-
թիւն և ընթացք ստանալով, և մեր բանական հոգու
ձեռքից խում միապետութեան գաւագանն։ Մեր
զգայական բնութիւնիցն են յառաջ գալի այն ան-
սանձ ու կատաղի հակումներն, որ շատ անգամ մեր
խելքի ամենազնիւ կանոններն, մեր հաստատ ու պա-
տուական գիտաւորութիւններն կատարելու խափա-
նում են ու ոչնչացնում։

Չարը մարդիցս է։ Ա.Ձնակառարէու մէր Սուշնդողն
ու Ա.Արուածը՝ միայն բարին է ստեղծել։ Նա՝ Ամենա-
սուրբն՝ մեզ խելքի, բանականութեան օրէնք է տուել
և գրել է մեզ այնպիսի մի աշխարհի մէջ, որ ամեն
տեսակ մեզ գրաւող և մեր վայելչութեանը համար
ստեղծուած անթիւ, անհամար բարիքներ ունի իւր
մէջն։ Մեզ գրաւող ու մեր վայելելու համար իւր

ստեղծած բաների մէջն առաջնորդ ու իշխան տուել
է մեզ ու գրել մեր խելքի ու կամքի ոյժը, որ մենք
ամենայն պարագաների մէջ այն կարողանանք ընտ-
րել ինչ որ ամենաազնիւն է։ Նա մեզ տուել է հոգի,
որ անմահանալու պիտի ջանայ ու ճգնի, տուել է
մեզ նոյնպէս և մարմին, որ հոգիցն է առնուած ու
հող պիտի դառնայ և որ ուրիշ ցանկութիւն չունի
բացի այն բանից, ինչ որ երկրաւոր է, հող գառնա-
լու բան է։ Աստուած տուել է մեզ մեր մարմինն, որ
մեր հոգին նորա վերայ իշխելով, իր ուժը բանացնի
ու զօրանայ։ Եթէ որ մեր մարմնական զգացումներն
զօրեղ ու սաստիկ չլինէին մեր մէջը, մարդս երեք
կատարելութեան չէր ձգտիլ այլ մի յոյլ հանգստու-
թեան մէջ իւր կեանքը կանց կացնէր միշտ թմրած,
քնած գրութեան մէջ։ Անզգայ է քարն բայց որ մե-
զանչել չէ կարող սորա համար մի թէ՝ առաքինի է՝
պիտի ասէինք։ Անբան է կենդանին։ մի թէ նորա
արած յափշտակութիւնն ու պատճառած մահն, ու-
զում եմ ասել ուրիշ կենդանիներ խեղդելի, սպա-
նել, ուտելն Աստուծոյ առաջին հաշուի գնելու չա-
րագործութիւն պիտի համարէինք։

Առանց մեր զգացումների խթանին, մեզ գըր-
գռելուն, զայրանալուն, կատաղելուն, որ խիստ շատ
անգամ մեր հոգու շատ ու շատ լաւ համոզմունք-
ների գէմն են դուրս գալի ու վրդովմունք հանում,
մեր՝ յաւիտենական անմահութեան կոչուած հոգին
իւր ոյժը զօրութիւնը աւելացնելու համար՝ միջոց։
Հնարք չէր ունենար, անկարելի կլինէր մեր հոգուն
ներքին կատարելութեան այն աստիճանին բարձրա-

նալ, հասնել, որ մեզ աստուածութեան է տանում; մօտեցնում: Պատճառ որ մեր ոյժն աւելանում է ոչ թէ մեր անշարժ, հանդարտ մնալովն, այլ աշխատութիւնների, նեղութիւնների, դժուարութիւնների, արգելքների յաղթելով. միայն պարապ չնստելն ու միշտ գործ կատարելն է, որ մեր ոյժն աւելացնում է: Ուր որ կուշաի կազել (կոխ պրծնել) չկայ, այնտեղ յաղթել ևս չկայ:

Անուանի մարդիկն միշտ նոքա են եղել, որոց մտքիցն ինչեր են անց կացել ու սրտներումն ինչեր են եղել, բայց կարողացել են, իմացել են իրանց կառավարելն, որ չյաղթուին իրանց մոքից ու սրտից, թէև շատ դժուար է եղել ամեն անգամ զգուշանալն, դիմանալն ու նոցա ուղածը չանել որչափ ևս անհանգիստ են արել իրանց մտքերն ու զգացումներն: Ասածիս հակառակն ամենալատ չարագործներն այն մարդիկն են եղել, որ իրենց կատաղած զգացումներն ու յատկութիւնները զսպել, բռնել, իրանց լաւ պահել չեն կարողացել, իրանց սանձը, կապը տուել են բոլորովին նոցա ձեռքն ու տարուել են: Մի մարդ կգտնուի՝ արգեօք, որ խելքը գլուխը լինի ու այդ ողորմելի մարդոց վրայ սաստիկ չցաւի, որ իրանք իրանց կորցրել են, բանական մարդոյ կարգից դուրս են եկել բոլորովին: Նոքա ևս այնպիսի ձիրք ու շնորհք ունէին, որ կարող էին իրանց նման մարդոց բարերարներն լինիլ, բայց իրանք էին մեղաւոր, որ իրանց նման մարդոց մէջն ու հետն ապրելու անարժան, բոլորովին անպիտան համարուեցան ու երեսները տեսնել ոչ ոք չէ ուզում:

Մի մեծ բան չէ, իշխանութիւն ձեռքն ունենալով և բռնութիւն, խարդախութիւն, խորամանկութիւն բանեցնելով, ուրիշներին իւր ձեռքի տակը պահէլը, առանց շղթայի կապած, որ շարժ գալչկարողանան ու միայն իւր կամքին հնազանդեն. մարդիս՝ ինքն իրան վրայ իշխանութիւն բանեցնել կարողանալն, ինքն իրան գլխին տէր լինելն է ամենագժուար բանն և այստեղ է յայտնի իմացվում: Որ մարդիս ազատութեան կոչուած, հոգին ամենամեծ յաղթութիւնն է անում ու յաղթանակ կանգնում: Քանի քանի մարդիկ են եղել որ իրենց զօրքերի ուժովն թշնամիներին յաղթել են, բայց իրանց իսկ կիրքերին յաղթել չեն կարողացել. իրանց դած պատուասիրութեանն ծառայ են եղել և իրանց հպարտութեանը՝ գերին: Եղել է մարդ, որ իւր շնչովն, իւր բերանից դուրս եկած խօսքովը միլիօնաւոր մարդիկ է կառավարել, բայց իւր անամնական ցանկութիւններն, ողորմելին, չէ կարողացել սանձել, զսպել, իւր անառակ ցանկութիւնների, իւր բարկութեան, ոխակալ քինախնդրութեան, մնապարծութեան գերին է եղել:

«Ո-ոոի մի նորու-ի, որ մեզի նահանջութիւնները մարդի վերայ, ո- հնազանդէ+ նորա ցանկութիւններին», ասում է մեզ Աստուծոյ խօսքի ձայնը:

Եւ միթէ կայ աշխարհիս վերայ այն քաջասըրտութիւնիցն ևս աւելի բարձր բան, որ մարդս ինքն իրան միշտ իւր իշխանութեան տակն է պահում և որ մաքուր խղճմուանքով մահուան առաջն անգամ դուրս է գալիս առանց վախենալու: Նա իրան ան-

պատութիւն բերող շղթաներով չէ կապկապում։ Նորան անառակութեան հրապոյրներով կամ թէ պատուանուներ ու բարձր աստիճաններ նորա առաջը դնելով, կամ թէ աչքը վախեցնելով, զուր աշխատում այնպէս անել, որ ինքն իրան անհաւատարիմ գոնուի։ Երբէք չմոռանալով իւր մարդկային արժանաւորութիւնն, Քրիստոսի հաւատարիմ ու ճշշմարիտ աշակերտն երբոր իմանումէ, որ իւր սրտից մի վատ ցանկութիւն է ուզում անց կենալ, իսկոյն իւր մէջը խեղդումէ ու մեռցնում։ և ամենեին ըրթողնելով, որ իրան մօտենայ, գնումէ, իւր կեանքի ճանապարհն չփոխելով, անվնաս և ազատ, մի Առտուծոյ նման, և միշտ նոյն մարդն մնալով ու միշտ ինքն իրանից գոհ ու հանգիստ սրտով։

Ով որ ինքն իրան վերայ իշխելն իմանում է, ով որ ինքն իւր գլխի տէրն է, ոչ ոք չէ կարող նորա գլխին տէր գառնալ ու նորա վրայ իշխել։ Նորա անվրազով քութիւնն բարկացած մարդին կհանգարտեցնի կամայ ակամայ։ Նորա անվախութիւնը բըռնակալին անզօր կանի, շուարացնելով։ Նորա համեստութեան առաջին փառասիրութիւնն իւր նշանակութիւնը կկորցնի։ Նորա բարոյական մաքուր կեանքի առաջն, անառակութիւնն ոյժ չի ունենալ։ Նորա ազնիւ հպարտութիւնն՝ խորամանկ կեղծաւորների աչքը կվախեցնի։ Նորա անփոփոխ ճշմարիտ զգացմունքը՝ այն ամենայն մարդոց իրանից հեռու կփախցնի, որ ուզում են փորձել նորան ուղիղ ճանապարհից հանելու։ Ով որ սիրում է և ընդունում ամենի համար դրած Աստուծոյ օրէնքն, նա Քրիստոսի եղբայրն է

և Աստուծոյ արքայսութեանն ժառանգակից։ Իսկ ո՞վ որ օրէնքի մեծ նշանակութիւնը չէ ճանաչում և ընդունում, նա օրէնքի համար մի օտարական մարդ է և օրէնքով գնալու ոչ հասկացողութիւնը և ոչ կարողութիւնն ունի, որովհետեւ չգիտէ թէ, օրէնքն ինչ է և ինքն ինչ պիտի անի կամ չանի։

Ով որ իւր գլխի տէրն է, ուրիշների վրայ ևս տէր է գառնում։ Մշտական, միակերպ ու անփոփոխ իւր խոհականութիւնովը նա ճանաչում է հողեղէն մարդոց արած անխելքութիւններն ու սխալանքներն։ Նա պարզ է տեսնում ու հասկանում մարդոց տեսակ տեսակ խառնաշփոթ ու անկարգ կեանքն ու կրքերն։ Սորա համար այդպիսի մարդի բերանիցը հանած խօսքն, նորա տուած խորհուրդը այնպէս լւէ, որ նորանից աւելին պէտք չէ, ինչու որ նա առանց նախապաշարման, առանց ատելութեան, առանց ուրիշ նպատակներ ունենալու մտածում է ինչպէս իւր այնպէս ևս ուրիշների համար, և ընտրում ու ասում այն, ինչ որ բարին է, ուղիղն ու ճշմարիտը։ Այսպիսի մտածմունք ունեցողիցն է գոյանում մեր սրտի մէջն այն զգացմունքն, որով մենք շատ պատվում ենք ազնիւ մարդին, որ շահասիրութիւնից դրդուած, գործ չէ տեսնում, այլ բարի, ազնիւ և ուղիղ բանն սիրելուցն։ Մարդ հասկանում է նորա խելօք լինելը, և իրան ընդդէմ եկած խօսքին, կամ գործին համար չէ ատում նորան, որովհետեւ տեսնում է, որ առաքինութեան ճանապարհովն է մտածում խօսում ու գործում։ և նորա մարդիս սրտին շատ դիւր գալու մի օիրելի բանն ևս

այն է, որ ամենեին չէ ցոյց տալի ու չէ հասկացը-նում մեզ մի կերպ՝ թէ տեսաք ինչեր կարող եմ անել ինչեր է գալիս ձեռքիցս, այլ համեստ է և ամենեին չէ ուզում, որ մարդ իմանայ իւր արած լաւ գործն:

Ճշմարիտ, իսկական քրիստոնէի պատկերն այս է. պատճառ որ այսպիսի մարդն է միայն Քրիստոսի հաւատարիմ հետեւողն, իսկ իմաստունն և իւր ներքին աշխարհի, ուզում եմ ասել, իւր ինելքն ու սրտին տէրութիւն անողն:

Բայց կարելի՞ բան է, ասումէ մի մարդ, իսելքը բան չկտրելով. « միթէ կարելի է, որ մարդս ինքն իրան յաղթելու այդ բարձր աստիճանին հասնի. : Այդ կատարելութեանը համելու համար՝ մարդս ոչ թէ հողեղէն մարդ պիտի լինէր, այլ ուրիշ մի լաւ տեսակի արարած և ստեղծուած կարգից դուրս ու գերբնական ուժերով»: Ով որ այսպիսի անդիմադրելի դժուարսւթիւններ ցոյց տալու խօսքեր է բերանիցը հանում՝ բոլորովին թուլացած սրտով, նա իբրեւ պատի ունեցող արարած չէ խօսում, այլ իբրեւ մի գերի, որ զգայական զուարծութեանց շղթաներով կապուած է արդէն, դու ամենեին չես կարում մըտքիցդ անդամ՝ անց կացնել, ոչ թէ հասկանալ, որ այդ բանը անկարելի չէ, որովհետեւ այդպէս ես ուզում ցոյց տալ, ինչ է որ ինքդ քեզ գետնով խփելու կորցնելով, բարոյական առաքինի մարդոց հաշուկց դուրս գալդ ես ուզում արդարացնել, բայց կարող ես արդեօք դու քո խայտառակ մարդ լինելու այդ-պիսի հեշտ կերպով ծածկելով ծածկել ու քեզ արդար ցոյց

տալ հոգիների յաւիտենական Դատաւորի առաջին ևս նա ևս կների քո յոյլ թուլութիւնդ, քո կեանքումդ այն միայն սիրելու ու անելու, ինչ սրտիդ գիւր է գալի, ինչ որ քեզ լաւ է թվում ուզում եմ ասել այն քո փափկասիրութիւնդ ու հեշտասիրութիւնդ, որ թողնել չես ուզում քեզ համար մի անտանելի զրկանք համարելով այդ անելու բայց լաւ իմացիր, որ իսկ դոքա են քեզ խեղճացնում ու չեն թողնում քո կրքերիդ դէմ պատերազմելու և յաղթելու: Իրաւ է, դու հողեղէն մարդ ես, բայց միայնգամայն և մի բարձր էակ ես, հասարակ արարած չես, ինչի՞ համար ես թողնում, որ այս զգայական մտքերն քեզ դրգեն, վրդովեն, շարժեն վատ բանը անելու՝ ընդդէմ քո ունեցած համոզմունքիդ, որ լաւն անելն է ցանկանում: — Ի վերուստէ՞ն զօրութիւն ես ուզում ստանալ լաւն անելու համար. բայց փորձել ես արգեօք քո հոգուդ զօրութիւնը, որով աշխարհը ես ծնել: Ով որ ասում է պնդելով թէ անկարելի բան է, որ մարդս ամեն ժամանակ իւր անձն իւր ձեռքն ունենայ, միշտ իւր գլխի տէրը լինի, այնպիսի մարդը կիսով չափ (կէս) կորած է: Մարդու, ինչ որ կամածը կայ, միշտ կարող է անել, երբոր նա այն է միայն ցանկանում լինել, ինչ որ մի բանական, Աստուածանից յառաջ եկած արարած պիտի լինի:

Առաջին քայլը, կամ գլխաւոր բանը, որ պէտք է անենք մեր գլխի տէրը լինելու միջոցը ձեռք բերելու համար, ՆԵՐ ԷՆԿԱՌԱՆԿԱՆ ԱՆԿԱՌԱՆԿԱՆ ՏԵՐ ՊԱՎ ԳԱՆԵԼ Է, որ ինքներս մեզ ճանաչենք ու հասկանանք թէ՝ ինչ բնութեան տէր ենք ու ինչ ինչ յատ-

կութիւններ ունինք: Նատ գիւրագրգիւլինելուց՝ մենք շուտ տաքացող, բարկացող ենք լինում: շուտ տըրտմող, հեշտ ուրախացող, հեշտ ու շուտ մարմնական ցանկութիւնների տարուող, մի խօսքով, մեր բնութիւնը խազաղ, անվրդով, հաստատ, միակերպ չէ, այլ հեշտ ու շուտ այսպէս կամ այնպէս փոխուող: Այդպիսի բնութեան տէր մարդն այն ևս ունի, որ մի տեսակ թուլութիւն կայ վրան, որով յոյլ սիրտ չանող ու շատ բանից վախեցող է լինում: Իմանալով, որ մենք կերպարանքով սիրուն ենք՝ սնապարձ ենք լինում: Իմանալով, որ մեք մարմնով տկար ենք, վախկոտ, խորամանկ ու չարասէր ենք լինում: Խոկ երբոր գիտենք, որ մեր մէջ ոյժ, զօրութիւն կայ, հպարտ՝ հակառակող ու խիստ ենք լինում: Հազար ու մի տեսակ բնութեան տէր մարդիկ կան աշխարհում, որ մին մինի չեն նմանում: բայց իւր բնութեան առանձին յատկութիւններն պարզ ճանաչելու համար՝ միշտ առաջին և ամենահարկաւոր բանն՝ իւր գլխի տէրը լինելն է, ինքն իրան ոանձել, զըսպելն է:

Մեր ցանկութիւններից այնպէսները կան, որ սակայն են յառաջ գալիս: Արբեցոր (խմազ մարզը) առաջ սիրում էր գինին, բայց չափով էր խըմում: որ ուրախութիւն անի, ուրախ ժամանակ անց կացնի: Բայց գինուն սորվելով և իրան գիւր գալով՝ սովորութիւն արաւ սիրան ուզած ժամանակն խմել, այսպէսով ամեն օր ևս սիրոն ուզում էր և պէտք էր խմեր, առանց գինու այլ ևս չէր կարող մնալ: Սի ժամանակից յետոյ հերիք չեկաւ այնքանը, որ-

քանը որ սովորաբար խմում էր, ստիպուեցաւ չափը շատ աւելացնել:

Զինի նէ որ և իցե բան +եզ սովորաբար անեն, լուսուն լին լին վասար կէտքի +եզ, տանի որ անվասար բան է արդէն այն պատճառով, որ սովորութիւն անելուդ համար արտաքին աշխարհից կախումն ես ունենում, որ յառաջ չունէիր: Բայց ուր որ կախումն ունենալը կայ, այնտեղ ազատութիւնդ կորա՛: Ուր որ գու քեզ համար միս ու արիւն դարձած մի պէտքիդ հնազանդել ու կատարել ստիպուեցար և այն տեղը հասցրիր բանը, որ, ինչ ուզում է լինի, այն քեզ պէտք բանը պիտի անես, չանել չես կարող, անհնարին բան է, — այլ ևս ինչպէս պիտի կարողանաս այնուհետեւ քո գլխիդ տէրը լինել, ինքնդ քեզ զսպել սահնձել, Ոչ մի բան քեզ սովորութիւն մի անիլ ու մեծ ցաւեր ամենեին չես քաշիլ եթէ առաջ, կամ յետոյ մի բանի կարօտութիւն ևս զգալու լինիս: Այն աչքով մի մտիկ տար աշխարհիս որ և իցէ բանի վրայ, որ մտքումդ գնես թէ՝ միշտ քոնդ կլինի, միշտ կունենաս, կամ ձեռքիցդ չի գնալ: այլ այն աչքով նայիր աշխարհիս տմէն մի բանի վրայ, որ թէ՝ քեզ և թէ՝ ուրիշին մնալու չէ: Եթէ այդ սրտով այդ խելքով ապրես, ինչ ևս որ կորցնես, այնչափ չես ցաւիլ, որ ինքնդ քեզ ևս՝ կորցրածիդ հետն կորցնես: ասածիս պէս որ ապրելու լինիս երբէք քեզ այն տեղը չես հասցնիլ, որ քո սովորած բանդ ձեռք բերելու, ունենալու համար մի ծուռ բան անես:

Չեմ ասում թէ՝ քրիստոնեան ամեն վայելչու-

թիւններիցն, ամեն ուրախութիւններիցն ևս իրան պէտք է զրկի: Մեր կեանքն լաւ անց կացնելու համար՝ մեզ տեսակ տեսակ ուրախութիւն բերող բաները պարզեռող մեր երկնաւոր Հայրն ամեննեին չէ կամենում, որ մենք տրտում-տխուր ապրինք, միշտ թթուած երեսով լինինք, մեր սիրալ չբացուի. ընդ հակառակն նա կամենում է, որ մենք ուրախացողների հետն ուրախանանք: Աշխարհիո մէջ ինչ որ մեր սրտին դիւր է գալի, մեր կեանքն աւելի է քաղցրացնում ու մենք մեզ բաղդաւոր ենք զգում, ուրախանալով: Բայց միշտ և ամեն տեղ մենք պիտի իմանանք մեր ցանկութիւններին չափ ու սահման դնելն, երբոր մի աւելի բարձր պարտականութիւն կայ մեր առաջին՝ կատարելու: Մեր մարմնաւոր ցանկութիւնները պէտք չէ մեր մէջը սպանենք, այլ չափաւորենք, զսպենք, սանձենք, որ, դէպի վատը փոխուելով, չմեծանան, չզօրանան կիրքեր չդառնան: Ով որ, երբ ուզում է լինի, միշտ կարող է իւր ցանկութիւնները զսպել, որ իրան ճշմարտութեան ու առաքինութեան ճանապարհից մի մազի չափ ևս գուրս հանել չկարողանան, այն մարդը յաղթութեան թագը ձեռք բերեց ու իւր գլուխը դրեց այն ճարդն իւր դլիք արէն է:

Որովհետեւ Աստուծոյ նման լինելը քո նպատակը է, ով հողեղէն մարդ, ուրեմն քո ամեն կարիքներդ (ինչ ինչ բանի ևս, որ կարօտութիւն, կամ ցանկութիւն ունիս) կարգով մին մին քննիր, և ամեն մի քեզ հարկաւոր եղած՝ բանին համար ինքդ քեզ հարցուր թէ՝ քո կամքդ է, քո ձեռքդ է այս կամ այն բանին կարօտութիւն կամ ցանկութիւն, ունե-

նալդ, թէ՝ այս, այն բանն է քո կամքիդ տէրն, քեզ անել է տալի ուզեցածն ու չես կարող չանել: Մի ինքդ քո մէջդ ծանր ու թեթև արա թէ՝ չէիր կարող արդեօք ու դժուար կլինէր առանց նորան ևս կառավարուիլ կարող ես արդեօք ձեռք քաշել մտքիցդ հանել, դէն ձգել ու սրտիդ ուրախութիւնն ու հանգստութիւնը դորա համար չկորցնել, միտք անելով թէ՝ վայ, ինչի՞ այդ բանին չհասնէի, ինչի՞ այն բանն չունենայի, ինչի՞ այն ցանկութիւնս չկատարէի, կարող էի, իմ ձեռքս էր, իմ կամքս էր, ինչի՞ ինքս չկամեցայ, ինքս ինձ կարօտ թողեցի, զըրկեցի. ուրիշներից ինչ պակաս մարդ էի, որ ես ես նոցա ունեցածները վայելածները չունենայի, չվայելէի. եթէ բանն այդտեղ ես հասցնելու, աւելի լաւ է սրտիդ հանգստութիւնը, մոքիդ անդորրութիւնը չկորցնես. բայց սովորիր քո կամքովդ, որ և իցէ բանը չունենալով, կառավարուելու, լաւ իմացիր, որ ոչ մի բան միշտ քեզ մնալու չէ. քեզ համար ամենաթանկարդին բանին բանիցն անգամ, քո սրտիդ ամենամօտ ու կագին բանիցն անգամ այսօր է՝ թէ էգուց՝ շատ սիրելի մարդիցն անգամ այսօր է՝ թէ էգուց՝ մի ամսից՝ թէ քանի տարիներից յետոյ անպատճառ պիտի զրկուիս: Քրիստոնեան ամեն մի ուրախութիւնը կարող է իրան համարել բայց չպիտի ասի թէ՝ առանց ուրախութեան կեանքս կեանք լինիլ. եթէ տխուր օրեր պիտի անցկացնեմ, մեռնեմ լաւ է, քան թէ ապրիմ: Քրիստոնեան, եթէ հաստատ ու կենդանի հաւատ ունեցող, ճշմարիտ քրիստոնեայ է, մի՛ և ոչ աւելին բայց շատ մեծ, շատ բարձր կարօտութիւն, կարիք պէտք է ունենայ: այս այնպիսի

կարիք է, առանց որոյ շունչ քաշել պիտի չցանկանար, այս ամենավսեմ կարիքն՝ առաքինութիւնն է, մարդիս գիտենալն է, որ Քրիստոսի մեզ աւանդածուսման համեմատ ենք ապրում ու մեր միակ փափագն է Աստուծոյ նման լինելու:

Յիրաւի կրօն ասած մի սնոտի, մի ունայն բան կլինէր, առաքինութիւնն ևս մի դատարկ խօսք, եթէ որ մեր սրտից անց կացած ամեն մի ցանկութիւնն իսկոյն կատարուէր, եթէ որ առանց ջանքի և աշխատութեան կատարելութեան պառողը քաղել կարողանայինք: Ինչպէս որ մենք մեր երեսի քրտինքովը պիտի ձեռք բերենք մեր օրական հացն, այնպէս ևս շատ ազնիւ աշխատութիւն պէտք է մեր կողմանէ և անդադար ետելից ընկնել՝ միշտ կոռւելով աշխարհի ու մեր անձի հետ, որ ձեռք բերենք այս անգին գանձը, որ մեր խղճմտանքի խաղաղութիւնն, հանգըստութիւնն է, Աստուծոյ հետ հաշտ լինելն է, նորանից սիրուիլն ու նորան ամենայն սրտով մեր սիրելն է, որ մեր գլխի տէրը լինելովը, ինքներս մեզ զսպելովն է գլուխ գալի:

Եթէ որ փոքր բան չես համարում ինքնդ քո գլխիդ տէր լինելը, ոչ թէ ցանկութիւններիդ խաղամքը լինելը, որ քեզ տեսակ տեսակ վնասների, փորձանքների, վտանգների ու անբաղդութիւնների մէջ ձգելուց ջոկ՝ ոչ մի շահ ու բաղդաւորութիւն պիտի չբերեն քեզ. եթէ սրտով ուզում ես քո գլխիդ, քո խելքիդ, քո ճշմարիտ քրիստոնէական կամքի տէրը լինելդ սկսիր այս տեղից, առաջ հեռացուք քեզանից այն ամեն բանն, ինչ որ քո մէջդ արդէն զօրացած:

ցանկութիւն է գարձել ու քեզ կարող է անհանգիստ անել, քեզ գրգռելով: Հեռու պահիր քեզ այն ամեն բանից, ինչ որ քո սրտիդ մէջ ցանկութիւն է շարժում ու վառել ուզում, ինչ որ բարկութիւնդ է շարժում ու ինչ որ քո սնապարծութեանդ գիւր է գալի: Փախիր փորձութիւնիցդ՝ ու խելքդ գլխիդ կմնայ, ազատութիւնդ ևս կորուսած չես լինիր:

Զգոյշ պահիր քեզ երևակայութիւններ անելուց՝ ու մի թողուր, որ իւր ձեռնածուի (եալանչի փահլեվանի) խաղերը խաղայ քո մտքիդ մէջն, այն տեսակ իւր խաղերն, որ քո մէջդ թմրած գիծ ու միժկամ ծուռ մտքերդ ու վատ ցանկութիւններդ զարթեցնեն. Երբոր տեսնումես, որ այդ երևակայութիւնդ քեզ գլխիցդ ու ճամբիցդ ուզում է հանիմտքիցդ քշիր, հեռացուր, որ քեզ չկարողանայ կախարգել, որոգայթի մէջ ձգել ուրիշ բաների վրայ մտածիր, որտեղ որ ես, այնտեղից գուրս եկ, ուրիշ տեղ գնա՛. Եթէ մարդիկ են, քանի հոգի միասին հաւաքուած, նոցանից հեռացիր. մի օգտակար, վրան մտածելու մի պարապմունքի կպիր, միտքդ բեր Աստուածդ, միտքդ բեր յաւիտենական կեանքը, միտքդ բեր մահուանդ օրը ժամն ու րոպէ՞ն, քո ծնողքդ, արենակիցդ, միտքդ բեր քո սրտիդ սիրեկաններդ, որ այն կեանքումն քեզ են սպասում: Միաքդ բերելու իսկ ժամանակն է նոյնպէս այն, ինչ որ երբէք մտքից պիտի չձգես, մոռանաս. թէ դու Աստուծոյ զաւակը լինելու բարձր արժանաւորութիւնը պէտք է ունենաս, որ նորա սիրելի զաւակը լինիս, ինչպէս որ իսկ կոչումնդ է:

Սուրբ սրտով աչքով գէպի երկինքը ձգելով, ամեն օր դուքս եկ գործիդ, որ քո կեանքիդ մէջը կատարում ես, ամեն երեկոյ ևս աշխարհից յետ քաշուիր, միայնացիր քո ննջարանումդ։ Զլինի թէ մի մարդ երբ և իցէ իմանայ քո թոյլ կողմդ, որով կարելի է քեզ հեշտ յաղթել, եթէ որ յայտնուեցաւ թոյլ կողմդ, իմացիր, որ չար մարդոց խաղալիքը դարձար. Հետդ պէտք է ընկնեն, երբոր սիրտներն ուզի՝ ու վրադ ծիծաղեն։ Զլինի որ երբ և իցէ՝ քո վատ ցանկութիւններիդ ձեռքն ընկնես ու բռնուես, քո գլխիդ տէրը քո մէջդ միայն դու ինքնդ լինիս. ոչ մի կիրք, ոչ մի չար ցանկութիւն չկարողանայ բարձրանալ ու քո բանականութեանդ թափաւորական աթոռը նստիլ։ Ով որ ամենայն հանգամանաց մէջ միշտ ինքն իրանն է, ինքն իրանից չէ օտարացել, աշխարհքըն ևս նորանն է։ Նա ունեոր է, ինչու որ ոչ մի մարդ չէ կարող նորանից մի բան խլել, որ առանց նորան ևս ինքն չկառավարուի. Նա զօրաւոր մարդ է, ինչու որ ոչ մի մարդից կախումն չունի. պատճառ որ այնպիսի մի վատ գործ միտքը չէ գալի. որ ինքն արած լինի ու իւր այն գործիցը վախենայ. Նա ազատ է, համարձակ, ճակատը բաց, ինչու որ իւր բարձր հոգին գերի չէ որ և իցէ՝ սովորութիւնի, որ արած լինի ու յետ կենալ չկարողանայ. Նորա համար անհրաժեշտ պէտք, կարիք ասած բանը չկայ, ինչպէս որ շատ մարդիկ շատ տեսակ պէտքեր, կարիքներ ունին, առանց որոց ապրելը իրենց համար մեծ ու անտանելի զրկանք կհամարին. Նա մի բան որ ասում է, մի բան որ անում է, այս՝ այն մտքով, այս՝ այն

նպատակը ունենալուն համար չէ անում. Նա այս աշխարհի վրայ ապրած ժամանակն արդէն երջանիկ է, ինչու որ երկինքն իւր սրտի, իւր հոգւոյ մէջն է։ Ան մինչեւ հիմա ես որտեղ էի, ի՞նչ բանի վրայ էի. ինչու համար երջանիկ չէի, որ պիտի լինէի և կարող էի լինել Աստուծոյ օգնութիւնովն, ինչու երջանիկ չեղայ թէե ասում եմ, բայց մեղքն իմն է, պակասութիւնն ինձանումն է այն պատճառով, որ ես գեռ ևս իմ գլխի տէրը լինել չէի կարողանում, գեռ ևս շատ էր պատահում ինձ, որ իմ բուռն կրքերից յաղթվում էի ու նոցա ձեռքը գերի լինում. ոչ թէ ես էի կառավարում իմ ցանկութիւններս, կարգի՝ կանոնի տակ պահելով, այլ ընդ հակառակն իմ ցանկութիւններս էին ինձ կառավարում, իրենց կամեցած կանոնովն ինձ զգալ մտածել, խօսել գործել տալով ու ինձ վրայ իշխանութիւն բանեցնելով ու, վայ ինձ, քանի քանի անգամ են ինձ գառն արտասուք թափել տուել քանի քանի անգամ սաստիկ փոշիմանելուս պատճառն եղել որ իրենց ուզեցածովն արել եմ, ինչ որ արել եմ։ Ամենագէտ իմ երկնաւոր Հայր, քեզ ամեն բան յայտնի է, լաւ յայտնի է նոյնպէս, որ ես տկար արարած եմ։ Ես չաշխատեցի՝ այո՛ որ աւելի կատարեալ լինիմ. Ես ուրիշների օրինակին հետեւելով, նոցա նմանեցի, նոցանից յետ չմնացի ու շատ անգամ խաբուեցայ, շատ անգամ մխալուեցայ, մեղանցեցի։ Ես իմ զգայական ցանկութիւններիս քաջութիւնով ընդգէմ կանգնելու տեղն, սրտովս թուլացայ ու նոքա մրրիկի նման իմ ճանապարհս կորց-

մանակք. ով որ լաւ չէ չարչարուել, ով որ շատ նեղութիւններ չէ տեսել, նա ուրախութիւն ես չի վայելել:

Փորձառութիւնը՝ կեանքի լորժապետն է, խոհականութիւնը՝ (խոհեմութիւնը) խելօք մարդի ճրագըն է: Եւ ուր որ փորձառութիւնն ու խոհականութիւնը միանումեն Քրիստոսի հոգու հետ՝ բարեբազդ իմաստութիւնի ու իմաստուն բաղդաւորութիւնի պայմաններն այնտեղ են կատարուած տեսնվում:

Ընդհանրապէս պիտի զարմանայ մարդս, որ քիչ մահկանացուք են կեանքի խսկապէս անխոռվ ուրախութիւն վայելում, թէւ ոչ մի բանի ետեից այնչափ չեն ընկնում, ջանք, աշխատութիւն չմնայելով, ինչպէս որ հետեռումեն իսկապէս անվրդով ուրախ կեանք ունենալու: Մարդ պիտի զարմացած, ապշած մնայ, թէ ամեն մի մահկանացուի՝ իւր աչքի առաջին դրած ամենօրուայ նպատակն այդ է, որի ետեւիցն է ընկած հոգւով, մարմնով՝ առաւօտուանից մինչև երեկոյ բան ու գործ է արել այդ բանին հասնելու: Բայց և այնպէս ձեռքիցը շատ քիչ բան է գալի. այդ իւր ցանկութեանն հասնելու: Ինչի՞ն է, որ բանն այնպէս անյաջող է գնում ու իւր ուղեցածի հակառակն է գուրս գալիս, կարող ենք խելք հասցնել այս բանին, ու մի կերպ՝ պատճառը հտականակք, թէ՝ շատ գիտար է այդ բանը մեզ հասկանալու ու մեր խելքի բանը չէ, որքան ևս գլուխ կոտրենք: Մի կարծիր թէ՝ այդ բանը հասկանալն անկարելի է ու մաքիցդ պէտք է հանես առանց զուրտեղը գլուխդ ցաւացնելու, բանը ձախ գալը քեզ

պարզեցնելու ու աջի բերելու համար, ահա ի՞նչ է քեզ հարկաւոր անել՝ ու հաւատա, որ սուտ չեմ խօսում, ու ասածս դուրս կգայ անպատճառ: Քեզ պէտք բանն այդտեղ այն է, որ հաստատ կամք ունենաս, հաստատ մտքումդ դնես մի և նոյն ժամանակ՝ ոչ մի բանի տեղ չդնել այն ամենայն արգելքներն, որ խափանում են ու չեն թողնում քեզ քոցանկութիւնիդ հասնելու, որ սրտի հանգստութիւն ունենաս ու անպատճառ բաղդաւոր կլինիս: Կամ՝ կարելի է կարծես, որ շատ ուսումն մեծ գիտութիւն պէտք է ունենայ մարդս, որ կարողանայ խելք հասցնել այն միջոցներին, որ պէտք է ձեռք բերի մի տեղական ուրախութիւն մեր սրտի մէջը հաստատ կերպով ունենալու համար: Այդ ևս չէ. դորա համար մեծ ուսումն ունենալ շատ կարդացած մարդ լինել ևս չէ հարկաւոր: Սուրբ գիրքը, կաղինի կամ կորիզի մէջը հանել ու մեզ տալու նման՝ տալիս է մեզ աշխարհքիս ամեն փորձառութիւնների միջուկն այս կարմ խօսքերի մէջն թէ՝ Աշխարհ Դուռ արակ:

Ամեն բան, մեր արած գործերի ամենավոքը բանն անգամ, իւր հետեանքներն ունի, որ շատ անգամ ոչ մեր աչքին է ընկնում, և ոչ փոխել ենք կարող, որչափ ևո ուզենանք. այդ հետեանքները կամ մեր արածիցը դուրս եկած բաները կրկն պատճառ են դառնում ու ներգործութիւն ունենում ևս ուրիշ բաներ գուրս գալու վրայ, որ մենք չէինք կարծել թէ այդպէս բան կարող է լինել: Աշխարհիս այս օրուայ գրութիւնը, ազգերի այսօրուայ ունեցած վիճակն, որոյ մէջ գտնվումեն, այս՝ այն գերդաս-

տանի դրութիւնն՝ որ ունի այս՝ այն մարդի՝ այս ու այնպէս լինելն՝ յառաջ է գալի՝ իբրև ներգործութիւն ու գործ՝ անցած տարիներիցն ու դարերիցն։ Այս օրուանու մէջ ինչ որ պատահումէ, լինում է, եկող օրերումն անպատճառ պիտի երեկի հետեանքն ու մենք պարզ պէտք է հասկանանք թէ այս օրուայ մեզ պատահածիցը դուրս եկաւ, ինչ որ տեսնում ենք յետուայ օրերումը։ Այս օրուան կարձատեսութիւնդ ու անզգուշութիւնդ է, որ կարելի է, կարճ միջոցում քեզ աղքատացնում է, կամ տռաջին պատճառն է շուտ մեռնելուդ, կամ մի ծանր հիւանդութեանդ։ Մի բարի, մի լաւ խօսք՝ որ այսօր բերանիցդ դուրս ես հանում, մի բարի գործ՝ որ այսօր անում ես, պատճառ է լինում, որ քեզ լաւ են ընդունում այնտեղ որ մոքիցդ չէիր անց կացնիլ այդպիսի պատիւ ստանալու, կամ մի օգնութիւն ստանալուդ այնտեղից, որ չէիր կարծիլ։ կամ մի սրտանց բարեկամ քեզ օգնելու, որ քեզ ամենեին յայտնի չէր ու ամենեին չէիր կարծիլ, որ արժանացած ես նորա այդպիսի անկեղծ ու սրտացաւ բարեկամութեան։

Ամեն բան, թէ աշխարհիս մէջ ստեղծուած բառների մէջն ու թէ մահկանացու մարդոց ունեցած վիճակների մէջն, ամենն ևս յառաջ եղածիցն յառաջ եկած պատճառներ ու ներգործութիւններ են, մին մինի հետ շղթայի պէս կապուած պատահմունքներ են, որի մինը՝ միշտ միւսի պատճառն է դառնում։ Այսպէս է լինում, որ ամենեին բանի տեղ չդրած և ամենափոքրիկ բաներից դուրս են գալիս

ամենամեծ նշանակութիւն ունեցող հանգամանքներ։ որ ներգործութիւն են ունենում ու փոխվում, ուրիշ կերպ լինում բոլորպին՝ թէ մի ամբողջ, թէ բոլոր մի հասարակութիւնի, մի քաղաքի ողջ ժողովուրդ, թէ մի ամբողջ ազգեր, և վերջապէս՝ բոլոր աշխարհիս այս՝ այն մեծ կտորներն։ Եթէ որ մարդամենատես Աստուծոյ նման՝ ամեն բան կարողանար իւր աչքիցը չփախցնել, ամեն բան իւր աչքի տակիցն անց կենար, այն ժամանակ կտեսնէր ու կիմանար, որ ոչ մի մեր արած բանի վրայ պէտք չէ այն աչքով մտիկ տանք թէ, ոչինչ բան է, այնպէս անց կկենայ, կգնայ, որ մի նշանը չերելիլ այլ լաւ կիմանար, որ ամեն մի շատ պզտիկ բանն, որ մենք անում ենք, մի մի սերմեր են, որ մենք ցանում ենք, և պէտք է ժամանակին գուրս գան ու աճեն, թէպէտ մենք այդ բանը մեր մոքից ամենեին չենք անց կացնում։

Միայն այս բանը մենք հաստատ գիտենք ու առաջուածից կարող ենք ասել թէ՝ ինչ որ մեր արածների մէջն ընդգէմ չէ Աստուծոյ օրէնքներին, ընութեան կամ աշխարհիս մէջ ստեղծողի դրած կարգ ու կանոններին ու մեր խելքի րնդունած ճշմարտութիւններին, աներեւոյթ տիեզերքի հետ ունեցած ներդաշնակութիւննով՝ բարերար ներգործութիւն կունենայ անխոտոր անսխալ կերպով։ և լնդհակառակն՝ ինչ որ ընդգէմ է մեր՝ կամ ուրիշների վրայ, շուտ՝ թէ ուշ, մեծ՝ թէ պզտիկ՝ վատ ազգեցութիւն կունենայ՝ ու պիտի ունենայ միշտ։

Այս զիս-շունկուն ունենալու համար՝ ինչ որ անես, պէտք է միտ անես նէ՝ վերջն ինչ էլլիս Ոչ թէ միայն

քո սրտէն արած գործիցդ, այլ մինչև անգամ քո սրտիդ խոր տեղերումն ծածկած, թագցրած ցանկութիւններիցդ ևս պէտք է իմանաս ապագայում յառաջ եկած վատութիւնն կամ լաւութիւնն։ Ամեն մի մահկանացու մարդ ունի իւր սրտումն իրան յայտնի ցանկութիւններ։ կան մարդիկ, որ Աստուած են աղաջում ջերմեռանդն սրտով, որ իրենց աղօթքն լսի ու կատարի, կամես թէ իրանց բոլոր բաղդաւորութիւնը միայն գորանումն է։ Եւ երբոր տեսնում են, որ Աստուած նոցա տաք սրտով արած աղօթքն չէ լսում կամ երբոր իրանց արած խնդըրքի հակառակն է պատահում; իրանց սրտի մեծ տըխրութիւն է բերում, ինչու որ այդ կերպ նոցա ցանկութիւնն, որոյ համար Աստուած էին աղաղակել. այն ժամանակն ինչպէս նոցա սիրտը կոտրվում է, ինչպէս ձեռքները թուլանում է ու իրանք բոլորովին մոլորվում են, մնում։ ինչպէս Աստուածոյ երեսից ընկած են համարում իրանց ու իրանց մտքումն ասում են թէ՝ Աստուած մեզ աչքիցը ձգել է, մեզանից ձեռք է վեր առել. կամ թէ՝ տեսնելով, որ իրենց աղաջանքը չկատարուեց, տարակուսած մնում են ու մտածում թէ՝ նախախնամութիւն արդեօք կա՞յ. բայց նորանց խնդրուածքի չկատարուիլը՝ անկասկած՝ Աստուածոյ մի յաջողութիւն էր թէ՝ նորանց և թէ ուրիշների բարօրութեանն համար։ Մի լաւ մտածիր յառաջ, երբոր Աստուածոյ աղօթք ես անում այս՝ այն ցանկութիւնդ կատարելու համար, թէ՝ ինչ դուրս կգայ քո խնդիրք կատարուելուցը, եթէ Աստուած կամեցել է, որ քո ցանկութիւնդ քո խնդիրք կա-

տարուի։ Կարելի է, որ դու Աստուածանից մի մեծ կարողութիւն ես խնդրում քեզ համար, որ անհոգս ապրես. բայց ինքդ քեզ լաւ չես ճանաչում։ կարելի է որ՝ այն ժամանակն դու քեզ նման մարդոց բարւոյն համար ամենեին չէիր մտածել, ու չէիր աշխատիլ, ունեցած ոյժդ, կուզէիր, որ քիչ բանեցնես. հարստութեանդ մէջ առաքինութիւնիցդ կժուլանայիր. քո զգացմունքիդ ունայնասիրութիւնը քեզ ճամբիցդ կհանէր, կմոլորեցնէր։ Գոհ կեանք ունենալու։ գոհ սրտով ապրելու համար՝ դիզած հարստութիւն չէ հարկաւոր, այլ բարեպաշտութիւն ու սակաւապետութիւն (քիչով բաւականանալ)։ Կարելի է, որ շատ ևս չես ապրելու։ Գո բոլոր ունեցած չունեցածդ, քո բոլոր հարստութիւնդ ուրիշներին ժառանգութիւն կմնայ, կարելի է որ՝ իսկ քո զաւակներիդ, որսնց Աստուածոյ իմաստուն տեսչութիւնը՝ իրանց ունեցած շնորհքներին համեմատ, իրանց՝ ինչ մտքի տէր լինելուն համեմատ՝ մի բոլորովին ուրիշ վիճակի մէջ լինել է որոշել, և անշուշտ աւելի լաւ վիճակի քան թէ դու քո սահմանափակ խելքովդ միտք անել և գտնել կարող էիր նորանց համար։

Ո՛րքան ևս անմեղ, որքան ևս պզտիկ ցանկութիւններ ունենաս, ու ո՛րքան արդար ու իրաւացի ևս երեխն քեզ քո ունեցած ցանկութիւններդ, մտածիր թէ՝ նորանցից ինչ դուրս կարող է գալ, թէ որ կատարուին։ Մի օրը՝ միւսին նման չէ։ Ինչ որ քեզ այսօր՝ շատ լաւ բան է երեւում ու մեծագոյն բարիք, կարելի է էգուց դու մտքիցդ դէն ձգես իբրև վաստան. և ինչ որ մի ժամանակ քեզ մեծ անյաշողու-

թիւն կամ ձախորդութիւն էր երեւում ու գաճգատում էիր՝ գլխիդ վայ տալով, յետոյ փառք տալով կընդունես իբրև Աստուծոյ ողորմութիւն ու շնորհք։ Դու առաջուանից չես կարող իմանալ թէ՝ ինչ կլինի, քո խելքդ կարճ է, հեռու չէ համնում։ Բայց Աստուծ, որ աշխարհիս կառավարողն է, իրան ամեն բան լաւ յայտնի է։ Կարելի է, որ դու աղաջանք, պաղատանք էիր անում, արտասուք թափելով շրթունքդ դողացնելով, որ քո մօրդ, հօրդ, քո հոգով սիրած բարեկամիդ կեանքին իմայի ու ողորմի—բայց կարելի է, որ շատ ժամանակ չի անց կենալ, որ Դու Աստուծոյ շնորհակալ կլինիս, որ ցոյց չտուեց նորանց այս՝ այն սարսափելի պատահմունքը՝ ու ժամանակով իւր մօտն առաւ, տարաւ։

Սոյս համար ասսում է՞ ո՞ւ, « մինչև անդամ մի ցանկութիւն, որ ունեցար, իսկայն միտ այս նէ՝ նարանից ինչ կարող է դուրս գուլ, ու դու աւելի չափաւոր կլինիս այն բանի մէջն, ինչ որ սրտանց ուզում ես կատարուի. աւելի գոհ կլինիս այն վիճակովդ, որ քո երկնաւոր Հայրդ քեզ արժան է տեսել. քո մարդկային թուլութիւններդ ճանաչելով ու բոլորովին հաւատով ու յանձնուելով քո Ստեղծողիդ, կաւելացնես քո ինգիրքիդ վրայ աղօթքումդ թէ՝ « Հայր, իմ կամքս չլինի, այլ քունդ»։ Եւ յիրաւի ով որ իրան այնաեղն է հասցրել, որ չափաւոր լինի իւր ցանկւթիւնների մէջն՝ ու ամենայն բան Աստուծոյ յանձնի, որ իւր իմաստուն կառավարութիւնովն ամեն բան ի բարին է առաջնորդում, այնպիսի մարդն ազնիւ հնազանդութիւնով միաբանելով Աստուծոյ կամքի

հետն ու այնով բաւականանալով, ինչի որ միանգամ իւր երկնաւոր Հայրն արժան է տեսել իրան, — այդպիսի մարդն, ասում եմ ճշմարիտ բաղդաւորութեան գրան մօտն է կանգնած. այդպիսի մարդն՝ Ցիսուսի հոգւովն է ապրում։

Վերջը ճառժէ՞ ։ Եթէ որ այդ անես, քո անըզգուշութիւնովդ ընկել քեզ դժուար կպատահի. բայց կարող է պատահել, որ դու ապագայի համար մըտքումդ դրած այս՝ այն փոխես, որ սաստիկ ցանկութիւններիցդ տարուած՝ անում ես։ Ոչ մի ժամանակ այնչափ աւելի ուշադրութիւն չպիտի դարձնենք մեր մոքումը դրած բանի ունենալու հետեւանքների վրայ, քան թէ այն ժամանակն, որ արդէն ուզում ենք մեր մոքինը կատարենք։ Երբոր բանը բանից անց կացաւ, խօսքը բերանից դուրս եկաւ՝ պրծաւ, գործն իւր ճանապարհն ընկաւ, այն ժամանակ մեր միուք բերելն թէ՝ այս՝ այն բանն մեր բռնած գործի տակից դուրս կգայ, այն նշանակութիւնը միայն կունենայ, որ մեր ունեցած վախը կաւելացնի։ Թեթեամիտ մարդը մի բան անում է առաջուանից չմտածած, չկշռած։ ամեն կիրք ևս իւր հետն իւր թեթեամտութիւնն ունի։ Զգուշաւորութիւնն, խոհականութիւնն՝ ընդհակառակն՝ մինչեւ որ ամեն կողմից չաւ չմտածի ու չկշռի իւր այն բանն, ինչ որ ուզում է անիս գործի ձեռքը չտալ, Նատ անգամ՝ մեզ այնպէս է երեւում թէ՝ մեր մի բան այս կամ այն կերպով անելումը, մի վատ բան չկայ ու դորա տակից մի վտանգ ևս չէ կարող դուրս գալ ինչու որ մեր մոքումը վատ բան չկայ, ու մեր նպատակը չէ ամե-

նեին։ Քիչ է պատահում, որ մահկանացու մարդու ուզենալով ու դիտմամբ վատ նպատակ ունենայ միքան արած ժամանակն։ միայն շատ բիրտ ու դաժան չարագործը առաջուանից լաւ կմտածի կսարքի իւր մտքի չարութիւններն թէ՝ ինչ կերպով, ինչ ճանապարհներով յառաջ տանի ու յաջողեցնի առանց սխալուելու, այն չարութիւններն, որոց ներգործութիւնն ուրիշներին սուգ նստեցնել, բան փչացնել մարդ փչացնել է։ Բայց և ուղիղ սիրտ ու միտք ունեցող քրիստոնեայքն ևս կարող են սխալ անել այնտեղ, երբոր միջոցներ են ընտրում և այդ միջոցներովն իրանց՝ շատ անգամ բարի գիտաւորութիւններն յառաջ են տանում։ Մի քանիսը, սաստիկ ցանկութիւնից վառուած, որ իրանց մոքում դրած են շուտ ու անպատճառ համեն, ոչ թէ չեն գուշանում, այլ և իրանց միամտացնում են այնով, որովհետև իրանց նպատակը բարի էր, այդ պատճառով ևս այս՝ այն ծուռ ճանապարհ բռնելը վնասակար չհամարեցին։ Մի պղտիկ սուտ ասելը, մի անվայել հնարք ու խորամանկութիւն բանեցնելը, իրանից փոքր մարդոց հետ արհամարհանքով, սառն ու խիստ կերպով վարուելը, այս ամենը նոցա աչքին բան չեն երեւում, երբոր իրանց ջանքը, միտքը, մեծ օգուտներ ձեռք բերելու համար է։ Բայց ո՞վ է իմանում, որ իսկ այդ ժայռին է կաշում ամեն բանն, ու վշուր փշուր լինում։ Քամի ցանողը՝ մըրիկ կհնձի։

Արդէն ժողովուրդի բերանն եղած առածն ասում է թէ՝ ամենալաւ մի նպատակի հառնելաւ համար ևս ամենալի միջոց բառեցնել ընդունելի ու ներէլի չէ։ Քո ցան-

կութիւնովդ միայն, քանի որ քո ցանկութիւնդ ու նպատակդ (մտքումդ դրածը) քո սրտումդ է ծածկուած՝ ոչ բարի, ոչ չար բան կանես։ Բայց ինչ միջոցներով որ դու քո ցանկութիւնդ, քո մտքիդ դրածը կատարում ես, այդ միջոցներն են գործը, և այդ գործիցն են դուրս գալիս վատ կամ լաւ հետեւանքներ, քո կամ ուրիշների համար։ Թէ քո կամքումդ դրածը կատարուելու բան է՝ կամ չէ, այդ՝ ամենագէտ Աստուծոյն է յայտնի։ բայց թէ այդ մտքիդ մէջն ամեննեին վատ բան չկայ, որ Աստուծոյ, կամ մարդոց առաջին մեղք անում լինես, այդ քեզ լաւ յայտնի է, վերջը մոտածիր, քննիր ու տես թէ՝ իրաւացի՝ միջոցներ ես ուզում բանեցնել քո նպատակիդ համար։ Կարելի է, որ իսկ քո ընտրած միջոցներդ են ամենամեծ արգելքները, որ քո նպատակիդ չես կարում հասնել։ Կարելի է, որ իսկ քո ընտրած ճանապարհներդ են, որ քեզ ամենից աւելի հեռացնում են քո նպատակիցդ, որին որ պէտք է քեզ հասցնէին։ Եղան մարդիկ, որ իսկ այնով անբաղդ եղան, ինչով որ յոյս ունէին բաղդաւոր լինելու, եղան մարդիկ, որ իրանց քաղաքացիների առաջ պատուից ընկան, անունները կոտրուեցան իսկ այնով, ինչով կարծում էին թէ՝ նորանց աչքումը կըարձրանան։ Մարդս իւր մոքումն շատ բան կարող է դնել. բայց Աստուած պիտի յաջողի, առանց Աստուծոյ բան չլինիր։ Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ։

Վերջը՝ մոտածիր։ Ոչ մի բան մի՛ անիլ երբոր կիրքդ շարժած է, երբ խաղաղ հոգւովի հանգիստ

սրտով չես։ Հաւատ մի ընծայիր անազնիւ ցանկութիւններիդ ու նոցա մի լսիր, երբոր վատ բանն քեզ քաղցր երեցնելով դրգում են քեզ անվայել բան անելու, որ մարդոց առաջին ամաչես յետոյ։ Անազնիւ ցանկութիւնների ներգործութիւնն ես անպատճառ այն կլինի, որ դու մի օր պէտք է ամօթ քաշես։ Մի՛թէ քո առաջուց արած անխելքութիւններիցդ, ինչ որ ստացար, ինչ ամօթ ու վնաս՝ որ քաշեցիր դեռ խելքդ գլուխդ չեկա՞ւ, ուրեմն ինչի՞ համար ես դու նախատում երեխային, որ արդէն մի անգամ անզգուշութիւնիցն կրակի մօտենալովն, ձեռքն ու հագուստն այրեց ու շատ լաց էլաւ, ու չզգուշանալով ստացած վնասիցն ու մոռանալով միանգամ իրան գլխին եկածն՝ իւր երեխայութիւնիցն, դարձեալ կրակին է մօտենում։ Ինքնդ ևս երեխայի նման չե՞ս արգեօք, ինչի՞ ես փափագում սրտի հանգըստութիւն ունենալու և տեղական ու ամեն պատահմունքից բարձր խաղաղութիւն, բարօրութիւն վայելելու, երբոր դու ինքնդ ոտով խփում ու քեզանից հեռացնում ես խաղաղութիւնն ու բարօրութիւնը։

Վերջը միտք արա դո՛ւ, որ քո տանդ խաղաղութիւնն ու հանգստութիւնը վրգովում ես, տակն ու վրայ անում։ ինչ է որ, սիրտ այդպէս է ուղում, քո ասածդ ես ուղում անես հակառակութիւն ես ուղում սարքես։ վերջը մտածիր, ասում եմ քեզ, եթէ ոչ անբաղդութեան մէջ կմեռնես ու տունդ ես բոլորովին ձեռքից կդնայ ու կքանդուի ինչո՞ւ ես դու քո ունեցած իշխանութիւնդ ու կամքդ

բանեցնելու համար, քո ասածդ անել տալուգ համար, պահանջումն որ քեզ ոչ մի բան չասեն, ներողամիտ լինել ամենեին չես ուղում։ Ինչի՞ համար դու, ամենեին օր չտալով քո ընտանեացդ բոնակալն ես դառնումն, ու բոլորի սիրտը քեզանից սառեցնում, կտրում, որ վերջը վերջը ծերութեանդ ժամանակը մենակ մնաս ու գլխիդ վայ տաս։

Վերջը մտածիր, խելքդ տանել տուած խաղացող, որ նարգի քուխի խաղաչու թղթերի ու լոգի մէջ յառաջ մի ախորժ բան էիր միայն գտնում, խոկ յետոյ սաստիկ ուր կապեցիր ու խելքդ գնում է այդ բաների համար, լաւ իմացիր, որ դու ևս ամեն խաղացողների հացին կհասնես, որոնք որ իրանց առողջութիւնը բոլորովին կորցրեցին, մարմնով հալուեցան մաշուեցան, մտքով ևս թուլացան, ու այնքան իրանք իրանց կորցրին, խելքները խաղի տալով, որ իրանք իրանց բոլոր ունեցածն ու չունեցածը մինչեւ վերջին փողը, տեսան, որ խաղի տուին, ձեռքներիցը գնաց, ու իրանց մնաց միայն դռնից դուռն մանգալ ու ողորմութիւն հաւաքելը, կամ՝ իրանց ունեցած պատուիցն՝ ընկան, երեսներին այլ ևս մտիկ տուող, բարեցուող չկար. ու այնպիսի յուսահատութեան մէջ իրանց մնացած ու օրերն ախ ու վախով անց կացրին։ Լաւ մարդիկը՝ տես, քեզ մարդ ճանաչել, մարդու տեղ գնել չեն ուղում, ընտանիքդ սաստիկ ցաւում է քո արարմունքիդ վրայ. խելքդ հաւաքիր ու հասկացիր, որ այն անպատուութիւնն, որ տեսնում ես պատուաւոր մարդիկների կողմից, ու այն ցաւն, որ տեսնում ես քո մասին քո ընտանի-

քեդ կողմից, քո պահապան, քեզ պաշտպան հը-
րեշտակիդ, քեզ զգուշացնող ձայնն է. լսիր այդ
ձայնին:

Վերջը մտածիր, գու մեծ մեծ խօսող ու պար-
ծանք սիրող, ոյժու, խելքդ չհասած մեծ մեծ բա-
ների ետևից ընկնող, ինչ որ ձեռիցդ գալու չէ, բայց
սնապարծութիւնդ քեզ չէ թողնում որ քո չափդ
ճանաչես ու չմոռանաս. սիրտդ ուզում է, որ քո
քաղաքացիներիդ մէջն երեւելի լինիս, քեզ մատով
ցոյց տան՝ այդ անխելք ցանկութիւնիդ համելու
համար, յիմարաբար այնպիսի բան ես բռնում, որ
շատերի բերանից լսես քո ականջովդ թէ՝ շատ ողոր-
մելի մարդ է, պարծանքի համար հոգի էր տալի, ահա
տես ինքն իրան ինչ տեղը բերեց, հասցրեց իւր ան-
խելք ու ուժից բարձր բաների կաշելովը, ի՞նչ է ձե-
ռըդ ընկնելու, ի՞նչ պիտի շահուիս, որ ունեցած ու-
ժիցդ, ունեցած կարողութիւնիցդ դուրս բան ես
բռնում, ինչ է, աւելի երեւելի, անուանի մարդ ճա-
նաչեն քեզ, քան թէ ինչ որ ես ինքդ։ Աչքդ լաւ
բաց արա, ու մի լաւ տես, կարելի է արդէն այժմ
ես քո տանդ, քո ընտանիքիդ դրութիւնը շատ վատ
տեղն է հասել, թէեւ դեռ ուրիշներին յայտնի չէ,
կարելի է որ, արդէն այժմ ևս այնչափ կարճատես
ես, որ չես կարում հասկանալ թէ՝ գործերի վերջը
լաւ չես բերիլ, պարտքերդ տալ չես կարողանալ, որ
գարձեալ իբրև իւր պատիւն ու անունն պահող մարդ
աշխարհում ապրել կարողանաս։ Ինչի՞ ես առաջուայ
նման, փոխ չինայելով ապրում, մեծ մեծ ծախքեր
անում, ինչպէս որ մինչեւ ցայժմ արել ու ապրել

ես, ինչի՞ բան չես պակասացնում, ինչի՞ ծախքդ չես
չափաւորում ու քչացնում, երբոր ժամանակն է
առաջուան ապրուստիցդ ձեռք քաշելու, քո հաշիւգ՝
այժմեան դրութիւնդ լաւ հասկանալու ու վերմակիդ
չափովն ոտերդ երկարացնելու, որ բաց չմնան։ Ինչի՞
ես մեծացնում ցաւգ, որոյ մէջն արդէն ընկել ես,
ունեցածդ՝ քանի գնում է, պակասում է ու չէ աւե-
լանում, օրէց օր կարողութիւնիցդ ընկնում ես ու
քանի գնում ես աղքատանում։ ի՞նչ բանի համար
ես պարտքերդ շատացնում, վատ դրութիւնդ աւելի
վատացնում, սորանից նորանից փող առնում, քեզ՝
մի նեղութիւնիցդ ազատում ու միւսի՝ աւելի մեծ
նեղութիւնի մէջ ձգում, խելքդ գրպանդ դրած։ Աս-
տուծոյ քեզ տուած խելքը, մարդիս բանականու-
թիւնը, խոհականութիւնը ո՞ր օրուայ համար ես պա-
հել որ չես բանեցնում, ու քանի գնում ես, քեզ
աւելի նեղ տեղը ձգում, որ դուրս գալու ազատուե-
լու ճար ու ճանապարհ չգտնես։ Ինքդ քեզ կորցրել
ես, ու առանց քեզ յետ քաշելու, առանց առաջդ
ու քամակդ մտիկ տալու, վագէվազ գնում ես այն
ճանապարհն, որ քո տունդ պէտք է քանդի, քո
անունդ կոտրի վչացնի։

Վերջը մտածիր, անհաւատարիմ պաշտօնեայ,
որ ոչ թէ օրէնքով ու խղճմտանքով ես գործ տես-
նում, այլ ինչպէս որ սիրտդ է ուզում, ինչպէս որ
մտքումդ ես դրել, ինչպէս որ քո շահդ է քեզ թե-
լազգում, ինչ աչքով որ մի կամ միւս մարդի վրայ
մտիկ ես տալու, ով որ քեզ դիւր եկել ով որ քեզ
սիրելու ճանապարհը գտել է, ում որ տարուել ես,

նորա համար չեղ չկայ, ուզեցածները կանես. քեզ
համար իրաւացի գործն այն է միայն, որտեղից որ
մի ակնկալութիւն, մի շահ կարող ես ունենալ քո
շահիդ համար՝ պատրաստ ես խղճմտանքդ գեն դրած
ժողովուրդի տուածը տակով անել, տուած երդումնդ
սուել ուրանալ: Կարելի է, որ այսօր ևս արդէն շա-
տերին յայտնի է, թէ ինչպէս դու քո վիզդ առած
պաշտօնիդ մէջ անհաւատարիմ ես ու քո գործքովդ
ինքդ ես մատնել քո պաշտօնիդ մէջ անհաւատար-
մութիւններիդ կողմանէ. կարելի է որ, այսօր ևս
արդէն ազնուամիտ մարդիկ քեզ համար խորհուրդ
են անում ծածուկ՝ քո տեղիցն քեզ վայր ձգելու:
Յետ քաշուիր: Զեռք քաշիր քո արարմննքիցդ: Միշտ
փորձուած է, թէ ինչ է լինում այդ տեսակ մարդոց
վերջը. զգուշացիր այն տեսնելով, ինչ որ մեծ մեծ
փորձերը քեզ ցոյց են տալի. զգուշութիւն լինին
քեզ համար այս անկենդան, սառը տողերն ևս որ
կարդում ես, ինքդ քեզ նորից ազնուացուր նոր ար-
դարութիւնովդ ու առաքինութիւնովդ, ինչ որ մինչեւ
ցայժմ՝ արել ես, տասնապատիկ կծանրանայ քո
վրայ, ու վրադ բերած անէծքի ծանրութիւնն, որ
քեզ իւր տակը կիսեղդիւ տասն անգամ աւելի կինի:
Վերջը մտածիր, անառակ մարմնասէր, որ ան-
մեղի մեղքն ես մտնում, ու զլիսիցը հանելով, ան-
մեղութիւնից զրկում ես, որ իսելքդ, միտքդ վատ-
քաներ անելու ես տուել ու սրտումդ ինչ անամո-
թութիւններ անելու հնարներն մտածում, ամօթ,
պատկառանք մոռացած: Լաւ իմացիր, որ թէ և ամօ-
թալի գործ անելը մի դժուար բան չէ, բայց չկար-

ծես, որ արածդ քեզ կմնայ, չի բացուիլ չի յայտնուիլ
ամեն գործ՝ իւր ներգործութիւնն ունի անպատճառ.
գործ չկայ, որ անհետեանք մնայ: Խելքդ գլուխդ
հաւաքիր: Դու այնպիսի ճանապարհ ես բռնել, որ
քո սրտիդ հանգստութիւնը, ունեցած պատիւդ ու
կեանքիդ ուրախութիւնը պիտի կորցնես: Քո անա-
ռակութիւնների վրայ արած մտքերիցդ ու երեակա-
յութիւններիցդ այն դուրս կգայ յետոյ, որ դու
արիւն արտասուք կթափես փոշիման: ութիւնիցդ, կամ
յուսահատութիւնիցդ՝ արտասուք չի գալ չորացած
աչքիցդ, ու գժուածի պէս գէս ու գէն մտիկ կտաս
ինքդ ևս չիմանալով թէ՝ ինչ ես անում, կամ ինչ
անես, որ ազատուիս քո սրտիդ անտանելի՝ նեղու-
թիւնից: Երբոր չար մտքիցդ, վատ ցանկութիւններդ
այնքան զօրացել են, որ սիրուդ կրակ է ընկել ու չի
կարում գիմանալց այն ժամանակը միտքդ բեր, որ
մի ամենատես Աչք քո վրայ բաց է ու մտիկ է տալի,
այնպիսի մի Աչք, որ ամենածածուկ տեղերը տես-
նում է, գիշերուան խոր խաւարի մէջն ևս նորանից
բան չէ ծածկվում և ամենայն բան լուսի կբերի ու
յայտնի կանէ, ծածկուած չմնալ: Մի քանի ըոպէ
եղող անբարոյական ցանկասիրութիւնից յառաջացած
սարսափելի նեղութիւններն ու տանջանքները շատ
մարդի կեանքը սեացրեցին, մոքի ու սրտի հանգըս-
տութիւնից և ուրախութիւնից այնպէս զրկեցին, որ
էլ օր չէին տեսնում ու կեանքն իրանց համար տան-
ջանք էր գարձել: Ինչ որ մի անգամ մի մարդ արեց,
որքան ևս որ զղջայ ու արտասուք թափի, միտք
անելով ու ինքն իրան ուտելով, թէ ինչի՞ այդ բանն

արեց, բայց և այնպէս ոչինչ չօգնիլ ու իւր արածն արած կմնայ, ուղղելու ճար չկայ: Եթէ որ ուզում ես մեղքից ու արած մեղքիդ չարաշար, բայց անօգուտ փոշիմանութիւնից ազատ լինիս, փորձանքը ինքդ չքերես քո գլխիդ, քեզ պահել չկարողանալով ու քո կապդ ինքդ թոյլ թողնելով, այն րոպէումն՝ որ քիչ է մնացել՝ որ փորձութիւնի մէջ ընկնես, իբրև Քրիստոսի աշակերտ սիրտդ պնդացուր, ու մըտքումդ հաստատ դրած, ասա՛ սուրբ Գրքի այս խօսքը թէ «ինչպէս կարող եմ ես այս տեսակ մի մեծ չարիք (այսպիսի մի շատ վատ բան) անել՝ ու Աստուծոյ առաջին մեղանցել»:

Ա.Են ՞ բան անելու-դ ժամանակն մտածիր, բայց ոչ թէ այնպէս կարճ միտք արա թէ՝ այս գործն որ անում եմ, մի օրից յետոյ, մի տարի անց կենալուց յետոյ, իմ այժմ արած բանիցս ինչ դուրս կգայ, չէ՝ այդպէս կարճ մի մտածիր, աւելի հեռու գնա ու միտք արա և ինքդ քեզ ասա թէ՝ այս արածիցս ի՞ բոլո՞ իւանուիս ինչ վնաս դուրս կգայ: Մարդիս կեանքը շուտ անց է կենում գնում, ու մահը գալիս, մօտենում, մեր դուռը կտրում: Նա՛տ խելօք մարդ եղիր, շատ զօրաւոր, շատերի վրայ հրաման բանեցնող գլխաւոր իշխան ու ամենից մեծն, ամենի ոյժը քո ձեռքդ թող լինի, ամենի հոգին ևս քո ձեռքումդ թող լինի, ասենք ևս թէ՝ քո ունեցած խելքովդ ու աշխարհումն շատ բան տեսած, փորձած մարդ լինելովդ՝ ամեն բանն այնպէս բերած, իւր տեղը ձգած լինիս, որ քո բոլոր կեանքիդ համար ամեն հարկաւոր բանն շատ լաւ յաջողեցրած, պատ-

րաստած լինիս, որ քեզ ոչ մի բան չպակասի ամեն բան քո ձեռքդ լինի, սրտիդ ամեն ուզածը կատարուի, ու քեզ մնացած լինի միայն ամեն ուրախութիւն, ամեն վայելչութիւն քաշելը, — բայց և այնպէս՝ մի բան կայ, որ քո սրտիդ ուզածին պէս անել չես կարող, որ քո ունեցած շատ խելքովդ փոխես, այդ բանն, անփոփոխելի է մնում ու մարդիս մեծ խելքին և ունեցած իշխանութիւնին ու զօրութիւնին յաղթում՝ այդ բանն՝ Տաղեն է: Փանի որ աշխարհս կայ, այն օրուանից որ՝ ամեն բան ու մարդիկս ստեղծուել ենք ու ապրում ենք, ոչ մի արուեստ, ոչ մի ուսումն ու գիտութիւն դեռ ևս հնարյ, ճարը չէ գտել՝ ու գտնելու ևս չէ, մահից ազատուելու, ու՝ քանի որ չափ կայ, Աստուած կայ, ապրելու: Ով ուզում ես, եղիր, ինչպէս ուզում ես ապրիր, վերջը վերջը պիտի մեռնես, մահից չես փախչիլ՝ թէ՝ աշխարհիս ամենազօրաւոր թագաւորը լինիս, թէ՝ ամենավերջին՝ օր գատող, օր ուտող՝ մշակն: Երեխան՝ ծնեց՝ թէ չէ, նորա օրօրոցի վրան մահուան դատավճիռն արդէն եղած, դուրս եկած պրծած է: Նուտ՝ թէ ուշ, նամահինն է, մահը՝ նորանը: Արդեօք որքան պէտք է կեանք ունենանք, քանի տարի է Աստուած մեզ կեանք տուել ու կամեցել, որ այս աշխարհիս վրայ ապրենք: կարճ ժամանակ է տուել մեզ, թէ՝ երկար: մի տարի ենք ապրելու, թէ՝ եօթանասուն, կամ ութսուն տարի կեանք կունենանք, այդ մեզ յայտնի չէ, այդ՝ Աստուծոյ գրքի մէջն է գրուած, այն Գրքումն, որոյ մէջը գծուած են մարդիս ունենալու վիճակն ու գըլ-

ինչ որ պէտք է գայ իւր կեանքումն, այդ Գիրքը
մեր ձեռքումը չէ, մեր ձեռքը չընկնիլ, որ բաց ա-
նէինք, կարդայինք ու իմանայի նք, ու ի՞նչ է մա-
հըն, բոլորովին փշանալ, ոչնչանալ, մեր գիտակցու-
թեան բոլորովին հանգչելն, ինչպէս մի ճրագ չէ իմա-
նում, որ չվառուած՝ մի ամբողջ ճրագ էր. բայց
երբոր վառուեց, գլխիցը մինչեւ վերջը վառուեց պըր-
ծաւ, հանգաւ, այն է որ հանգաւ վերջացաւ. Այնու-
հետեւ ամենայն բան պրծաւ, վերջացաւ, Աստուծոյ
արդարութիւնն ևս հետն վերջացաւ արդեօք, եթէ
հարցնես, կասեմ թէ՝ մարդիս խղճմտանքն ու Աս-
տուծոյ յայտնութիւնը, սուրբ Գիրքը, բոլորովին ու-
րիշ բան են մեր առաջը հանում, ցոյց տալիս բոլո-
րովին ջոկ բան են մեզ սորվեցնում: Ասում են նոքա
թէ մարդո՛ որ մեռաւ ու գերեզման մոտաւ, գեռ ամեն
բան չվերջացաւ. գերեզմանից գէն ևս գեռ բան կայ,
այն բանն, որ կարճատես՝ հողեղէն մարդը, եթէ
Քրիստոսի տուած ուսումի զօրութիւնովին չհասկա-
նար, ի՞նչպէս պէտք է իմանար, թէ մահն՝ անմա-
հական կեանքի գուռն է միայն, ոչ թէ բոլորովին
փշանալ, ոչնչանալ, աշխարհիս երեսից ջնջուելի իբրև
թէ կար, թէ չկար, այս՝ այն մարդն՝ աշխարհիս
վրան ապրել են, այս աշխարհս ամենեին ոչ եկել
են, ոչ տեսել: Այս իմանալով, վերջը միտք արա՛:

«Ես աշխարհիս վրայ մի հիւր եմ»: Իմ կեանքս
ուխտաւորի ուխտ գնալու ճանապարհորդութեան է
նման. Ես՝ ինձ անծանօթ՝ օտար երկիրներիցն եմ
անց կենում, շտեսած երկիրներս տեսնում. այդ
տեղերքը ես բան չունիմ: որ իմս է ասեմ. աշխար-

հիս այս ամեն բարիքն: իմս չեն, ինձ պահ է միայն
տուած, որ պահեմ մինչեւ ժամանակը գալի, որ
տամ, թողնեմ՝ ու իմ ճանապարհս գնամ. այն բա-
րիքն հետս տանելու չեմ. գերեզմանիս մօտեցայ,
այնտեղ կթողնեմ: Մի բան է, որ ինձ կմնայ, որ
իմս է բոլորովին ու հետս տանել կարող եմ միւս
կեանքն, յաւիտենական աշխարհն. այդ իմ հասաք
է, իմ սէրս ու իմ յոյսս, այս իմանալով ժամա-
նակին հոգս արա, որ երբոր ժամանակը լրանայ և
որը գալու լինի, գժուարութիւն չքաշես յանձնելու,
ինչ որ քեզ պահ է տուած: Ինչ բանի որ կպէելու
լինիս, ինչ որ անելու լինիս, վերջը միտք արա՛:

մասն և հար նայ մեջ մոխ ազգիր մակա ար այ
գու պատր պատման անդին անդար ու անդա
այ օր անդ ա պատման անդ անդար ի կամ
պատման անդար անդ անդ անդ անդ
ու անդ անդ անդ անդ անդ անդ անդ
անդ անդ անդ անդ անդ անդ անդ անդ
անդ անդ անդ անդ անդ անդ անդ անդ
Ե.

ՔՐԻՍՏՈՆԵՒԹԻ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՒԹ ԿԵՇՆՔ ՈՒՆԵՑԱԾ ՄԻԶՈՅԻՆ ՈՒ ԻՒԹ ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ:

Քրիստոս իմ Տէրս՝ իմ հաւատարիմ՝ հովիւս է. Նորան
կապաւանիմ իմ բոլոր կեանքիս մէջ. երբոր մոլորուած էի,
նա ինձ տարաւ կրկին հանեց ուղիղ ձանապարհն: Նրանից որ
հեռու չլինիմ, ինձ ոչ մի բան չպակսիլ. ինչ որ ինձ պէտք է,
ուա կհոգայ. եթէ որ հոգսն ինձ սաստիկ նեղացնելու ևս լինի,
հաստատ գիտեմ, որ երկար չքաշիլ: Փրկիչս է ինձ արածեա
ցընողը կանաչ ու պարարտ մարգագետիններում և ինձ համար
այնպիսի համով ջուր է պատրաստում, որ խմելով չկշտաս
նամ. ինչ պէտք է վախենամ վտանգից, երբոր Աստուծոյ ու
զորմութիւնն իմ վրաս է: Երբոր աշխարհիս գեղեցկութիւնն
ու վայելչութիւնն ևս փշանայ. եթէ կենացս լոյսն ևս խաւա
րի, մի քաղցր միսիթարութիւն մնում է ինձ համար թէ՝ Աս
տուած է իմ ապաւենս:



Ո՞րտեղ են Տիւրոսն ու Սիդոնը, չին ժամանա-
կուայ փառաւոր քաղաքներն, որոց հրապարակները
(շուկաները) բոլոր աշխարհի ապրանքները բերելու,
հաւաքելու տեղերն էին, որոց ունեցած հարստու-

թեան վերայ ամեն ազգեր զարմանալով էին խօսում: Այլ ևս ոչ ոքի բերանից չես լսիր մի խօսք նրանց գիզած գանձերի մասին, կամ պալատների, բուրգերի ու նաւատորմիղների մասին: Ճանապարհորդները տեսնում են Ասորոց անապատներումն միայն նրանց աւերակները: — Ուր է մեծ քաղաքը Բարիլոն, որ ամեն ազգերի վրայ սարսափ էր ձգում իւր շէն ժա-
մանակը: Նորա զօրեղութիւնից ու մեծութիւնից ինչի՞
այլ ևս չեն գոզում բոլոր արևելքը: Ուր են բան-
տերն, որոց մէջ փտում էին խեղճ հրէաները: Ուր
են վայելչութիւնի համար շինուած այն զարմանալի
պարտէզներն, որ աշխարհիս հրաշքն էին համար-
վում: Ոչ մի բան չկայ, որ նորանց տեղը ցոյց տայ,
այն՝ հրաշքի տեղ անց կացող ու ահագին՝ կլոր պա-
տերով պատած պարտէզների տեղերն եմ ասում, որոց պատերին գալիս, խփում էին ծովի ալիքների
նման, գժգոհ ազգերի անզօր բարկութիւնն՝ ու փր-
շըրվում: — Այժմ ևս Քաղգէացւոց երկրի գաշտա-
վայրերումը կտեսնես բարձրացած, թուփերով սլա-
տած՝ հողաբլուրներ, որ քանդուած ահագին պատե-
րի մնացորդներն են: Օձեր են բնակվում այդ ծուռ
ու մնում փոքրիկ ծառատունների մէջն ու յափշտա-
կող, պատառող գաղաններ են որոի մանգալի վլա-
տակների շուաքների մէջն: Մարդոց շինած ամենա-
երևելի շէնքերն ևս ի՞նչ են որ, և երկար ժամա-
նակ են արդեօք մնում աշխարհիս երեսին:

Ու գու, Երուսաղէմ, սուրբ երկրի աչքը, քա-
ղաքների թագն ու պարծանքը, որի մէջ մի ժամա-
նակ Դաւթի քնարն Աստուած էր փառաբանում, որի

մէջ Սողոմոնի թագաւորական ամեռուի չորս կողմը
արևելքի բոլոր թանկագին բաներն էին պսպղում
ու հարստութիւններն բերվում։ դու ինչպէս ես ըն-
կել։ Քո Տաճարդ, որ մի ժամանակ բարեպաշտ ուխ-
տառների աղօթք անելու մեծ տեղն էր, այն տա-
ճարդ է այժմ։ քո ժողովաւրդդ Բնչ եղան։ ցան ու
ցիր ընկան աշխարհիս ամեն կողմերն, ինչպէս որ
յարդը քամին տանում է ու դէս ու դէն ցրվում։
Քո աւերած քաղաքդ, Եթէ որ բոլորովին անմար-
դաբնակ անապատ չէ դարձել, այն բարեհամրաւ յի-
շատակն է պահում, որ Յիսուս Քրիստոսն այնտեղ է
մարմին առել ու մարդացել և իբրև մարդ՝ այնտեղ
ման եկել, այնտեղ իւր արիւնը թափել Գողգոթա սա-
րի վրայ. Եթէ այդ յիշատակը Ալինէր, իւր այժմեան
խեղճ գրութիւնն ու վիճակն եւս որ ունի ու մի քա-
ղաքի հաշվումն է համարվում՝ քիչ շատ, այն ես
չէր ունենար ու վաղօւց հողի հետ հաւասարուած
կլինէր՝ ու անունն ես տուող չէր լինիլ։

Այն բոլոր արձաններն, որ հին աշխարհի երկ-
րաւոր մեծութիւնն ու փառքն էին ցոյց տալիս, հզօր
իշխանների պատուին համար կանգնած այն սիւներն,
այն յաղթանակի դռներն, որից անց էր կենում իւր
փառքիցն արբած յաղթականն, որոյ վրայ զարմա-
նում էին, — այդ բոլորն այժմ ջարդ ու բուրդ են
եղել, ոչնչացել։ Այն մեծամեծ քաղաքները կործա-
նուելուց ու աւերակներ դառնալուց յետոյ ուրիշ
քաղաքներ են հիմնուել ու բարձրացել ու նոյնպէս
անուանի ու փառաւոր եղել, որ՝ հազարաւոր տարի-
ներից յետոյ՝ առաջ եղած մեծ քաղաքների նման՝

գետնի հետ հաւասարուին։

Ուր են աշխարհիս վրայ ամեն տեղ ահ ու եր-
կիւղ ձգող զարհութելի իշխաններն, որ երկաթի գա-
ւազանով էին հրամաններ տալիս աղդերին և իրանց՝
աստուածներ ճանաչում ու ճանաչել տալիս։ — Ուր են
աշխարհականներն իրանց անթիւ զօրքերովն։ որոց
առաջին իբրև գերիներ գողում էին՝ երբեմն Ասիան,
երբեմն ևս Եւրոպան։ Ուր են նոցա հաստատած
թագաւորութիւններն, որ արևելքից մինչեւ արև-
մուտք էին գնում, համնում։ — Այժմ մի թէ ոչ ոք
չէ գողում նորանց՝ ամպի նման՝ գոռգոռող ձայնից։
Նորանց մի աչք ձգելն, մի մտիկ տալն սարսափած
ազգերի ու թագաւորների համար՝ այլ ևս օրէնքի
տեղ չե՞ն անց կենում։ Ուր են նորանց մեծ մեծ
գործերի արդիւնքն, որ վախկոտ շղոքորթների բազ-
մութիւնն մինչեւ երկինքն էր բարձրացնում, հանում։
— Ուր են. կորա՞ն։ Այն ուրախութեան ձայններն, որ
բռնականներին աստուածացնումէին, բարձրանալով
օդում ցնդեցան՝ իբրև մեծ մեծ անէծքներ նոցա
գերեզմանների վրայ։

Եւ դուք, որ մի ժամանակ ձեր կեանքը մեծ ու
շուալ անառակութիւնների ու զեղիսութիւնների էիք
դարձրել, լող տալով ձեր անչափ հարստութիւնների
մէջն. դուք, որ մի օրուայ սարքած ուրախութիւնի
մէջ աղքատների բոլոր քրտինքն էիք ցամաքացնում,
չորացնում ու ձեր սատակելու գէշն (լաշը), աշխարհի
հեռու տեղերից դուրս եկած թանկ մետաքսե-
ղէնների մէջը ծածկում, թաթիսուելով, զարդարուե-
լով — կարողացաք արդեօք ձեր մտքումը դրածին

հասնել, աշխարհումն ամենալաւ ու երանի տալու կեանքն անց կացնել: Զէ՞ր չարչարում, սպանում արդեօք ձեզ, ձեր խղճմտանքի ձեզ տուած անտանելին նեղութիւնն, մահուան երկիւղը ձեր անկողինումը, որոյ մէջ մտել էիք հանգստանալու մոքով՝ ու քունը ձեր աչքից փախչում էր: Ինչի՞ էիք նախանձում աղքատ մարդոց առողջութեանն, բարեբաղդ մարդոց ուրախ սիրտ ունենալուն, իմաստուն մարդոյ հոգու անվրդով խաղաղութեանն: Մահն, երբ որ ձեզ աշխարհիս վայելցութիւններովն արբած, կուրացած դըրութիւնից (տեղիցը) կառնի, կտանի, որչափ և սչուզենաք, կսորվեցնի ձեզ, որ աշխարհիս բոլոր հարբստութիւններովն ևս անկարելի է գնել ճշմարիտ հաստատ երջանկութիւն երկրիս վրայ:

Ո՞ւր են այն ամեն մարդիկը, որ Աստուած էին անարդում, առաքինութեան վրայ ծիծաղում, սուրբ բան ծաղը անելու սուր սուր խօսքեր հնարում, ասում ու յաւիտենական, անմահ կեանքի վրայ յոյս ունենալը խելքից զուրկ մարդոց միսիթարութիւն անուանում: Իրանց խելացնորութեանը մէջ Աստուծոյ գէմ գլուխ էին բարձրացրել ու չէին ընդունում նորա տեշութիւնն. վերջն վերջն՝ իրանց մէջը գտան սարսափելի դատաստանն ու դատապարտութիւնն:

Այս է աչա երկրաւոր բանի ունայնութիւնն: Ամենայն փառքից ու մեծութիւնից ի՞նչն է մնում. հող ու փոշի:

Բայց Ցիսուս կենդանի է և ես Նորանով: Նա կենդանի է և կենդանի պէտք է լինի մինչեւ աշխարհիս վերջը և ես Նորանով յաւիտեանս պիտի կեն-

դանի մնամ: Թագաւորական թախտեր կկոտրուին, ու այրի մնացած կնկայ նման սուգ կնոտին, թագաւորութիւններ կործանուին, աշխարհ աշխարհով կանցնի՝ բայց Նորա ճշմարտութիւնը կմնայ յաւիտեան: Նա մի թագաւորութիւն է հաստատել՝ ոչ թէ հող ու աւազից և աւազի վրայ, այլ մի երկնաւոր թագաւորութիւն, ուր որ հոգիքն են, որոց հաւաքումէ իւր երկնաւոր Հօր աթոռի չորս կողմն. — Ես ևս Նորա յաւիտենական թագաւորութեան քաղաքացին եմ. և այնպէս յաւիտենական եմ, ինչպէս որ յաւիտենական է Նորա թագաւորութիւնն: Նա իմ սըրտումն մի ուրախութիւն, մի երջանկութիւն է դրեւ որ ոչ աշխարհ յաղթողի զէնքը կյաղթի ու ինձանից կհանի, և ոչ մի հզօր ու Աստուծոյ կրակին տէր մարդ կարող է գինը գտնի ու իւր միլիոններովն ինձանից առնի. Նա ինձ համար մի երջանկութիւն է պատրաստել, որոյ մօտը՝ մի ամբողջ կեանքի զգացմանց յուզմունքն ու կատաղութիւնն՝ մի կաթիլ թոյնի ենմիայն նման, որ ընկնումէ կեանք ու կենդանութիւնով մի Ովկիանոսի մէջ: Ես կարող եմ խոնարհանալ կարող եմ բարձրանալ, ես կարող եմ աշխարհիս բռնակալ ների սաստիկ թթուած երեսին ժպտել. ես կարող եմ կեանքի մըրիկների՝ իմ գլխիս եկած փորձանքների մէջ՝ կեանքի մըրիկների՝ իմ գլխիս եկած փորձանքների մէջ՝ ուրախ ման գալ. ես կարող եմ հազար մահի առաջը գնալ, առանց սրտիս մէջն երկիւղի մի նշան ունենալու: գնալ, առանց սրտիս մէջն երկիւղի մի նշան ունենալու: Ես ամեն բան կարող եմ Նորանով, ամ այ ինչ աման են է աման աման: Ես ամեն բան կարող եմ Նորանով, ամ այ ինչ աման են է աման աման:

Ես քաջ եմ, ես զօրաւոր եմ Նորանով, ոչ թէ մարմնովս, այլ հոգովս: Եւ հոգի չէ, որ Ամենակամարմնովս:

բող զօրութիւն է երկնքումն ու երկրիս վրայ: Հոգին չէ, որ առաջ հոգին կեանք է տալիս, ու մեռած ծանթութիւնը շարժում է: Քրիստոսի զօրութիւնն ես, որ ունէր աշխարհի վրայ, հոգւոյ զօրութիւն էր երկրաւորի վրայ: Մարմնով՝ իւր ստեղծած ծառայի, մարդկային կերպարանքն ու բնութիւնն առած էր ման գալիս աշխարհիս վրայ, բայց այժմ՝ նորա անունով աղօթք են անում աշխարհիս ամեն կողմերն, ամեն հազարաւոր տարիներում՝ ու աշխարհիս թագաւորները նորա առաջին գետինն են խոնարհած, հոգի հետ հաւասարուած: Եւր ստեղծած ծառայի, մարդիս կերպարանքովն էր ման գալիս աստուածային մարդն: Զուր տեղն էր Հրեաստանը նորան երկրաւոր թագաւորութեան թագ առաջարկում: զուր էին բարձր ձայնով «ովսաննա» կանչում Դաւթի որդուն: Նորա համար ոսկի թիթեղի փառքն ու պայծառութիւնն, թիթեղի նման պսպղող, շողշողացող իշխանութիւնը քիչ էր: Ի՞նչ էր ձեր թագաւորական թագը՝ աստուածութեան լրութեան առաջին: — Նորա թագաւորական գաւազանը պիտի իշխէր երկրաւորից բարձր մի թագաւորութեան, որ անանցանելի է, որ վերջ չունի: Իմ մէջս ևս կայ, իմ մէջս ևս բնակվումէ երկրաւորից բարձրը, աստուածայինը: Յիսուս սորվեցրեց ինձ ճանաշել իմ իսկ բարձրութիւնս: Այս բարձրութիւնն աւելի է, քան թէ ինչ ինչ որ երկիրս կարող է ինձ տալ մեծ ու բարձր բան: Ոչ ձեր շքանշանների, ոչ ձեր խաչերի, ոչ ձեր աստղերի, ոչ ձեր տուած աստիճանների, ոչ ձեր ինձ արած պարգևները, ոչ ձեր հանդէսների ու տօնա-

խըմբութիւնների, և ոչ ձեր զեղխութիւնների հետ կփոխեմ ես հոգւոյս այս բարձրութիւնը, աշխարհիս հրաման տուողներ, ձեր զգացմունքին հնագանդելով՝ ձեր արած վայելզութիւններն, որոնցով խարվումէք բոլոր ձեր կեանքումն, չէք գնել դուք իմ սրտիս հանգստութիւնն, իմ աներկիւղութիւնս, իմ ուրախութիւնս, որ ունիմ: Ես մի հոգի եմ: Ես՝ աշխարհիս վրայ ապրած ժամանակս՝ արգէն մի աւելի բարձր, մի գերագոյն աշխարհումն եմ ապրում: Մարմնով քաղաքական կեանքի նեղ ու սահմանափակ շրջանումն եմ ման գալի, իմ սովորական, իմացած գործս եմ անում, իմ երկրաւոր կոչմանս եմ ծառայում, մի քանի մաշկանացուների ինձ արենակից, ազգական եմ անուանում, բայց իմ հոգւով՝ ձեր պստիկ երկիրների սահմաններից չեմ, դուրս եմ: Ինչու որ բոլոր աշխարհս իմ հայրենիքս է, յաւիտենական Աստուածն իմ թագաւորս ու Հայրս է, ամեն ստեղծուած հոգիներն իմ եղբայրներս են՝ թէ՝ երկրիս թագաւորին իշխանի հոգին, և թէ՝ յետին աղքատինը. Աբրահամի ու Մովսէսի որպէս և այն ազնիւ մարդոց հոգիներն, որ՝ հազարաւոր տարիներ անց կենալուց յետոյ՝ ինձանից յետ այս մոլորակի հող գառնալու փոշին իրանց վրայ կառնուն ու իրեւ մարդիկ երկրիս վրայ ման կգան: Մինչև Յիսուս Քրիստոսն իմ եղբայրս է: Դորա համար նա ինձ ընդունեց, երբոր ինձ Աստուածոյ որդեգրելու տարաւ: Դորանով եմ ես զօրաւոր, որ յաւիտենական էակի ազգակից եմ, որ Աստուածոյ զաւած է եմ:

Ես ամեն բանի համար դըրեկ էմ Քրիստոսով որովհետ ևս ամեն բանի համար դըրեկ էմ Քրիստոսով:

տեղ նա ինձ յայտնեց իմ բնութեանս մէջ եղած, իմ հետս ծնած իմ արժանաւորութեանս գաղտնիքը, բարձր կոչումների համար ծնուած լինելուս հրաշալիքն: Նա ինձ սորվեցրեց հոգիների հոգուն երկրպագութիւն անելու, Նորան մօտենալու հոգուով ու ճշմարտութիւնով: Նորանով ունիմ ես այն սուրբ ու աներկմիտ հաւատն, որ Աստուած ինձ հետ է, որով հետեւ ես Նորա հետն եմ: Եւ եթէ նա իմ հետս է, նա, որոյ առաջին երկնային քերովքէքն ահ ու երկիւղով և մեծարանքով ծունը են գնում, որոյ մի մտիկ տալուց ամբողջ աշխարհները դողում են. ո՞վ է կարող ինձ հակառակ կանգնել: — Դուք, որ ձեր ունեցածի, ձեր զօրութեանը վրայ էք հիմնում ձեր անբաղդութեան շէնքը, մի անգամ որ շունչ քաշել չկարողանաք, մի անգամ որ բունուի շունչներդ, ու ձեր արիւներակը որ չխփի անպիտան ու զզուելի բան կդառնաք, որովհետեւ կհոտէք, կփտէք, կփնանաք: Դուք, որ իշխանութիւն ձեռք առած, ձեր կամքը, սրտի ուզածը, ձեր խելքին եկածն էք յառաջ տանում ու ձեր աշխարհի վերայ հրաման բանեցնող էք կարծում, որ Աստուծոյ օրէնքը բանի տեղ չէք գնում, արհամարհումէք ու ձեր մարմնի հաճոյքն ու ցանկութիւններն օրէնքի տեղ անցկացնում. որ արգարութիւնն ու իրաւունքը ոտքի տակ էր տալի ձեր հըպարտութիւնովն, որ անմեղի մեղքն էր մոնում ձեր վաւաշոա, գարշելի գաղանութիւնովն, ոյժ բանացնելով ինչ է թէ ոյժ ունիք ու գիտէք, որ ձեռքներից կգայ յաղթել. որ բարի անուն, բարի սիրտ ունեցող ու ազնիւ հոգւոյ տէր մարդին՝ կամ մարդի

տեղ չէք գնում, որովհետեւ ձեղ նման ամեն վատութիւնի մէջ չէ մեծացած, կամ ատումէք ու հեռու պահում, որովհետեւ նորա վարքն ու կեանքը ձեղ անտանելի է, ձեր վարք ու բարքին յանդիմանութիւն է, կամ անունն էք կոտրում, մուր էք քսում նորա վերայ, սուտ յանցանքներ դնելով վրան ինքներդ, կամ ուրիշներին սորվեցնելով, որ կեղտոտեն, մրոտեն, ձեղ մի փոքր նման լինի, կամ հալածում էք թշնամաբար, ձեր ձեռքն ունեցած իշխանութիւնն անգիտաբար՝ չարաչար գործ դնելով, ինչ է թէ ձեղ չէ պատուում, որովհետեւ ձեր վարմունքով ու գործով ոչ մի տեղ չէք թողել որոյ և իցէ սըրտումն ձեղ պատուելու, ուր մնայ թէ սիրելու ու ձեղ համար՝ ամենայն աստուածահաճոյ ու մարդոց օգուտ քերող ծառայութիւններն ուրախութեամբ կատարելու ու մինչեւ անգամ իւր կեանքը չխնայելուց այդ տեսակ մարդոցդ եմ ասում, ականջներդ լաւ բաց արէք, լսեցէք ու իմացէք, որ Աստուած իմ հետս է, ինչ էք կարող ինձ անել ինչ կգայ ձեռներիցդ: Իմ մարմինս կարող էք սպանել. բայց իմ եսս, իմ էութիւնս, որ իմ անմահ հոգիս է, գուք չէք կարող սպանել: Հոգիների թագաւորութիւնը կեանքի ու կենդանութեան թագաւորութիւն է. այնտեղ մահն իշխանութիւն չունի ամեննեին: Այս պատճառով ես վախիցս չեմ գողում երկրաւոր իշխանութեան, երկրաւոր ոյժի ու բռնութեան առաջը: Այս բանն ես կարողանում եմ Նորանով իմ Քրիստոսովս, որ ինձ ոյժ ու զօրութիւն է տուել, որ ինձ զօրացրել է իւր աստուածային զօրութիւնովն:

Ես զօրացած եմ Նորանով՝ հոգովու, առաքինութիւնով եմ ասում, որ ստացել եմ նորանից, և որ իմ խղճմտանքիս կեանքն ու կենդանութիւնն է դարձել: Այս առաքինութիւնն է ճանապարհը, որով ես գընում եմ, Աստուծոյ մօտենում, Ստեղծողիս հասնում: առաքինութիւնն է այն կապն, որ ինձ իմ Աստուծոյս հետ է կապում: Ես զօրացած եմ Քրիստոսովս, ինչու որ նա բնակում է իմ մէջու, ոչ թէ մարմնով, այլ իւր հոգովովն, իւր խօսքովն, իւր տըւած ուսումովն իւր օրինակելի կեանքովը, մեզ տըւած օրինակովն ամեն արդար բանն անելու մէջն: Նա աստուածանից մեզ համար եղաւ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն ու փրկութիւն:

Նա ինձ փրկեց չարի զօրութիւնից իւր սուրբ խօսքովն, որով բացեց իմ աչքս ու լուսաւորեց իմ միտքս, որ ինքս ինձ ու իմ մեղքի մէջ լինելս տեսնեմ ու հասկանամ, ինչու որ ես մահուան խաւար հովիտների մէջն էի ման գալիս, քանի որ ես իմ ուղղութիւնս ստացած էի զգայական հակումներից ու դորանց ցոյց տուած ճանապարհովն էի գնում: Քանի որ ես ինով հանգամանքներից օգուտ քաղելն ամենամեծ իմաստութիւնն էի համարում: Քանի որ ես կարծում էի, որ մարդոց տուած պատիւներից աւելի մեծը, աւելի բարձրը չլինիլ. Քանի որ ես փառքի ու բարօրութեան մէջ պառում էի ամեն բաղդաւորութեանց պատուների բանալիներն: այդ ժամանակներն ոչ Աստուած, ոչ մարդկանց էի այնչափ սիրում, որչափ ինձ: Քրիստոսով ես բարձր մտքեր ունենալու ճանապարհն իմ

առաջիս բաց արի ու հասկացայ պարզ: Ով որ՝ քաղաքական օրէնքներին համեմատ է վարվում ու ապրում, ու վատ ասելու տեղ չունի մի օգտակար մարդկարող է լինել: Բայց Աստուծոյ մարդը լինելուցը գեռ ես շատ հեռու է, ու մնացական, հաստատ բարերազգութիւն չունի:

Ես զօրաւոր նորանով ոչ թէ մարմնովս, այլ հոգւովս: այն մոռքով չեմ ասում, որ նորա ինձ պարգևած լուսովն՝ ես երկրիս վրայ մեծ իշխանութիւն, աւելի հարստութիւն, աւելի անուն ձեռք բերէի, այլ այն եմ ուզում ասել, որ նորանով ընդունակ եղայ, նորանով կարողացայ այն շնորհքն ունենալ, որ առանց այդ բաներին ես ապրիմ, որ այդ ամեն բաներից ինձ զրկեմ ու բոլորն զոհեմ իմ յաւիտենական երջանկութեանս: Այս է, որ քրիստոնէին այնպէս զօրացնում է, այնպէս աներկիւդ անում, ու այնպէս հարստութ ու վսեմ ամեն հանգամանքների մէջ, որ նա աշխարհն ու նորա փառքն ուրիշների պէս հեշտ ձեռք բերել չէ կարողանում, բայց ուրիշներից աւելի հեշտ ուրանալն իւր բանն է: Աշխարհ ուրանալ Յիսուսի սուրբ մեծութիւնն էր: Նա ամենեւ կին չէր արհամարհում կեանքի անմեղ ուրախութիւններն, որ նորա կեանքի մէջ կամ լաւ ես ասեմ, նոներն, որ նորա կեանքի մէջ կամ լաւ ես ասեմ, նոներն, որ նորա կեանքի մէջ կամ լաւ ես ասեմ: Ինչպէս քանակի ճանապարհին պատահում էին, ինչպէս մի ճանապարհորդի ճանապարհի վրայ պատահած սառըն ու զովացնող ջուրեր՝ տաք օրերին: բայց այդպիսի ուրախութիւններից ամենից մեծ զուարճութիւն բերաղ ուրախութիւնի համար ես չէր թողնիլ իւր ամենափոք պարտականութիւնն: Ով մահկանացուք

գուք Աստուծոյ համար մարմարի ու ոսկի սեղաններ
էք շինում։ Կարծումէք դուք, որ բոլոր աշխարհի
Տիրոջը ձեր շինած մեծ ու փառաւոր տաճարներովը
կուրախացնէք։ ԶԵ՛, այդ մեծ փողերով գլուխ եկած
գեղեցիկ ու մեծ սեղաններն ու տաճարներն, որ ա-
ւելի ջերմեռանդ սրտով աղօթք անելու համար էք
շինում, չե՞ն հիացնում յաւիտենական Հոգուն, որ
Սովորի շինած ամենափոքր խորանովն ամաչեցնում
է աշխարհիս բոլոր ճարտարապետների արհեստ ու
հմտութիւնն։ Ոչ մի երկրաւոր բան, որչափ ևս գե-
ղեցիկ ու կատարեալ լինի, անմահ Հոգին գոհ չլինիր
նորանով։ Փշանալու բան չէ մի. ուրեմն նորա գե-
րագոյն կատարելութեան առաջին ոչինչ է, մի բուռ
հող է։ Այս պատճառաւ Քրիստոս Յիսուս անտարբեր
աչքով էր նայում կեանքի ունայնութեան վերայ,
մարդի, իւր ստեղծած ծառայի կերպարանքով էր ման
գալիս, պարզ հագուած, աշխարհիս ամեն համգըս-
տութիւնից, փառք ու պատուից, վայելզութիւններից
հեռու իրան պահելով, շատ անգամ մինչեւ իւր գլու-
խը գնելու տեղ ևս չունէր. և դորանով ևս իւր
հոգին ամեն բանից բարձր էր ու մեծ՝ Աստուծոյ
նման՝ նորա փառքի ճառագայթն ու էութեան նկա-
րագիրն։ Այսպիսի օրինակ թողեց նա մեզ, որ նորա
գնացած ճանապարհովը գնա՞նք։

Ես նորանով էմ զօրացած։ ինչու որ նա սորվեցրեց՝
թէ ինչպէս պէտք է գործ ածեմ իմ մարդկային
կեանքիս մէջ ձեռք բերած բարիքս, որ այս աշխար-
հիս մէջ իմ Ստեղծողն պարզեել է ինձ, ինչպէս որ
Յիսուս Քրիստոս զօրաւոր էր խօսքովն ու գործովն

Աստուծոյ և մարդոց առաջին։ Այսպէս է և ամեն
մի նորա ճանապարհով գնացող մարդը։ Անթիւ զօր-
քերի բազմութիւն պէտք չէ՝ մեծ բաներ գլուխ բե-
րելու համար։ Աստուած հզօր է իւր ամենայետին
ծառաներովն ևս։ Բոլորովին անարգուած նազովրեց-
ոյ բերանից դուրս եկած մի հատ ճշմարիտ խօսք
չէ՞ր մի, որ աղգերին ու յետոյ աշխարհ եկող ամ-
բողջ սերունդներին ուրիշ ուղղութիւն տուեց, ուրիշ
ճանապարհ բացեց նոցա առաջին, թէ և աննշան ան-
յայտութեան մէջ էր ապրում ինքն։

Դուք, որ ոսկի գահիներումն էք բնակվում
ու նաւատորմիզների հրամաններ տալիս, որ ընդար-
ձակ դաշտերը ձեր սեպհականութիւնն էք ասում։
որ ծիրանիների՝ մետաքսեղինների մէջն էք լող տա-
լի և եկամուտներ եկամուտների վերայ հաւաքում։
գիզում։ դուք երկրաւոր բարիք ինձանից շատ ունիք։
բայց ես՝ ձեզանից հարուստ եմ։ Ձեր ամրոցները՝
ձեր նաւատորմիզները, ձեր մեծամեծ կալուածները՝
ձեր ակնեղինները ու մարգարիտը՝ մարդիս հո-
գին երջանիկ չեն անում երբէք, ձեր ցանկութիւն-
ներին վերջ չկայ. այս բանն էք ցանկանում, կատա-
րումէք, միւսն էք ցանկանում՝ կատարվում է. քիչ
բան կայ, որ ուզում էք ու անէք. բայց և այնպէս
ձեր սիրտը տեղը չէ ընկնում, միշտ անգոհ էք, ին-
չու որ ձեր մի ցանկութիւնին չհասած՝ միւսն է ծը-
նում ձեր սրտի մէջ, ձեզ միշտ պակաս է մի բան,
և այսպէս դուք միշտ գժգոհ էք։ Եւ որովհետեւ ա-
մեն բանն ևս ձեզ համար քիչ է, նորա համար ևս
աղքատ էք, չունեոր էք. իսկ ես՝ հարուստ եմ,


որովհետև ունեցածովս բաւականանում եմ: Իմ քիչ ունեցածիս ևս բոլորն պէտք չէ ինձ՝ իմ սակաւագետ՝ կեանքիս համար: Ուրեմն ես ինձ հարկաւոր եղածիցն աւելին ունիմ՝ ինձ բան ևս է աւելանում աւելորդ բան ևս եմ ունենում, որ դուք չունիք, ձեզ պակասում է ձեր ունեցածն, ոչ թէ բան է աւելանում ձեզանից. Ես իմ ունեցածիցս ուրիշներին ևս կարող եմ մի մի բան տալ, ուրիշներին ևս օգնել այն բանով, առանց որոյ կարող եմ ես կառավարուիլ: Կարելի է, որ դուք նուիրում էք մեծ գումարներ եկեղեցիների ու վանքերի, հիւանդանոցների ու աղքատանոցների. բայց ես ձեզանից աւելի շատ եմ տալիս. ինչու որ իմ փոքրիկ եկամուտի մի նշանաւոր մասն եմ հանում: Տալիս այդ բարեգործական հաստատութիւններին, իմ տուածիս մէջն աւելի օրհնութիւն կայ. աւելի իմ տուածս շահաւոր է. ինչու որ ես ինքս եմ գնում, պտում: Գտնումն նրանց, որ աւելի կարօտ են օգնելու նրանց նեղութիւնը փորձով իմանում եմ՝ որպէս և այն միջոցներն՝ այն ճանապարհներն, որոնք աւելի նոցա համար օգտագետ կարող են լինիլ: Այսպէս բարերար էր Յիսուս. դորա համար ևս իւր կարօտութեանը մէջ հարուստ էր և ամեն հոգու ցաւ ունեցողներին՝ օգնական:

Ես նորանով էմ զօրացածո պատճառ որ նորանով գերեզմանի զարհուրանքներին անգամ՝ յաղթեցի: Եւ ովէ աւելի հզօր քան թէ այն զօրաւորը, որ ոչ մի բանից չէ վախենում: Եւ ինչո՞ւ համար պէտք է վախենայի, որ իմ Աստուծովս ուրախ եմ: Նորան ապաւինած, ու իմ սրտիս հանգստութեանն, ուրախութեանն ու

երջանկութեանը չափ չկայ: Կեանքի պատահմունքները, վոփոխութիւնները կարող են վչացնել մարմինս, որ հողիցն է առնուած, բայց հոգիս երկրաւորի վրան յաղթութիւն անելով, թե առած կժռչի: Որքան որ աւելի մուժ կլինի գիշերն, այնքան աւելի պայծառ կերպով կլուսաւորուի ամենափոքր լոյսն: Ամենայն կերպով առաքինութեան համար յաղթուանբաղդութիւն՝ առաքինութեան հիւթեան ճանապարհ է բաց անում: Արդար մարդի հիւթեան ճանապարհ առկողինը՝ առաքինութեան թագաւուանդութեան անկողինը՝ առաքինութեան է գերեզմանն՝ այն բական թախտն է գառնումն նորա գերեզմանն՝ այս տեղն, ուր որ յաղթանակ է կանգնում նա: Մարտեղն, ուր որ յաղթանակ է կանգնում նա: Մարմինը կարող դիս հիւանդութիւններն ու ցաւերը՝ մարմինը կարող դիս հիւանդութիւններն ու ժամանակնել. են թուլացնել, ուժից ձգել ու իրան խեղճացնել. ինչու որ ես ինքս եմ գնում, պտում: Գտնումն էր նորա բարեպաշտ հոգին աւելի ևս պայծառացքայց նորա բարեպաշտ հոգին աւելի ևս պայծառացքայց նորա բարեպաշտ հոգին աւելի շրջում, յաւիտենականութիւնն՝ անցաւորի վերայ. իսկ հոգին, որ յաւիտենականութեան մէջն է, երկրաւոր բաների ամեն վրդովմունքների վերայ: Երբ որ Յիսուս խաչի վրդովմունքների վերայ էր ու երկիրս շարժեց և արեգակը խաւարեց վերայ էր ու երկիրս շարժեց և արեգակը խաւարեց երբ որ նա մեխուած էր ու կախուած՝ և իւր արիւնը երբ որ նա մեխուած էր աշխարհի վերայ, որի մեզքը նա քաթափում էր աշխարհի վերայ, որի մեզքը նա քաթափում էր, փուշ պատկը սուրբ գլխին, նա, ամեն կողւում էր, փուշ պատկը սուրբ գլխին, նա, ամեն կողմից անարգանքի, արհամարհանքի ու նզովքի խօսմից անարգանքի, արհամարհանքի ու նզովքի խօսմիցոցին, աղօթք էր անում Աստուծոյ, քեր լսելու միջոցին, աղօթք էր անում Աստուծոյ, ու ասում: Ներիր գորանց, ինչու որ չեն իմանում աստուծ: Ներիր գորանց, ինչու որ չեն իմանում աստուծ: Այն ժամանակն նա ամենաթէ, ինչ են անում: Այն ժամանակն նա ամենաթէ, ինչ են անում: Այն ժամանակն նա երկրաւորից աստուծային էր, այն ժամանակն նա երկրաւորից աստուծային էր, վերնային բարձրութեան գագաթաշտածայրի աստուծային էր:

Ես ամեն բան կարող եմ Քյիստուսով որով զօրացած է:
Հեռու գնացէք ինձանից, ինչ որ կեանքիս ցան-
կալի ու սիրելի էք. ինչ որ զարդ ու զարդարանք էք
իմ անցկացրած ժամերիս. Հեռու կացէք ինձանից
իմ սովորութիւններս.—թող իմ մարմինս շատ ցա-
ւի ձեզանից զրկուելուն համար, ձեր իրանից հեռա-
նալուն համար.—բայց հոգիս ազատ է ու զօրացած:
—Դէն գնացէք, հեռացէք ինձանից, իմ ուրախու-
թիւններս, որ գեղեցիկ ու անուշահոտ ծաղիկների
նման սիրտս բաց էիք անում իմ այս կեանքումն.
իմ արուեստաւոր երգերս, լացի ու արտասուքի փո-
խարկուեցէք. իմ անմահ հոգուս համար՝ ամենամեծ
տիրութիւնիս մէջն անգամ՝ գեռ ևս մի աւելի բար-
ձըր ուրախութիւն, մի հրճուանք մնումէ ինձ՝ և
այդ հրճուանքն՝ աշխարհիս բաների ոչ մի փոփոխու-
թիւնն ինձանից խլել չե՞ կարող.—գերեզման ինչէք,
իմ սրտիս սիրեկաններ, իմ տղայութեան հասակիս
խաղի լաւ ընկերներ, որ ինձ հետ էիք անբաժան՝
աշխարհիցս տեղեկութիւն չունեցած օրերումն, թող
արիւն գնայ սրտիցս, երբոր հոգիսու հրեշտակն ձեզ
իմ ձեռքից կառնի. ձեր սպրտնած պատուական ան-
շունչ մարմինը տեսնելով աչքիս առաջին, իմ հա-
ւատս աւելի կզօրանայ ու կհաստատուի իմ սրտիս
մէջն և իմ յոյսս աւելի ևս Աստուծոյ վերայ կդնեմ:
Մեր հոգուն համար մահ, մեռնել որ՝ չկայ ու չկայ:
Յիսուսը կենդանի է ու ես Նորանով: Աշխարհիս մէջ
մահ ստեղծող Աստուծած չկայ, այլ միայն կեանք ու
կենդանութիւն տուող Աստուծած կայ: Մենք մի մինի
հետ կտեսնուենք:

Հա՛, Քեզ հաւատալովս հաստատուն հաւատով,
ամեն բան կարող եմ Քեզանով, ով իմ Փրկիչս, իմ
իմ աւելի լաւ կեանք ունենալուս միակ ու առաջին
պատճառս: Դու աստուծային կրակ վառեցիր իմ
սրտումս, որ չհանգչի: Դու ես իմ լոյսս, որ ինձ իմ
գլխիս գալու փորձանքների խաւարից գէպի լոյսը
հանելով, տանում ես ինձ գէպի իմ Երկնաւոր Հօրս:
Օրհնութիս գոււ, որ ես քեզանով համարձակութիւն
ունիմ ուրախանալու իմ ստեղծող Հօրս իմ վերայ
ունեցած գթութիւնին, ողորմութիւնին ու սիրոյն
վերայ: Ի՞նչը կարող է իմ ունեցած միիթարութիւնս
իմ սրտիցս Խլել ու ինձ զուրկ թողնել, եթէ որ ես
ինքս իմ սրտիցս չհանեմ: եթէ որ ես ինքս չկորցը-
նեմ: «առաւաղճնէլ, Ակ Աեղու-Ելի՛-նը, Կուլուծաննէլ,
Ակ Աելի՛-Ելի՛-նը, Ակ Վուանդը, Ակ Ա-րը. Ե-սց
այս ամեն բաներէ Ազ ևս աւաստել յաղընը էլինին+ մն+
նորանով, որ մէլ այլէց ինը- որ ես հաստատ գիտէմ որ,
ու մանը, և ու կեան+ը, ու ու հաւատանելը, և ու կե-
նանա-Ելի-ննելը, ու ու երկայ բաներն, և ու գալու բա-
նելը, և ու բարձրա-Ելի-նը, և ու խորս-Ելի-նը, և ու մի-
-րէլ արտաք մէլ ըրէլ էսրու է Աստուծունու, ուրիշ:



վախենայինք ու սարսափէինք, քան թէ մեր կեանքի
վերջից,որ ճահ, կամ ճանել ենք ասում:

Նատ անգամ՝ նմանացրել են մարդիս կեանքը
ուխտաւորի ուխտ գնալուն: Այս այնպիսի մի ճանա-
պարհորդութիւն է, որ ոչ մեր կամքովն է սկսել և
ոչ մեր կամքովն վերջանում: Սաստիկ շտապելով,
անդադար առաջ ենք տանում մենք մեր ճանապար-
հըն, սկսում ենք մեր ճանապարհ գնալը մի առաւօտ՝
շատ շուտ՝ զեռ ևս լոյս ու մութը չբաժանուած, ու
գեռ մութին, մեր չտեսած գիշերից դուրս ենք գա-
լիս ու դէպի միւս գիշերը գնում: Մեր չորս կողմն
ամեն բան մեր աչքից ծածկուած է, ոչինչ չենք տես-
նում:

Ռոպէները թուզում են, ժամերը (սահաթները)
վաղում են, անցկենում, գնում մեր մօտից: Ուրա-
խութիւնով կմնայինք մի փոքր ժամանակ այն առա-
ջին ծաղիկների առաջն, որ մեր երեխայութեան ա-
ռաւօտն, քաղցր մեզ ժպտում են: Բայց ի զուր:
Մի մեզ անտեսանելի զօրութիւն բռնի մեզ քարշում
է, կարծես զօրով պոկում է մեզ այնտեղից ու հե-
ռացնում: Կէսօրուայ արեգակն արգէն գալիս է, ու
իւր տաքութիւնովը մեր գլուխն այրում այն ժամա-
նակն, երբոր չէինք կարծիլ թէ այդպէս շուտ մեր
կեանքի օրը կէս օր կդառնայ: Մենք տեսնում ենք
պատուական շուաք, հով տեղեր, որ մեզ հրաւիրում
են, համեցէք են անում նստելու, հովանալու, հան-
գըստանալու: Ուրախութիւնով մի քիչ կմնայինք,
դագրութիւն կառնէինք այն տեղերը: Բայց ան-
կարելի է. պէտք է այնտեղից գնանք, մեր ճանա-
պարելի է. պէտք է սաստիկ

Բ.

ՄԱՀԻՑ ՎԱԽԵՆԱԼԸ.

«Ամենայն ինչ կատարեալ է», (ամեն բան վերջացած է) ճանր ժամեր անցկացնելուց յետոյ ասաց երբեմն Փրկչն այն-
պիսի բարձր ձայնով, որ հեռուները գնաց: այս այն միջոցին
էր, որ շատ չարչանքներից ու ստացած վերքերից ուժից
բոլորովին ընկած, զգում էր, որ մահն մօտենում է:

«Ամեն բան վերջացած է». ինչը պէտքէ ինձ վախեցնի,
երբ որ ցաւերս փուշի պսակ են դառել՝ գլխիս դրած, պա-
տած: Ես պէտք է իմ Փրկչիս վրայ մտիկ տամ, որ ամենայն
գերութեան շղթաները փշրում է: Նորա յալթութեան
խօսքը թէ՝ «ամեն բան վերջացած է», իմ մութ գերեզմանիս
մէջն ևս կգայ, կհասնի:



Եթէ որ մահկանացու մարդիկս կարողանայինք
մեր՝ օրօրոցի մէջն եղած ժամանակին առաջուանից
տեսնել ու իմանալ մեր կեանքի մէջ մեր գլխին գա-
լու բաներն ու մեր քաշելու ցաւերն, շատերը մեզա-
նից՝ աւելի ու աւելի աչքի առաջ ունենալով՝ մեր
կեանքն ու իւր մէջ պատահելու չարիքն, մեր ունե-
նալու չեանից, մեր առբելուցը պէտք է սաստիկ

պարհն անդագար յառաջ տանենք. զուր ենք պինդ կպչում մեզ ուրախութիւն բերող այն բաներին, որ մեր ճանապարհին մեզ պատահում են: Մին էլ տեսնես՝ երեկոն մօտեցաւ, և արելք մայր մտաւ ու նոր գիշերը կամաց կամաց մօտենում է: Շատ կցանկանայինք մեր այն օրուայ ճանապարհորդութիւնը վերջացնել ու հանգստանալ. բայց՝ գնա՛, գնա՛ յառաջ, ասում է մի անծանօթ ձայն: Մութը պատում է արդէն մեզ ու մեր ճանապարհը, ոչինչ չենք տեսնում այլ ևս ամեն լոյս հանգչում է, ամեն բան անյայտանում: մեր զգացմունքները դադարում են, ճանապարհորդութիւններս վերջացաւ, եկանք տեղ հասանք:

Այս է մեր վիճակն. ամենս ևս գիտենք: Այլ ևս չես վախենում դուս ու չես դոզում այն գիշերից՝ որից լոյս աշխարհ մտար, ծնար, ապրեցիր, ինչի՞ ես սարսափում այն գիշերից, որ պէտք է գայ վրադ: Քո կեանքիդ, քո գոյութեանդ այդ զարմանալի խաղն իսկ քո արած բանը չէ ի հարկէ:

Ի՞նչ է մեռնելք:—ձրագի պէս հանգչել. ինքն իրան մոռանալ. վերանալ՝ Աստուծոյ աշխարհի նոր միութեան դիմելու, գնալ աւելի վսեմ հանգամանաց մէջ գտնուելու և կամաց կամաց յառաջանալ արարչութեան կատարելագործուելու աստիճանների մէջն:

Մենք միւս աշխարհը չգիտենք. բայց կարելի ես չէ, որ հողեղէն մարգս հասկանայ, եթէ յայտնուէր ևս. ինչու որ մարդիս այս աշխարհումս ունեցած փորձառութիւններից բարձր է. և այս աշխարհն զգա-

լու, կամ հասկանալու համար պէտք եղած զգայարանները չունի: Կոյր ծնածին ի՞նչպէս պիտի հասկացնէիր այն հրճուանքը՝ որ զգում ես, մի մշտագարուն երկիր տեսնելով, որ իւր գեղեցկութիւններովն քեզ հիացնում, կախարդում է: Եթէ որ մի անասունի հոգին, այնպէս լինէր (այնպէս պատահէր) որ մարդկային կերպարանք ու բանականութեան լոյս ստանար (ունենար). այդ նոր մարդը սրտանց կցանկանա՞ր արդեօք, որ առաջուայ իւր անասունի վիճակին յետ գառնար ու նորից անասուն դառնար: Ուրեմն մահից, մեռնելուց ինչի՞ ենք վախենում: ինչի համար է մեր գոյութիւնն ու կեանքը, որ այժմ ունինք, այն կեանքից աւելի գեղեցիկ երեւում մեզ, մեզ՝ որ չենք մտածում թէ, եթէ մի՝ այնքան կեանք ևս որ ունենալու լինէինք ու հաստատ ևս իմանալու լինէինք, որ ինչքան ապրել ենք, այնքան ևս դարձեալ պէտք է ապրենք, բայց և այնպէս շատ քիչ մարդիկ կլինէին, որ մին էլ այնքան ապրել ցանկային, որքան որ ապրել են, ու՝ կրկին անգամ տեսնէին իրանց տեսած սև օրերը, քաշած չքաշուելիք յաւերը, իրանց արած մեծ սխալներն ու անխելքութիւնները և այն անտանելի հոգսերը, որ սիրտները օր ու գիշեր մաշում էր, կեանքները իրանց գլխին խռով անում: զրկելով թէ՛ սրտի հանգստութիւնից և թէ՛ կեանքի ամեն քաղցրութիւնից:

Մահից վախենալու երկու գլխաւոր պատճառ կայ, որ պէտք է ինքներս մեզ բացատրենք, հաշիւտանք ու հասկանանք:

Ասպառած ինչը մէր ճարդիային բնա-նէան (էս-նէան)

մէջ իսոյ առաս-որեւ է կէան+ի ցանկութիւնը, առյշելու ոէրը,
որ շող առյշեւ, Երկար առյշեւ են+ ո-պո-ճ: Դորա համար
վրդովում է և ընդդիմանում մարդուս բնութիւնն
այն ամեն բանին, որ մահ է ասվում: Եթէ այս՝ գրե-
թէ անյաղթելի կերպով՝ մեր կեանք սիրելը զինէրն
երկիրս այժմ արդէն անմարդաբնակ մի անապատ
դառած կլինէր: Անթիւ անհամար վտանգներ կայ
մարդիս առաջին, որոց հետ պիտի կռուի իւր կեանքի
մէջ, հազար անգամ կուլ գնացած կլինէր նա այդ
վտանգներին. բայց կեանք սիրելը, սաստիկ ուղենալն
ապրել՝ սիրտ է տուել նորան ամենադժուարին բանն
անգամ տանելու: Եղել են մարդիկ, որ իրենց խել-
քիցն, իրենց մեղքովն՝ իրանց գլխին բերած տան-
ջանքների պատճառովն՝ վաղուց իրանց կեանքից
զզուած կլինէին ու ժամանակից յառաջ և գեռ ևս
իրենց հասակը չառած, կմեռնէին. բայց մութ գե-
րեզմանի մէջ մտնելն որ միտներն են բերել սար-
սափել իրենց մոքում դրածից յետ են կացել և
հաշտուել իրանց քաշած դառն օրերի հետ ու տա-
րել են: Արդէն շատ անգամ յուսահատութիւնն,
պղտորելով խառնելով նորանց միտքը, տարել է նոցա
դէպի կորուստի անդունդը ու հաստատ դրած են
եղել մտքներումը ու յօժար են եղել մեռելների եր-
կիրը փախչել գնալ ու այս աշխարհից ազատուել.
բայց իսկ այն ժամանակը կեանքը աւելի քաղցը է
երեւել նոցա աչքին՝ ու նոր նոր յոյսեր տալով իրանք
իրանց, — այն յոյսերն, որ միշտ անբաժան ընկեր են
մեր կեանքի հետ, որովհետեւ մարդս միշտ յուսով է
ապրում. — այդ նոր յոյսերն, ասում եմ, առել են

մարդի ձեռքից թուրը, որ արդէն բարձրացած է եղել
իւր վերայ՝ յուսահատութիւնից: Ա՞ռո՞ծոյ վճիւն այն-
պէս է, պէտք է ապրինք, որ բարձր նշանակութիւն-
ների համար հասունանա՛նք:

Եթէ որ սաստիկ ցանկութիւն զինէր մեր մէջն
ապրելու, մեր մահից յետոյ ունենալու կեանքն ևս
եղած, կամ չեղած մի բարիք կլինէր: Բայց մեր մէջն
ապրելու սէրը կայ և հետոն ևս այն ցանկութիւնն,
որ մեռնելով՝ յեղափոխութիւններ կրելուց յետոյ ևս՝
մեր կեանքը շարունակուի. և յաւիտենական կեանք
ունենալու յոյսի հետ կապվում է սերտ կապով մա-
հից յետոյ ապրելու կարեռութեան զգացմունքը:

Բայց նորա մէջն է «խալիք-մարդ» որ կէան+ի ոէր ո-
նէնալն մի անբնական կէրպով իրան ուսնջող իւր+ի է տարյ-
նո-ճ, որ նա իւր մահից առաջ ինքն իրան նեղացնում
է անօգուտ ու զուր երեւակայութիւններով՝ և այժ-
մեան ունեցած կեանքին չափից զուրս գին է դնում:
որ իսկապէս չունի երբէք:

Նատ անգամ հիւանդու, դիւրագրգիռ զգաց-
մունքն է, որ մեզ ցոյց է տալի մահը ուրուական-
ների նման այլանդակ բաներ, որ մեզ զարհուրեցնում
են, շատ անգամ երկարատե ու տանջող տիրու-
թիւնն, որ երբոր աւելանում է, անդադար մեզ չար-
չարում է անհիմն ու անտեղի երկիւղ ձգելով մեր
սիրտն: Ոչ թէ մահուան յեղափոխութիւններն են,
որ մեզ սարսափեցնում են, այլ այն մեզ վերայ վախ
ձգող զարհուրելի բաներն, որ մեր մտքի առաջն գա-
լիս, կտրում են, պաշարում են մեզ՝ ու մեր խելքը,
կարծես, շուռ տալիս. այն մեզ վրայ ահ ու սարսափ

բերող բաներն են, ասում եմ որ խելքը մեր գըլ-
խիցը տանում են ու մեր մտքի ու սրտի հանգստու-
թիւնն աւերում բոլորովին. ու այս ամեն բանի հնա-
րողը մարդս ինքն է, որ ինքն իրան տանջելու հա-
մար այդպիսի բաներ է իրանից ստեղծում:

Մեռնողն իւր մաշն այնպէս քիչ է հասկանում
ինչպէս որ սաստիկ գագրած մարդն իւր քունի գնա-
լը: Մենք շատ մարդ ենք տեսել, որ խելքները գըլ-
խին մահուան անկողինքի մէջ իրանց աչքը աշխար-
հիս փակելու րոպէին էին սպասում: Նոքա այնպէս
վախճանեցին, որ կարծես թէ քնեցին, առանց եր-
կիւրի, ինչպէս պիտի վախճանի ամեն մի քրիստո-
նեայ, որ Աստուած է հաւատում և իւր բարեքազդ
սրտումն ունի անխաք յոյս իւր ամենաբարի Ստեղ-
ծողին վրայ, որին ապաւինած է: Ինչ որ տեսնում են
նորա կերպարանքի վրայ նորա մահուան անկողինքի
չորս կողմը կանգնած մերձաւորներն կամ ծանօթ-
ները, վախճանուածը չգիտէ:

Եթէ որ մենք, անշունչ դիակի վրայ մտիկ տա-
լով, գողում ենք ու սարսափում, տեսնելով, ինչպէս
պառկած է նա առանց վեր կենալու, սառած փայտ
գառած, գեղնած ու անշունչ, մեր սրտիցն անտե-
ղեակ, իբր թէ մեր հետը չէր ապրել, մեզանից մինը
չէր եղել ու մեզ երբէք չէ ճանաչել. այդ մեծ ահն
ու սարսափը, որ գալիս մեր վրայ, նորանիցն է, որ
մենք ինքներս խարվում ենք մեր սխալ մտածելուց
ու զգալուց: Երբոր ինքներս մեզ լաւ քննում ենք,
լաւ հասկանում ենք, որ մենք մեռելի վրայ լաց ենք
լինում ու ցաւում նորա վրայ այն բանի համար, ինչ

որ նա այժմ կորցրել է: Բայց նա ինքն այդ բանը
չգիտէ: Մենք միտներս ենք բերում, թէ ինչպէս նա
սրտանց սիրում էր մեզ, ինչպէս կցանկանար, որ
աւելի երկար ժամանակ մեզ մօտ մնար. մեզ հետ
ապրէր. ինչպէս մի անյայտ ձեռք նորան մեզանից
խլեց ու բաժանեց, ջոկեց, ու ինչպէս զուր կլինէր
մեր ցանկանալը, որ նորան մեզ մօտ պահենք: Բայց
մեռելն այդ բաները չգիտէ, և մինչեւ անգամ այն-
չափ յայտնի չէին նորան որ իւր վերջին ժամերումն
այն սիրտ կոկծեցնող զգացմունքներն, որ առողջ
մարդիկն սովորաբար ունին: Նա անյայտացաւ իւր
կեանքի թագաւորութիւնից ու թողեց մեզ իւր պա-
տեանն, մի սառն արձան՝ մարդի կերպարանքով, որն
որ երբեմն սիրում էինք, որովհետեւ մէջը հոգի կար,
բայց այդ մարմինը հոգու մասը չէր, այլ տարերքինն
էր ու կրկին պէտք է գնար միանալու տարերքի հետ,
որտեղից որ առնուած ու ստեղծուած էր:

Մահուան վրայ ունեցած գաղափարդ վերածիր
(գարձուր) պարզ ճշմարտութեան, ու մահուան ար-
հաւիրքները քո աչքիդ բան չեն երեխլ:

Նատ անգամ մեծ նշանակութիւն ենք տալիս
մեր երկրաւոր կեանքի բարիքներին ու վայելչութիւն-
ներին: Մեր կեանքը մի գին միայն ունի. և այդ գինն
այն ժամանակն է ունենում, երբոր մեր կեանքը
գործ ենք դնում մեր սիրու կատարելագործելու,
մեր բանական հոգին ազնիւ ու առաքինական մտքե-
րի մեծ պաշարով զարդարելու և մեզ նման մարդոց
բաղդաւորելու: Եթէ որ այդ բանն այլ ևս մեր ձեռ-
քիցն չէ գալի, և մինչեւ յոյս ևս չենք ունենում, որ

այդ բաները կարողանանք անելու, ինչպէս պատահում է մարդիս ծերացած միջոցումն, այն ժամանակ կեանքը կորցնում է իւր արժէքը, և մի նոր կեանքի աւելի է փափագում:

Մեծ հոգու տէր մարդիկը կեանքից աւելի բարձր բարիքներ էին ճանաչում: Ով կատարեալներ, դուք այն ազնիւ ու քաջ հոգու տէր հերոսներն էիք, որ աներկիւղ մահուան առաջը գնացիք ձեր հայրենեաց ու ազգի ազատութեան ու բարեբազդութեան համար ձեր կեանքը դնելով. և դուք, ով առաքինիք, այն վսեմ ու անձնանուէր մարդիկն էիք, որ Յիսուսի Քրիստոսի կրօնի ճշմարտութեան համար անվեհեր սրտով Աստուծոյ սիրոյն մատաղ գնացիք ու դէպի ձեր գերեզմանը վազեցիք, և դուք, որ մահը մի անարժան կեանքից աւելի լաւ համարեցիք—դուք ամենդ կեանքի գինը լաւ իմացաք: Դուք ամենամաքուր առաքինութեան փափուկ գրկումը անմահ, անփախ մեռաք՝ մի երկնային գործի մէջ ձեզ վարժեցնելով: Զեր մահը շատ աւելի նախանձելի՛ էր, քան հազար ուրիշ մարդոց կեանքը: Զեր քաղցր պատուելի ու անմոռանալի յիշատակը կմնայ յաւիտեան:

Բայց ով որ ապրում է աշխարհիս երեսին նորա համար միայն, որ մի օրդնի նման սողայ ու իւր ուտելու ու խմելու բանի ետևից ընկնի, միայն իւր փորի հոգսն անելով, առանց մտածելու, որ իւր սիրտն ու հոգին վաղօրօք պիտի պատրաստի մի ապագայ աւելի ազնիւ կեանքի համար. ով որ ապրում է նորա համար միայն, որ իւր սնափառութիւնն ու չնչին հպարտութիւնն աւելացնի ու մարդոց աչքին մեծ ու

երեխի ու այդով կարծի թէ մեծ փառքի հասած է. ով որ ապրում է նորա համար միայն, որ ամենայն խարգախութիւն, չարութիւն, անտեղի թշնամութիւն ու զրկանք անի, որ իւր չունեցած ոյժն ու ոչինչ մարդ լինելն ցոյց տայ, թէե իւր նմանների առաջին հնարագէտ, ու գուցէ խելօք մարդ ևս ճանաչուի. ով որ նորա համար է ապրում միայն, որ խիղճ, ամօթ, պատիւ, հոգի, հաւատ մի կողմ դրած, իւր վողը շատացնի, քաղցած ու ծարաւ, չտես մեծացած լինելով՝ որը թէե աջ ու ձախ ուտում է, և ամեն տեղից ծծում՝ իւր միակ ցանկութեանն համեմատ՝ բայց չէ կշտանում. այդպիսի մարդը՝ կուրացած, ուրացած է կարծես, բոլորովին՝ Աստոււած ու առաքինութիւն՝ որպէս և մարդիս բարձր կոչումը. նորա համար փողն է միայն ամենայն բան, ուրիշ ոչինչ չկայ ցանկալի. ով որ ապրում է նորա համար միայն, որ պատիւներին աստիճանների, արժանաւորութիւնների հասնի, ուղիղ՝ թէ ծուռ ու ցած ճանապարհներով արժանաւորութիւնով՝ թէ անարժանութիւնով. ով որ ապրում է նորա համար միայն, որ իւր անհամեստ կիրքերին յագուրդ տայ, զուարճութիւնների ու վայելցութիւնների մէջն իւր կեանքն ու բարօրութիւնը տեսնի.—բայց այս ամենը ոչ միայն այսօր կայ, վաղը՝ չկայ ու մեզ մնալու բաներ չեն, ու մինչեւ մեր գերեզմանն անգամ՝ մեզ չեն ճամբիլ այլ միայն մեզ շուտով մեծ փոշիմանութիւնով գերեզման զրկելու պատճառ կլինին, գեռ մեր մահից առաջ մեզ, բարոյապէս, վաղուց մահացնելուց ջոկ.—այս ամենն, ասում եմ սուրբ Գրքի խօսքով, այն շուտ

թուզող, անցկացող բաներն են, որոց օրական աշխատանքը մի դատարկ խօսակցութիւն է: Այդպիսի մարդիկը՝ իրանց կեանքովն ոչ իրանց մի շահ ունեցան, ոչ ուրիշների համար. և այդպիսի մարդիկը, որ մեռնում են՝ գնում; միայն խղճալու վայ տալու արժանի են իբրև անբաղդ, թշուառ, ողորմելի, անսարժան արարածներ, որ մարդկութիւնից գուրս էին. սոքայն մարդիկը չեն, որոց առաքինի և բարերար կեանքը՝ ոչ միայն դառն արտասուք է մեզ թափել տալիս և երկարատե կոկիծ պատճառում: Մեր սրտին, այլ և նոցա մաշն երբէք մեր մտքիցը չէ գնում: թէև իւրեանց հոգւովն ու գործքով միշտ կենդանի են մեր սրտի, մեր հոգու մէջն:

Նատ անգամ ևս մեր մաշից վախենալու և աղրել ցանկալու պատճառը միայն մեր այն մեծ հոգսն է նորանց համար, որ պէտք է մնան մեզանից յետոյ: Դող է բռնում մեզ, միտքներս բերելով մեր մահը, որ մեզ մեր ամուսնու գրկից պէտք է խլի: Մենք գողում ենք մաշուան առաջն նորա համար, որ մեր գերեզման մտնելուց յետոյ, պիտի գան, շըրջապատեն մեզ մեր սրտին սիրելի մեր զաւակները, առանց կրթութեան՝ առանց ուսման՝ որբ մնացած զաւակները, անտէր՝ անտիրական, անօգնական, անպաշտպան թողած մեր զաւակներն:

Այս է պատճառն, որ տեսնում է մարդ, որ հասակները չառած մարդիկ, որոնք որ անպաշտպան մնալու սրտի սիրեկանների համար հոգս անելու բան չունին, աւելի անհոգ կերպով են մեռնում: քան թէ հայրերն ու մայրերը, որոց սիրտն իրանց զաւակների

հետն է, որոնցից բաժանուել չեն ուզում չմեծացրած՝ ինչպէս որ իրանք կուզէին: Բայց այստեղ ևս քրիստոնեան չպիտի իւր սիրտը կոտրի: Ո՛վ հայր, ո՛վ մայր, գուք չէիք, որ մինչեւ ցայժմ պահպանեցիք ձեր զաւակներին, Աստուած Եր պահպանովն, Աստուած է որբերի հայրը, և նա է ամենավերջին ու ամենափոքր արարածի բաղդաւորութեան ու կեանքի համար հոգս քաշում: Եթէ ինքն կամենում է, որ նորանց բարի լինի, լաւ մարդիկ գուրս գան, ոչ մի մարդի ոյժն չէ կարող նոցա վատացնել, վչացնել: Նորա տեսչութիւնն, Նորա նախախնամութիւնն, և ոչ թէ մարդոց կամայականութիւնն է, որ նոցա առաջնորդում է իրանց կեանքի մէջն ու կառավարում: Եթէ որ մի ժամանակ այս աշխարհիցս քեզ կկանչի, իսկոյն վեր կաց, գնա՞ քո երկնաւոր Հօրդ մօտնակայ ժամանակը, որ քո երեխերբիդ ևս քո ետեւիցդ կըերի:

Երկրորդ գլուխութ ճանաւոր պատճառը ճանաւոր այն է, որ ճարդիկ էան, որոց սիրտն օդաբացիւ է կրծնի յանի-տենական նշանաբանից:

Թէև, իրաւ է, Քրիստոսի անունովն ես մկրտուել, թէև, իրաւ է, գու նորան դաւանում ես. թէև, ողորդ է, աստուածպաշտութեան գործածական արարողութիւնները գու կատարում ես, բայց տեսնենք թէ, հոգւով ու ճշմարտութիւնով ևս Քրիստոսի հոգւովն ու պատուիրաններովն ես գնում ու ապրում: Արդեօք քո Աստուծոյդ հետ ուղիղ սրտով հաւատարիմ մնալով, սերտ կապով կապուած ու միացած ես: Տեսնենք թէ՝ ամեն տեղ ու ամեն ժամանակ ար-

գարութիւնը ձեռքիցդ չե՞ս թողնում, մտքիցդ, ուրութիցդ չե՞ս ձգում: Արդեօք այնքան բարի բաներ անում ե՞ս, որչափ որ ձեռքիցդ կգար: Տեսնենք թէ թշնամիներիդ հետը հաշտուած ես, կամ նորանց ներած ես, կամ նորանց քեզ արած վատութիւնի տեղը լաւութիւն արած ես: Արդեօք միտքդ բերելով քո ծածուկ արած քեզ ամօթ ու նախատինք բերող մի գործդ, խիղճդ քեզ չէ տանջում ու դատապարտում:

Ճշմարիտ բարեպաշտ մարդն Աստուծոյ զաւակն է աշխարհիս վրան: Աչքը յաւիտենական կեանքի վերայ դրած, ձեռքը լաւութիւններ անելու բաց, հանգիստ ու հանդարտ գնում է նա իւր կեանքի ճանապարհն մրրիկների ու փոթորիկների միջով, երջանիկ ճանաչելով իրան այն ուրախութիւնների մէջն, որ Աստուծած իրան պարգեռում է: Ու մարդիս ունեցած հաւատքի արժանաւորութիւնն ոչ մի ժամանակ այնպիսի բարերար պայծառութիւնովն չէ երևում: Ինչպէս մահուան ժամին. այս ժամանակն է յայտնվում իւր հաւատի Աստուծածանից ծնած, յառաջ եկած, Աստուծածանից ծագած լոյս լինելն իւր սրտի ու հոգու մէջն, նորա՝ զարմանալի բարձր զգացմունք ու համոզմունք լինելը, նորա՝ սաստիկ երջանկացնող զօրութիւնն: Մի ազնիւ քրիստոնէի մահուան անկողինքն շատ անգամ ամենամեծ օրհնութեան տեղ է դառնում: Թէ իւր ժամանակումն ապրող և թէ իրանից յետոյ աշխարհումն բնակուող մարդոց համար:

Բայց զգայական կեանքով միայն ապրող մարդու, երբոր միաքն է գալի թէ մահ կայ, մեռնել կայ, սար-

սափելի կերպով զգում է, որ իւր հոգւոյ մէջ բան չկայ, որ իրան յօյս տայ, կամ ուրախացնի. դատարկ է իւր հոգին, մինակ մնացած, օտարականի նման: Է իւր հոգին, մինչեւ ցայժմ միայն կամեն բանից, ինչ որ իրան մինչեւ ցայժմ միայն կարողանում էր ամենայն կերպով ուրախացնել: Նա երբ չէր մտածել, որ մի աւելի բարձր կոչումն ու բէք չէր մտածել, որ մի աւելի բարձր կոչումն ու բէք չէր մտածել, ուրեմն ի՞նչ պիտի լինի նորան, նշանակութիւն ունի. ուրեմն ի՞նչ պիտի լինի նորան, որ այնուհետեւ պիտի կորցնի մինչեւ ցայժմ իւր ճան նաշած ու գին գրած միակ ուրախութիւններն: Ինքն կերթայ, գերեզման կմոնի ու իւր ետևիցն պիտի կորցն գրած միակ ուրախութիւններն, ու վայելչութիւննան ամենայն ուրախութիւններն, ու աշխատական ճաշերն ու ամեն բան, ինչ որ իւր սրտին գիւր էր գալիս. այլ ևս չպիտի վայելի պատուական ճաշերն ու լիս. այլ ևս չպիտի ունենայ իւր պատուաւոր ինջոյքներն, այլ ևս չպիտի ունենայ իւր ժանկագին հտգուստեղերն ու աստիճանները, իւր թանկագին հտգուստեղերն ու իւր հաւաքած մեծ փողն՝ բերած շահերովն, որ վայելչութիւններ սիրող, ցանկասէր ու իւր անկուշո ժառանգները պիտի տակից տան ու վրայից գուրս գան անխնայ վչացնելով: Իւր դրանն երբեմն կանգնած ողորմութիւն հաւաքող աղքատից աւելի աղքատած դիզը ծռած, կանգնած է յաւիտենական աշտացած, վիզը ծռած, կանգնած է յաւիտենական աշտացած, կամ ազնիւ սունի նա, գլխից մինչեւ խարհի դրան առաջին. ոչինչ չունի նա, գլխից մինչեւ ողորմելի աղքատ է, իւր ամեն ունեցած, չունեցածը կորցրել է:

Ով խղճմտանքի քաղցր հանգստութիւն, գու, որ իմ սիրտն ու հոգին սերտ կապով կապում ես ամենաբարձրեալ Ստեղծող երկնաւոր Հօրս հետ. չինի թէ երբ և իցէ ինձանից հեռանաս: Վայ նորան, ով

որ այն ժամանակն է քեզ միտքը բերում ու գալիս
քեզ ընկնում, երբոր ուրիշ ամեն բան ձեռքիցը գը-
նացել է, վայ նորան, որի աչքն այն ժամանակն է
լաւագոյն աշխարհը տեսնում երբոր այս աշխարհս
իւր աչքիցն անյայտանում է, կարծես, իւր ոտքի
տակիցը փախչելով:

Ինձ ևս, ով իմ Աստուած, ինձ ևս մի օր քեզ
մօտ պէտք է կանչես, երբոր ժամանակս կդայց երա-
նի ինձ, եթէ որ այն ժամանակն մորիցս անցկացնել
կարողանամ թէ՝ լս= պատշերազմը պատշերազմէցի, որչափ
որ իմ ոյժս կհասնէր, մի բարերար կեանք եմ ունե-
ցել մի լաւ ընթացք կատարել. ի՞նչ ևս հում է ոպա-
նալ յանիքնահան կտանիք պատին:

Եւ երբոր վերջին ժամն կտայ ինձ մաշուան
ամեն դառնութիւնների, փորձութեան վերջին բա-
ժակն, երբոր իմ փայտացած ձեռքս օրչնել չէ կտ-
րող իմ սիրականներիս, որ իմ հոգիս աւանդելու
բարձիս վերայ աղի արտասունք կժափեն իմ՝ իրան-
ցից հեռանալուս համար. երբոր իմ բերանս զրմ-
լուած, փակուած՝ էլ չեմ կարող իմ վերջին շնոր-
հակալութեան խօսքս կմկմալով ասել նորանց, որոնց
մինչև իմ մահս իմ վերայ հարազատ սէր ունեցան.
Երբոր աշխարհիս ձայն ու ձունն ու մարդիս սրտին
ախորժելի ձայներն իմ ականջիս էլ չեն լսուելու,
այն ժամանակ՝ Քո ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս:
Ուրախ ու գոհ սրտով վերև կձգեմ իմ փակուող
աչքերս գէպի Քեզ և Քո ողորմութիւնիդ կյանձնեմ
ամենին, որոնք թանկ են իմ սրտիս, Քո հովանա-
ւորութեանդ տակը լինին: Դու կմնաս նոցա համար,
ինչպէս որ ինձ համար ևս մնում ես յաւիտենական
կեանքի դաշտերումն:

ՅԱՆԿ


Երես.

Ա. Առաքինութեան համար արիասրտութիւն	3
Բ. Վեհանձնութիւն կամ մեծահոգութիւն	19
Գ. Ինքնաճանաշութիւն	38
Դ. Մարդուս գոհ լինելն իւր ունեցած վիճակովը	58
Ե. Ինքն իւր վերայ իշխելը, կամ ինքն իւր զիսի տէր լինելը	72
Զ. Վերջը միտք արա	91
Է. Քրիստոնէի մխիթարութիւնը իւր կեանք ու- նեցած միջոցին ու իւր մահուան ժամանակ	112
Ը. Մահից վախենալը	130



P J D 8

2 သနပုဂ္ဂန်များ မြန်မာ လူများ
er သနပုဂ္ဂန်များ မြန်မာ လူများ
88 သနပုဂ္ဂန်များ မြန်မာ လူများ
89 မြန်မာ လူများ မြန်မာ လူများ
90 မြန်မာ လူများ မြန်မာ လူများ
91 မြန်မာ လူများ မြန်မာ လူများ
re မြန်မာ လူများ မြန်မာ လူများ
-in မြန်မာ လူများ မြန်မာ လူများ
911 မြန်မာ လူများ မြန်မာ လူများ
921 မြန်မာ လူများ မြန်မာ လူများ





909
910
911
912
913

